Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

24631

891.99
9-95

S 2004

91. 542-2
Գ--86

# ՍԵՆԵՔԵՐԻՄ

## ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

*Ողբերգութիւն*

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

,,Ի չորից կողմանց,
,,Ցարենկից սուր,,
,,Յարեմտից սպանումն,
,,Ի հիւսիսոյ հուր,,
,,Եւ ի հարաւոյ մահ,,:
Արիստ. Լաստիվերտցի:

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ԱԲԳԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ
ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

ՅԵՐԵՒԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԶԱՔԱՐԻԱՅ ԳԷՈՐԳԵԱՆ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ.
1878—ՌՅԻԷ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ՄՕՏ

ԵՒ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ:

| | | ռ. | կոպ. |
|---|---|---|---|
| 1 | Աբրահամ Կաթուղիկոս Պատմագրութիւնք . | 1 | ,, |
| 2 | Անեկդոտներ. Հ. Ա. Նուպարեանց . . | ,, | 50 |
| 3 | Թռչնիկ Երգարան . . . . . | ,, | 45 |
| 4 | Լօտոյ Կատակերգութիւն. . . . | ,, | 35 |
| 5 | Հայոց Ազգի Քաղաքական վիճակը . | ,, | 30 |
| 6 | Մանկավարժական Տարակուսանք Մոնթէն. | ,, | 50 |
| 7 | Մինաս վարդապետ Ազգաբանութիւն Հայոց. | ,, | 50 |
| 8 | Մրմունջք Յիսուսի Պաշտօնեան. . . | ,, | 60 |
| 9 | Ներսէս Լամբրոնացւոյ Ներբողը Աշխարհաց. | ,, | 20 |
| 10 | Շիրակայ Հոռոմոսին պատմութիւնը . | ,, | 20 |
| 11 | Ոստայնանկ Գրէյֆ . . . . . | ,, | 15 |
| 12 | Պատմութիւն փոքուկ Հայաստ. Ս. Եկ. | ,, | 40 |
| 13 | Սիմէոն վարդապետի Վիպասանութիւնք սակս Պալհաւունեայն զարմի և Մամիկոնեանցն սեռի . . . . | ,, | 50 |
| 14 | Սոխակ Հայաստանի Ա. . . . | 1 | ,, |
| 15 | ,, ,, Բ. . . . | 1 | ,, |
| 16 | ,, ,, Գ. . . . | 1 | ,, |
| 17 | Վաղարշապատ քաղաքամայրն Հայաստանի | ,, | 40 |
| 18 | Տնտես, ժողովածու հարկաւոր գիտելիքների | ,, | 70 |
| 19 | Րաֆֆի Փունջ Ա. հատ. . . . | 1 | 50 |
| 20 | ,, ,, Բ. հատ. . . . | 1 | 50 |
| 21 | Փարոս Խմբագիր Բանասիրական գիտելեաց ,, ,, 3 պրակներ Ա. 1872 | ,, | 50 |
| 22 | ,, ,, 6 ,, Բ. 1873 | ,, | 60 |
| 23 | ,, ,, 2 ,, Գ. 1874 | ,, | 50 |
| 24 | ,, ,, 1 ,, Դ. 1875 | ,, | 40 |
| 25 | ,, ,, 2 ,, Ե. 1876 | ,, | 50 |

Այլ քաղաքներից ցանկացողք պէտք է վճարեն ուղարկման ծախսն:

891.99
Գ-86

# ՍԵՆԵՔԵՐԻՄ

## ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ողբերգութիւն

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

„Ի չորից կողմանց,
„Ցարնելից սուր„
„Ցարևմտից ապականումն,
„Ի հիւսիսոյ հուր„,
„Եւ ի հարաւոյ մահ„:
Աբով. Լուսաւորչեան:

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԱԲԳԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

ՅԵՐԵՒԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԶԱՔԱՐԻԱՅ ԳԷՈՐԳԵԱՆ ՑԱԿՈՎԲԵԱՆՑ.

1878—ՌՅԻԷ

Публичная Библиотека 7/XI-1922

2120

Նուէր „Հայոց Ազգագրական Ընկերութեան" [illegible]. 12 [illegible] 1913թ.

[illegible]

Дозволено цензурою. Тифлисъ. 1-го Декабря 1877 г.






ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՀԱՆԳՈՒՑԵԼԻՈՅ ԱՄՈՒՍՆԻՈՅ ԻՄՈՅ

# ՄԱՐԻԱՄԱՅ ԴԱՍՊԱՐԵԱՆ

## ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

Ծնեալ ի 4-ն Յունիսի 1850 ամ.
Ամուսնացեալ ի 9-ն Հոկտեմբերի 1866 ամ.

ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ի 27 Յունիսի 1874 ամի, առաւօտեան 11 ժամին, զկնի ութն ամսեան ծանր տկարութեան ի հասակի 24 ամաց։

ԵԹՈՂ զ10 ԱՄՍԱԿԱՆ ՄԻ ԶԱՒԱԿ,-ՕՐԻՈՐԴ ԵՐԱՆԵԱԿ ԱՆՈՒԱՄԲ։

Դ

Ընկա՛լ, ով չքնաղ ամուսին իմ Մարիա՛մ, քո տխուր և խաւար հանգստեան դամբարանիդ մէջ՝ այս քո՛ բոլոր սրտով սիրած, Թատերգական ողբերգութիւնը „ԱՆՆԱ ԿԱՐԷՆԻ-ՆԱՅ", որ օր աւուր յառաջ՝ ցանկանում էիր սորա լոյս աշխարհ երեւալը որը՝ ահա՛ այսօր մտաւ գրականութեան գանձարանի մէջ, աղօթելով առ Ամենակարողն՝ Թողութիւն մարդկօրէն յանցանաց քոց, և հանգիստ արքայութիւն քեզ.

Որ տխրութեամբ նուիրում է՝

Վշտակոծ Աշխատասիրողը

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թատրոնի կարևորութիւնը անհրաժեշտ է։ Թէ՞ ի՞նչ ազդեցութիւն ունի մարդւոյս վերայ առհասարակ Թատրոնը՝ մեծ քանակութեան թերթերի է կարօտում. այլ միմիայն բաւականանումենք ասել, որ թատրոնը է՛ ամենապատուական և գերազանց սքանչելի գործ, մարդկային ազգի մէջ։ որովհետև թատրոնը է՛ քաղաքների մէջ պատրաստուած առանձին մեծ դահլիճը. որի բեմն է դերասանաց ներկայացմանց տեղը. ուր ժողովումեն մարդիկ, արք և կանայք, մանկունք և աղջկունք և ահա՛ այստեղ ներկայացնումեն նոցա առաջ՝ անցեալ դարուց, կամ անցած տարուց և կամ մերձան-

ցեալ աւուրց՝ յիշատակութիւնքը, անցքը և պատմագրութիւնքը, ևն ևն։ Ամեն մի բանասէր անձն, լաւ համոզուած է, որ թատրոնի գեղեցիկ հիմանց ուղղահայեաց ճանապարհն է և ճիգն՝ փաշափակերտութեան. որ իւր ամե՛ն ներկայացմանց մէջ մարզում է մարդւոյս, զանազան աշխարհակրթութեան ճանապարհներով. — ոմանց չափաւորութիւն կեցութեան, ոմանց բարուց և վարուց կարգաւորութիւն, ոմանց քաջութեան արիութիւն, ոմանց խոհեմութեան ազնուութիւն, ոմանց համբերութեան անդորրութիւն և վերջապէս ոմանց գիտութեան ձգտումն՝ դէպի Հայրենեաց Կրօնական և Ազգային պատմութեան. ևս և՛ հասկացողութեան ըմբռնումն՝ զանազան ազգաց պատմութեան։ Այս է ահա՛ թատրոնը, որի հիմքը մաքու՛ր է և սիրում է մաքրութիւն։

Առհասարակ թատրոնական գրուածոց՝ թէ՛ ողբերգական, և թէ՛ կատակերգական նիւթքը և իմաստքը՝ պե՛տքէ լինեն վերցրած ճըշգրիտ անցքերից և հարազատ պատմագրութեան



աղբիւրներից։ Մինչև օրս թէ՛ Ռուսաստանում և թէ՛ Տաճկաստանում դուրս եկած թատրոնական հեղինակութիւններից տեսելենք բազմատեսակ գրուածք, բայց շատ սակաւներին ենք պատահել որ նոքա համապատասխան լինէին հարազատ անցքին և պատմագրութեանը. Ի շարս որոց՝ 1873 թ. տեսանք մի ողբերգութեան գրուածք, ընդ վերնագրով՝ ,,Ողբերգ թատերգական գաղթականութիւն ի Վասպուրականէ ՍԵՆԵՔԵՐԻՄԱՅ Արքային Արծրունւոյ,, ի տպարանի Վասպուրականի Արծւոյն 1860 ի Վարագ. ընդ ամենն 90 երես, փոքր դիրքով։ Հարկաւորենք համարում ասել մի երկու խօսք, և յայտնել մեր կարծիքը ու քննողական հայեացքը այդ գրուածքի վերայ.—Տետրակի լեզուն գրուած է գեղեցիկ գրաբառ բայց կետադրութեանց մէջ՝ մե՛րթ սխալմունք, և մե՛րթ թերութիւնք։ Հեղինակն այս աշխատութեան՝ լսելէ որ աշխարհիս երեսին կա՛յ թատրոնական բէմ՝ և գրուածք, դեռ՝ և դեռասանք բայց չէ՛ տեսել ողորմելին, ո՞րպէս է

նորա ձևը, ներկայացմունքը, կամ դերասանաց էլ ու մուտը ևն։ Ահա՛ նորա սկզբից մինչև վերջը եղած արարուածները և տեսիլները.— սկզբումն գնումէ „Հանդէս Ա.„ 4 գործող անձինքներով և „Տեսարան Ա.„ որ մինչև 12 երեսն է համնում։ 13 երեսից մինչև 24՝ գը-նումէ „Տեսիլ Բ.„։ 25ից մինչև 32 „Հան-դէս Բ.„ 33 մինչև 40՝ Տեսարան Բ.„ ուր գնումէ „10 գործող անձինք և ընտանիք„ 41ից 46 „Տեսիլ Գ. 5 գործողք„ 47ից մինչև 75 „Հանդէս Բ. Տեսիլ Ա. 5 գործողք„։ Սո-րանից յետ յանկարծ առանց յիշատակելու գործող անձանց՝ գնումէ ամբողջ մինչև գըր-քոյկի վերջը ոտանաւորք որով ողբումեն հե-տևեալք,—76 երես. „Արքունիքն„։ 77 և 78 եր. „Վանականք„ որ ընդդէմ է թատրոնա-կան գրուածոց. 79 եր։ „Ուխտ Եկեղեցւոյ„ որ նոյնպէս ընդդէմ է թատրոնական կանոնի։ 80 և 81 „Իշխանք„։ 82 „Երկրագործք„ 83 և 84 „Հովիւ և հօտ„։ 85 մինչև 90 երեսները „Վաստակաւորական Աշխարհը„. որով և վերջա-



նումէ ա՛յն՝ որ Սհէքսպիրը և բոլոր Եւրոպիական մեռելու-թեամբ ողբումեն իրենց գաղթականութիւնը։— Ահա՛ այսպիսի մի խառնափնդոր կարգաւո-րութեամբ թատրոնական գրուածք՝ առաջինն է՝ որ տեսնումենք, որ ո՛չ Արիստոտէլ—անուն կայ՝ և ո՛չ Վոլտերէ բացուիլ և իջնիլ, ո՛չ կարգա-ւորութիւնք գործող անձանց՝ և ո՛չ ելումուտ։ Մենք սորան անուանումենք ո՛չ այլ ինչ՝ ե-թէ ոչ, անկարգութիւնք անկարգութեանց՝ և խառնակութիւնք խառնակութեանց. որ ո՛չ պատմութեան հարազատութիւն ունի՝ և ո՛չ պատմագրութեան շաղկապ. բայց ընդ հակա-ռակն լեզուն շատ քաղցր գրաբառ է, և սկիզբն շատ լաւ է սկսած. և ահա՛ այս իսկ առթիւ՝ մենք մեր ամբողջ Ա. արարուածից մինչև Բ. արարուածի, Ա. տեսարանի Աղուասհլի դերը՝ փոխադրեցինք այդ տպագրութիւնից գրաբա-ռից յաշխարհաբառ. ի հարկէ, մեր առանձին ուղղութեամբ և կարգաւորութեամբ։

Այս էր ահա՛ առիթը որ ստիպեց մեզ մեր քաղցր ցանկութիւնը գրել ամենահարազատ

պատմագրութեան կետից լիակատար ողբերգական պատմութիւնը Սենեքերիմայ արքայի Հայոց Վասպուրականի. որ և ձեռք առանք նոյն ամի, այն է 1873 թ. Մարտ ամսում և գրեցինք. հիմնուելով՝ Հայկական զանազան մատենագրական ընտրելագոյն հեղինակների վերայ. և գլխաւորապէս հետևելով ,,Սմբատայ պատմագրին Հայոց,, տպ. ի Մոսկուա յամին 1856. ուր՝ բոլորովին հաւատարիմենք մնացել նոյն ժամանակի զանազան պահանջներին՝ մե՛րթ ուրախալի, և մե՛րթ տխրալի անցից. որի ամենաճշգրիտ անցքերը պատահած են՝ սկսեալ 1021 Փրկչ. թուականից:

Կարևորեմք համարում յայտնել որ ողբերգութեանս Հինգերրորդ արարուածի Զ. Է. Ը. Թ. և ԺԳ տեսարանների մենախօսութիւնքը մենք յարմարացրելենք Շէքսպիրի Ռիքարդոս Երրորդի վերջի արարուածին:

Ողբերգութիւնս այս՝ քանի մի ամսից յետ, երբ կամէի արդէն ի տիպ մուծանել՝ յանկարծ ենթարկուելով ընտանեկան տխուր հանգամա-



նաց՝ (այն է, յետ որդեծնութեան՝ ութն ամսեայ տկարութիւնն և վերջապէս մահն ամուսնույս), խափան եղև նորին ի լոյս ածումն առժամանակ: Վերջապէս բարեկամներիս յորդորանօք՝ 1875 թ. Ապրիլի 22-ին ցրուեցինք տպագրեալ Յայտարարութիւն Ռուսաստանի ամեն ա՛յն քաղաքները և տեղերը՝ ուր կային մերազնեայք գրքոյկիս տպագրութեան համար. բայց մեր յոյսը այս անգամ եղև ապարդիւն. վասն զի, այնքան փոքրաթիւ էին ցանկացողք՝ որ կամայ ակամայ ստիպուածէինք համբերել օր աւուր յաւելմանն, կամ յետս դարձուցանել՝ ստացեալ բաժանորդագինքն: Այսպէս օր աւուր անցնելով մեր խղճմտանքն մեզ տանջումէր մինչ յա՞ն աստիճան՝ որ ստիպուեցինք գո՛նէ սակաւաթիւ տպագրել և վերջացնել. և այս առթիւ մեր 1877 թ. Օրացոյցի շապկի վերայ տպագրեցինք որ ,,Արդէն մամուլի տակէ,,: Այս հիման վերայ՝ պե՛տքէր որ արդէն 1877 թ. հրատարակուած լինէր. բայց այս անգամ ևս եղև այն՝ որ տեղւոյս տպարանը իւր գնեալ քանի մի նոր տառերն ևս բաւականին ուշ ստանալով՝ յա-

պաղեցաւ, որի համար խոնարհաբար խնդրո՛ւմեմ Հայութեան խմբին ինձ ներել. վասն զի հեռո՞ւ էր այդ իմ բնութիւնից. այս մեր անկեղծութեանն կհաւատան նոքա՛ որոնք ճանաչումեն մեզ:

Ահա՛ այսպէս լոյս աշխարհ հանելով այս՛ „ՍԵՆԵՔԵՐԻՄ Թագաւոր Հայոց Վասպուրականի„ Թատրոնական լիակատար և հետաքրքրական հայրենեաց ողբերգութիւնը 5 արարուածով. յուսո՛վեմք որ Հայկական ամբոխը սիրով ընդունէ. որով աւելի ևս խրախուսելով՛ ձեռք կառնենք հրատարակելու և միւս Ազգօգուտ և պիտանացու ձեռնարկները, որոնք համարեայ պատրաստեն յառաջ խաղալոյ:

Ի վերջոյ՛ մնաւ ահա՛ այսօր Ազգիս ուսումնասիրաց մէջ և այս աշխատութիւնը, և Հայկական գրականութեան գանձարանը՛ մի գրքոյկով ևս հարստացաւ: Անտարակո՛յսեմ, որ արդէն գիտեն սիրեցեալ համազգիքս, թէ՛ ի՞նչ է մեր նպատակը, որ առհասարակ բաժանորդագրութեամբ ենք լոյս աշխարհ ձգում հրատարակութիւներս. . . այս մի առանձին ճա-



նապարհ է, որով մտցնումենք կարելի եղածին չափ՛ մեր հասարակութեան գոգը Ազգային գրականութիւնը:

Կարեւորենք համարում յայտնել մեր խոնարհաբար շնորհակալութիւնը ա՛յն պատուական պարոններին՛ որոնք, թէ՛ ի պատիւ մեր, և թէ՛ ի պատիւ ձեռնարկիս՛ յարգանօք ընկալան մեր փութահութեամբ յղեալ յայտարարութեան թերթքը, և նեղութիւն յանձն առան ստորագրել տալ պ. պ. բաժանորդաց. ահա՛ այդ ազնիւ բանասիրաց անուանքը.— յԱստրախան՛ Մեծապատիւ Նիկողայոս Կաղաչկեանցին: Ի Բագու՛ Արժանապատիւ Հարցն Թադէոս Ա. Քահանայ Բուդաղեանցին՛ և Խորէն Քահ. Միրզաբէգեանցին: Ի Դարպէնդ՛ Գերապատիւ Բ. Ս. Անդրէաս Արքեպիսկոպոս Ս. Հօրը: Ի Դորտլագէօղէ գաւառն՛ Արժանապատիւ Սիմէօն քահանայ Կոստանդեանցին: յՇիրվան՛ Մեծ. Յակոբ Տէր Յովսէփեանցին: Ի Զաքաթալայ՛ Արժ. Յովհան Ա. քահ. Ատովմեանցին: Ի Թամամշլու գիւղն՛ Մեծ. Յովհաննէս Բէգզատեանցին: Ի Թէոդոսիոյ՛ Մեծ. Գրիգոր Ժեմչուժեանցին: Ի

ԺԴ

Խուշէնոտ (Գոռնչոնյ նահանգ)՝ Բարձր. Հօր՝ Թէոդորոս Վարդապետ Շիրակունւոյն: Ի Ղուբա՝ Արժ. Յովսէփ քահ. Աշուղեանցին. և Մեծ. Դանիէլ Սարումեանցին: Ի Մեծ Ղարաքիլիսա՝ Արժ. Արսէն քահ. Տէր Սիմէոնեանցին: Ի Նախիջեւան-հին՝ Մեծ. Աղէքսանդր Տէր Գասպարեանցին: Ի Նորք (քաղաքամերձ Երեւանայ)՝ Արժ. Վահան քահ. Տէր Յովհաննէսեանցին: Ի Նոր Բայազետ՝ Մեծ. Մկրտիչ Տէր Պետրոսեանցին: Ի Շամախու՝ Արժ. Մկրտիչ քահ. Խաչակեանցին: Ի Ս. Պ. Բուրգ՝ Արժ. Յովհաննէս քահ. Պօղոսեանցին: Ի Տփխիս՝ Մեծապատուհի Նունեայ Տիկին Էֆենդեանցին: Ի Քանաքեռ գեղջ՝ Արժ. Ներսէս քահ. Տէր Յարութիւնեանցին:

Վերջին տողերիս հետ՝ սեղմումեմ անկեղծ Հայութեան զգացմամբ Ազգիս հարազատ Անդամոց ձեռքը, և մնումեմ նոցա միշտ յարգող և մեծարող՝

Ա. Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ:

յԵրեւան
1877 ամի Մայիսի 19-ին:
և Հայոց՝
ՌՅԻԶ, Մարերի 10-ին:

# ՍԵՆԵՔԵՐԻՄ

## ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

## ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

### ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ:

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1 ՍԵՆԵՔԵՐԻՄ. . . . Թագաւ. Հայոց Վասպուրականի:
2 ՍԻՍԱԿ . . . . Զօրապ. Սենեքեր. արքայի Հայոց:
3 ԴԱՒԻԹ . . . . Գահաժառանգ, Սենեքերիմայ:
4 ՇԱՊՈՒՀ . . . . Հազարապետ Սենեքերիմայ:
5 ԱՏՈՄ . . . . Երկրորդ որդին Սենեքերիմայ:
6 ԱԴՈՒՍԱՀԼ . . . Երրորդ որդին Սենեքերիմայ:
7 ԿԱՐԱՊԵՏ. . . . Սպասաւոր պալատի:
8 ՎԱՍԻԼ . . . . Կայսր Յունաց:
9 ՌԱՄԱՆՈՍ . . . Հազարապետ Յունաց:
10 ՄԻԽԱՅԷԼ. . . . Պալատական Յունաց:
11 ՋՄՇԿԻԿ . . . . Արքունի գանձապետ Յունաց:
12 ԴԵՄԵՍԿՂՈՍ . . . Քաղաքապետ Յունաց:
13 ԿՈՍՏԱՆԴ. . . . Սպասաւոր Յունաց Պալատի:
14 ՏՈՒԿԻԾ . . . . Դեսպան Յունաց:
15 ՓԻԼԻՊՊԷ. . . . Դեսպան Նիկիփօռայ:
16 ՆԻԿԻՖՕՌ ԾՌՎԻՁ. . Յաղթանդամ Մեծ Իշխան և պալատական Յունաց:
17 ՁԻՆՈՒՈՐ . . . . } Հայոց և
18 ՊԱՀԱՊԱՆ . . . . } Յունաց:

### ԶՕՐՔ ՀԱՅՈՑ ԵՒ ՅՈՒՆԱՑ:

Պատմական յայտնի անցքը պատահումն Վասպուրականի Հայոց Վ֊ան մայրաքաղաքում, Յունաստանի Բիւզանդիոն մայրաքաղաքում, (այժմ Կ. Պօլիս) և Սեբաստիայում: Թուականութեանն Հայոց 465 և 466 և ի թուին Փրկչի 1021 և 1022:

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է Հայոց Թագաւորական պալատը, Աղթամարու ծովակի վերայ, պալատը զարդարուած է վեհափառ շքեղութեամբ, գահի վերայ հովանաւորուած է ոսկեծի թեւերը. որի վրայ բազմած է Սենեքերիմը, պալատում դրուած է մի գրասեղան որի վերայ կայ, թանաքաման գրիչ, զանգակ և թուղթ: Վարագոյրը բացուելոյն պէս մնում է Սիսակ: իսկ Դաւիթ և Շապուհ կանգնած են հանդէպը:

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

### ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ և ՍԻՍԱԿ:

ՍԻՍԱԿ:

Տէ՛ր Արքայ, հիւսիսային աշխարհի կողմից ամենամեծ բազմութեամբ անկրօն զօրք մտան արեւելեան կողմով Ձերդ Տէրութեան սահմանը, և առանց խնայելու՝ աւերում են գիւղերը, և բնակութիւնները, վասնորոյ շտապաւ, անկեալ դիմում եմ բարեխնամ Տէրութեանդ (չոքում է) առաջ՝ և պաղատում եմ աղերսելով օգնութեան մի հնար:

ՍԵՆԵՔԵՐԻՄ:

Ի՞նչպիսի մարդիք են նոքա՝ և ի՞նչ ազգ են, կամ ի՞նչ ժողովուրդ. որ այդպէս համարձակվում են մեծաւ յանդգնութեամբ մտնել մեր տէրութեան մէջ, առանց մի դեսպանի խօսելու և առանց քաղաքական օրէնքի, ինչպէս պա՛րտ են ունել ամենայն թագաւորութիւնք և իշխանութիւնք.

1001/474
7/XI 1922

ՍԻՍԱԿ։

Վեհափա՛ռ Տէր, այնպէս չէ՛ ինչպէս կարծում է Ձերդ մեծութիւնը նոքա՝ այնպիսի քաղաքականութեան որդիք չեն, որ մարդասիրութեամբ յառաջ գան, այլ՝ արիւնարբու գազանք են՝ և որպէս կատաղած վայրենի վագր, նոքա՝ անգութք են և բարբարոսք, որ մինչև անգամ մարդկանց միսը աւելի քաղցրութեամբ են ուտում, քան թէ անբան անասնոց, նոքա՝ ո՛չ օրէնք ունին որ հնազանդեն՝ և ոչ հաւատք ունին որ գո՛նէ ամաչեն, նոքա՝ միանգամայն վայրենի են ծնուած։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Եթէ այդպէ՞ս, Սիսա՛կ զօրապետ, ուրեմն ինչո՞ւ չժողովեցիր այն կողմի մեր քաջ զօրքերը, և պատերազմ չտուի՛ր այն վայրենաբարոյ խառնաշփոթ ամբոխին, ինչի՞ չարը չարով չըկորցրի՛ր այլ թողցիր որ յառաջ խաղան, և մեր կողմի վայելչութիւնը նորանց մատնեցիր. մի՞թէ չգիտէի՞ր արդեօք, որ քե՛զ վերայ մե՜ծ վստահութիւն ունէի . . . ։ Ափսո՛ս քեզ, որ քաջ մարդու գործ չկատարեցիր, այլ՝ վատութեան տեղ տուիր։

ՍԻՍԱԿ։

Ներեցէ՛ք Տէր իմ Արքայ, որ երբ նայեցի նորանց թէ՛ ուժին և թէ՛ պատրաստութեանը միանգամայն շուարեցայ, ու խոհեմութիւն չհամարեցի նորանց դէմ գնալ, նորա համար որ՝ լսած եմ իսկապէս այն առածը որ ասում է, „Այ ձեռքը՝ որ իրանից հզօրին վրայ կդիմի, երբէ՛ք առանց վէրքերի չի գնիլ իր ծոցը„, և թէ՛ „Անմի՛տ է նա, որ իրանից քաջին հետ պատերազմ կմտնի„, Ահա սոքա, և սոցա նմանները՝ միտ բերելով բարւոք չհամարեցի անխոհեմ գոռոզութեամբ Ձերդ մեծի Տէրութեան փա՛ռքը նուաստացնել, ամբարիշտ Սկիւթացւոց առաջին։



ԴԱՒԻԹ։

Ներեցէ՛ք ասել Տէր Արքայ, որ Սիսակ զօրապետի գործը միշտ քաջ խոհականութեամբ է լինում, նորա համար որ, ամե՛ն ժամանակ խորհրդով և մտածելով է մտնում պատերազմ, և ո՛չ թէ, լոկ բանիւ կամ անխորհուրդ յանդգնութեամբ, ի՞նչ օգուտ կլինէր, որ տկար զօրութեամբ մտնէր բռնաւորներին և մի արժանաւոր յիշատակի գործ չվճարէր՝ բա՛ցի այն՝ փնաս առաւել լինելու էր քան թէ օգուտը, ուրեմն հրամայեա՛ Տէր Արքայ, ամե՛ն քաջ բազուկներին որ ուժգնութեամբ դիմեն այն վայրենաբարոյ Թաթարաց վերայ, որ թո՛ղ ջարդեն և խորտակեն նորանց բազկի զօրութիւնը, և միանգամայն հալածեն Վասպուրականի սահմաններից։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Ճշմարիտ որ այդպէս պետք է անել, ուրեմն այժմէն իսկ հրամայում եմ քեզ Շապուհ, մեծ հազարապետդ իմ, որ ամենայն կարգից զօրք կազմէ՛ք, սկսեալ նոյն իսկ, վերջին աղքատից, հարուստներից, և պայազատներից՝ և ամենամեծ պատրաստութեամբ Վանայ կողմերից խաղալ գնալ Արտազու կողմըն, այ՛ն անգութ ազգաց վերայ. քեզ հետ ունեցի՛ր և Ազատագունդն զօրաց Անձևացեաց՝ և երկու հազար քաջ ու կտրիճ ձիաւոր անձինք Ռաջբերունւոյ, և Կորճէի սահմաններից. հրամայում ե՛մ նա և, բոլոր գաւառներին՝ և ամե՛ն տեղերին որ այս մեծ բանակիս համար ամե՛ն բանով օգնական և ձեռնտու լինին. գնա՛ և դու Սիսակ քաջ զօրապետդ իմ և օգնիր Շապուհին։

ՇԱՊՈՒՀ։

Պատրաստ եմք փութով կատարել Ձ՛ր վեհ հրամանները։

ՍԻՍԱԿ։

Նոյնպէս և ես. (Գնում են պատրաստուելու։)

## ՏԵՍԻԼ Բ.

## ՍԵՆԵՔԵՐԻՄ ԵՒ ԴԱՒԻԹ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։ (Մի փոքր մտածելով)

Մե՞ծ գործ է այս, և շա՜տ դժուարին գործ . . . . եթէ Տէր յաջողեսցէ ուժգնութեամբ և քաջութեամբ յաղթել՝ այն, բարութեան նշաններ են, իսկ թէ՛ ոչ՝..... ։

ԴԱՒԻԹ։

Տէ՛ր արքայ, անհոգ կացէք որ յաղթութիւնը մերն է, որովհետև արդէն իսկ քաջութեան ոգինը իմ բոլոր երակների մէջ խաղում է, չե՛մ կարող կենալ, և չե՛մ կարող հանդարտել այն ժանտ և բարբարոս թշնամեաց դէմ, ո՛ւրեմն եթէ շնորհ ունեցայ քո առաջին ներկայանալ, հզօ՜ր և մեծ արքա՛յ խնդրում եմ, հրաման տուր ինձ այս անգամ առաջ գնալ խաչադրրող բանակիդ, որ այն պղծեալ ազգից մեր անարգանաց վրէժն առնենք, որոնք՝ ո՛չ Աստուած են ճանաչում և ո՛չ նորա օրէնքը։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Սիրելի որդեա՛կ իմ, դո՛ւ դեռ անհմուտ ես պատերազմի, և ինչպէս պատմում ես որ քո քաջավարժ ախոյեանդ քաջ ուժեղ է և արինարբու, հաւատում եմ, բայց ի՞նչպէս կարող ես առանց մի երկար կրթութեան յանկարծ մտնել այսպիսի մի մեծ պատերազմի մէջ, որոնք ամենայն հուժկութեամբ առիւծի նման վրայ են թռչում, չէ՛, լսի՛ր դու այս անգամ որդեա՛կ իմ. որ այս պատերազմս՝ անվարժների ճակատ չէ՛։



ԴԱՒԻԹ։

Գիտե՛մ Վեհափառ հա՛յր որ Ձեր ծնողական գութը՝ չի թողնում ինձ մտնել այն վտանգի մէջ, որ կարողութիւնիցս բարձրնէ. բայց նուաստս՝ յոյս չե՛մ դրել երբէք իմ ուժի և բազուկներիս զօրութեան վերայ, այլ՝ միմիայն անձերանալի ճշմարտութեան. դո՛ւրս կգամ ճակատով նոցա դէմ և Աստուծոյ ողորմութեամբը կառնենք մեր վրէժը։ Արդեօք ո՞վ է Մուղալ թաթարը, որ Հայոց քրիստոնեայ բանակը հայհոյէ և վեջապէս Աստուծոյ սուրբ տաճարը . . ո՛չ, ո՛չ, ես պատրա՛ստեմ հա՛յր՝ որ մինչև անգամ նահատակութեամբ թափեմ իմ արիւնս մեր Ս. Եկեղեցւոյ և ցանկալի ա՜խ հայրենեացս օգտի համար, որի մէջ ծնուելեմ Հայ. ո՛չ մի աշխարհային երկիւղ չէ՛ կարող հեռացնել ինձ՝ իմ մեծ յոյսիցը, ո՛չ հո՜ւր, ո՛չ ջո՜ւր և ո՛չ մի ամենասոսկալի տանջանք. որ ահա՛ կարծես յաղթութեան նշանը ինձ երևումէ, ,,կատարեալ սէրը՝ ամէն բան հեռացնումէ,, թո՛յլ տուր ինձ, հա՛յր, աղաչումեմ (ընկնում ոտքերը) թո՛յլ արա ինձ, որ այդ հայրենանուէր զօրքիդ հետ ջարդել սևագունդ Թաթարներին. մոռացե՞լէք հա՛յր, որ Դուք ուսուցանումէիք ինձ իմ մանկական հասակում, ,,որ ամենա՛յն քաջութեամբ դիմադրու լինել հայրենիքիս համար, և եթէ մահու վտանգ ևս պատահեսցէ հայրենեաց սիրոյ համար՝ սիրո՜վ ընդունի՛ր որդեակ, որ մինչև անգամ երկինքը ևս կվարձատրէ քեզ. ,, և ես հա՛յր, միշտ և այժմ՝ նո՛յնն եմ կամենում կատարել։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Վե՛ր կաց, վե՛ր. (բարձրացնում ձեռքերը) օրհնութեան պտուղ՝ դո՛ւ որդեակ իմ Դաւիթ, թո՛ղ համբուրեմ այդ քաջ ճակատդ. (համբուրում) որովհետև քո սրտի մէջ այդչափ զօ-

բացել է կրօնասիրութիւնը և հայրենասիրութիւնը՝ վասնորոյ բոլորովին սրտիւ աներկիւղ վստա՜հ եմ այժմ, որ կարողես զարմանալի քաջութիւններ անել. Նորա համար որ՝ դիւցազնական քաջութիւնը, մարդկոյս մարմնի ուժի վրայ այնքան չէ՛ որքան եռանդի. անծանօթ չէ քեզանից մեր Հայկի առիւծասիրտ քաջութիւնները, որ ջարդուփշուր անելով գետնի վրայ թաւալեցրեց այն խրոխտացեալ գոռոզ Բէլին. վստա՛հ եմ քեզ վերայ, որդեա՛կ. ուրեմն կտամ քեզ խնամակալութեան մեծ հազարապետիս Շապհոյ՝ որ տանի քեզ կրթելու պատերազմի համար: Բայց դո՛ւ, պա՜րտես իբրև որդի՝ խոնարհ հըպատակութեամբ լսել, և ամենա՛յն խոնարհութեամբ՝ կատարել նորա հրամանները. Նա՛ քեզ դաստիարակ հայր՝ իսկ դու նորա կամքը կատարող՝ և հնազանդ որդի:

## ՏԵՍԻԼ Գ. (Մտանում Շապուհ. եւ իւր զօրքերը երկրպագութեամբ իրենց նիզակների ծայրերը):

## ՇԱՊՈՒՀ ՍԵՆՆԵՔԵՐԻՄ, և ԴԱՒԻԹ,

ՇԱՊՈՒՀ:

Վեհափա՛ռ Տէր, Ձերոյին բարձր հրամանաւ՝ ամե՛ն բան պատրաստուեցան, բոլոր պատերազմողք հանդերձ հարկաւոր պիտոյքիւ անթերի լրացան. և ահա՛ ամբողջ քաջ սպայք և զօրականք, արդէն սպասումեն Ձերոյին Վեհափառութեան հայեցողութեանը՝ և հրամանին:

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ:

Բայց ի՞նչպէս կարգադրեցիր:



ՇԱՊՈՒՀ:

Գունդն Ոշտունեաց՝ իրենց հազարապետօքն և հարիւրապետօք. գունդն Հայկաձորոյ, Անձևացեաց, Տօսպայ, Գնունեաց, Արտազու և Աղբերանւոյ՝ իրենց ձիաւոր հազարապետօքն և հարիւրապետօք. գունդն Ռուժունեաց, Մոկաց, Ատըրպատունեաց, Մեծունեաց, Պալունեաց, Վարաժնունեաց և Պարսպարունեաց՝ իրենց բովանդակ պատրաստութեամբ:— Իսկ Վերին Պարսկահայոց և Աղձկեանց՝ Ձերոյին Վեհափառութեան հրամանին համաձայն, հրամայեցինք որ անշուշտ թշնամեաց առաջն փակեն, մինչև մեր մեծ բանակի հանելը:

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ:

Այդ ամենայն բարւո՛ք է և գովելի. բայց Շապո՛ւհ քաջ հազարապետդ իմ, ահա՛ այսօր տալիս եմ քո ձեռքը իմ թագաժառանգ Դաւիթ որդիս, որ քո խոհեմ դաստիարակութեամբ՝ կրթե՛ս պատերազմի մէջ ո՛ր փորձուի և արիասիրտ հանդիսանայ ժամանակին. Նորա համար որ, ո՛ր և իցէ մի իշխան եթէ չունենայ քաջութեան արիութիւն, անարժա՛ն է նա իշխանութեան. բայց պա՜րտես վերակացու լինել նորա ամե՛ն մի շարժմանց, թոյլ չտալով նորան՝ իրեն երիտասարդութեան վառուելուն, որը՝ կարողութիւնից բարձր է, որ վերջը իրեն կեանքը վտանգի մէջ չդնէ. Նորա համար որ, անփորձը և անկիրթը՝ շատ անգամ իրեն կեանքը կըկորցնի, իսկ հայրագութ սիրոյ ամե՛ն մի բարկութիւնները և սպառնալիքները, երիտասարդին սանձի մէջ դնելով՝ ուղղութիւն կշնորհի և կըտայ տեսնել արև: Արդ՝ ա՛ռ դու և վարժի՛ր նորան պատերազմի մէջ. և նա՛՝ հլու հպատակ քո աշակերտ պա՜րտէ լինել:

ՇԱՊՈՒՀ։

Մե՜ծ և շա՛տ ծանր է այս պաշտօնը Վեհափառ Տէր, որ այս անգամում յանձնումեք Ձեր ծառային. բայց մեծ արքայութեանդ հրամանն է՝ ո՞վ կարող է ընդդէմ մի ձայն հանել, թո՛ղ լինի ինչպէս բարերարիդ կամքն է։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

(Ընծայելով Դաւթին չէսպը յանձնումէ Շապուհին ասելով՝) Քա՛ջ հազարապետդ իմ Շապուհ, ահա այսօր տալիս եմ քո ձեռը, ոչ թէ միայն այս գահաժառանգս՝ այլ ամբողջ թագաւորութիւնս Վասպուրականի. առաջնորդի՛ր ուրեմն, որ որքա՛ն խոհեմութիւն, հանճա՛ր և քաջութի՛ւն ունիս՝ պէտք անշուշտ գործ դնես, քե՛զ է մնում հայրենեաց տան կառավարելն այժմ. վե՛հ ճակատիդ վերայ բոլորուած պահում է արքունիքս իւր յաղթութեան պսակաց շուքը. զօրացի՛ր և քաջամի՛րտ եղիր, որ դու ջարդուփշուր անելով հալածական պէտք անես անհաւատ Մուղալներին մեր սահմաններից. այժմ ես կամենում եմ գնալ զբօսնելու. տուէ՛ք համբուրեմ Ձեր այդ փառաւոր և քաջ ախոյեան ճակատներդ. (համբուրում է) որ ինչպէս համբուրումեմ անպատմելի ուրախութեամբ, տացէ Տէր՝ որ և յաղթութեան դրօշակը ընդունած վերադառնաք, որ կրկին համբուրեմ Ձեր քաջամարդիկ ճակատները։ (գնում է)։

ՇԱՊՈՒՀ։ ԴԱՒԻԹ։ { (Միասին)։ Եղիցի՛ն, եղիցի՛ն, Տէր Արքայ։

## ՏԵՍԻԼ Դ.

## ՇԱՊՈՒՀ ԵՒ ԴԱՒԻԹ։

ԴԱՒԻԹ։

Ուրեմն թո՛յլ տուէք ինձ, գնալ զօրքը կարգի դնել քա՛ջ իշխան։



ՇԱՊՈՒՀ։

Շա՛տ բարի գնացէք, և հրամայէք որ պատրաստուեն։

(Գնում Դաւիթ)

## ՏԵՍԻԼ Ե։

## ՇԱՊՈՒՀ (առանձին)։

ՇԱՊՈՒՀ։

Ո՜վ Տէր Աստուած՝ ի՞նչպէս ծանր գործի տակ թողեց ինձ թագաւորը. արդեօք ի՞նչպէս կարող եմ հայր և դաստիարակ լինել այս պատանւոյն, որը՝ բոլորովին անփո՛րձ է և անհմուտ պատերազմի մէջ. ահա՛ ես նմանեցայ Սմբատ մեծ իշխանին, որ վերառաւ քաջը՝ Արտաշէս մանկանը ու ծանրակիր վշտամբ տառապելով տարաւ անծանօթ դաշտեր, լեռներ, և վերջապէս մեծամեծ պատերազմների մէջ. մինչև որ իւր արդիւնքը գլուխ հանելով՝ բերեց բազմացրեց նորան արքայական գահը. կրկին նորոգելով այն խե՜ղճ Հայաստանը... պե՛տքն ինձ անշուշտ, քա՜ջ խոհականութեան մի՛տք, երկարատև համբերութեան սի՛րտ, անվտանգելի քաջ արիութիւն Սմբատայ մեծ իշխանի նման, որ կարողանամ պարզերես հանդիմանալ հայրենեացս առաջ. և որ իմ անունը՝ ժամանակին պատկառելի յիշուի մեր ազգային պատմութեան էջերի մէջ. ո՛ւրեմն ո՞վ Տէր իմ և Աստուած, (ծնրադրում է) Դո՛ւ տուր ինձ զօրութիւն և կարողութիւն՝ թէ՛ մտաց և թէ՛ անձիս, Քեզ եմ ապաստանել Նախախնամող Տէ՛ր. և գնումեմ Քո Անուամբ՝ այն ահեղի պատերազմի ճակատը, Քո՛ է յաղթութիւնը և փառքը։ (ընթանալով հեռանում է տապատտարին)

## ՏԵՍԻԼ Զ. (Մտանում սպասաւորն)

## ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՇԱՊՈՒՀ

ԿԱՐԱՊԵՏ։

Ի՞նչ էք հրամայում Տէր իմ։

ՇԱՊՈՒՀ։

Ամենայն խոնարհութեամբ, և խորին ակնածութեամբ յայտնիր արքայորդւոյն, որ ազատագնդից մի գունտ քաջ զօրաւարներ՝ իւր հետ առնելով գայ պալատս։

ԿԱՐԱՊԵՏ։

Պատրաստ եմ կատարելու Տէր իմ։ (գնում է)

## ՏԵՍԻԼ Է.

## ՇԱՊՈՒՀ (առանձին)

ՇԱՊՈՒՀ։

Այժմ նախ և առաջ, պէ՛տք է ամենայն խոհեմութեամբ ըղդուշացնեմ պատերազմի ամեն մի կերպը և հնարը. որ մի՛ դուցէ իւր երիտասարդութեան վառվռուն ընթացքով՝ մի վըտանգ բերէ իւր գլխին. . . (շրջում է աջ կողմ) բայց այս ի՞նչ ոտների ձայներէ. . .երևի գալիս են. . . ։ (շրջում է երկու կողմեր)։



## ՏԵՍԻԼ Ը.

## ԴԱՒԻԹ ԶՕՐԱԿԱՆՔ ԵՒ ՇԱՊՈՒՀ։

ԴԱՒԻԹ։ (երգելով մտնում է զօրաց հետ)

Ազատորեար ո՞վ դիւցազունք՝
Օրհնաւոր դուք քաջաձիգ,
Ձեզ է մնում մեր հայրենեաց } կրկնեա՛։
Կանգնեցնել դրօշակը փառաց։

ԶՕՐԱԿԱՆՔ։

Ո՛ն յաղթեսցուք մեք յՆըլեմայ՝
Նա, որ անաստուած յոխորտայ,
Սուսեր նիզակ մեր քաջ բազկով՝ } կրկնեա՛։
Թո՛ղ շողասցէ ընդդէմ նորա։

ԴԱՒԻԹ։

Հա՛յ զօրականք հաստատ եղէ՛ք,
Երկինք զուարթ՝ ընդ մեզ է հաշտ.
Տայ թշնամին մեզ ի տապաստ, } կրկնեա՛։
Քաջ ախոյեան եղէ՛ք պատրաստ։

ԶՕՐԱԿԱՆՔ։

Արտօս այս լեառն՝ է՛ միշտ ազատ,
Որ մեզանով միշտ է ի պատ,
Մեր քաջութեամբ մեծ նշանակ, } կրկնեա՛։
Կացցէ՛ քարոզ միշտ համարձակ։

ԴԱՒԻԹ։

Ծովակն աղէ այն կապուտակ.
Թո՛ղ կրեսցէ մեր դրօշակ,
Խաչ և արծիւ մեր սխրափակ՝ } կրկնեա՛։
Իշխան կացցեն մեր աշխարհաց։

ԶՕՐԱԿԱՆՔ․

Մենք պատրաստ ենք քաջ սրտերով,
Զարդել փշրել մեր սրերով,
Պատառ, պատառ անել բազկով, } կրկնում։
Եւ ոսկրներն այրել կրակով։

(Դուրս են զօրականք խմբովին)

Քաջաց ծնունդ քաջազունք ենք,
Վե՛հ կորովի ասպետունք ենք,
Սարսուռ շփոթ մահունք տալով,
Փախչէն մեզնից այն վատ Թրքունք։

(Շապուհ այս երգը լսելու միջոցին երեսի մէջ ցոյց է տալիս անսահման ուրախութիւն։)

---

ՇԱՊՈՒՀ։

Կեցցէ՛ս, ժառանգդ Վասպուրական թագաւորութեան, որ այդպէս քաջասրտութեամբ յառաջ ես մղում դէպի պատերազմ. որ ամէ՛ն մի երակացդ մէջ քաջութեան արիւններ է վազում։ (Դառնալով առ զօրականս) Կեցցէ՛ք և դուք Ազատագունդքդ Վասպուրականի, տեսնում եմ այո՛, որ ձեր ամէնքիդ ճակատի վերայ՝ փայլում է ամենայն պարզութեամբ յաղթութեան դրօշակը. և ձեր երակները, կարծես միմեանց երակների մէջ քաջութիւններ են աւելացնում. այո՛, փա՛ռք է Վասպուրականի Հայաստան աշխարհիս որ ձեզ պէս՝ թըշնամեաց արիւնարբու զաւակներ ունի. փա՛ռք և մեր նախնեաց՝ որ մեզ նման Հայրենեաց սիրոյ համար պատրաստի քաջ սերունդք ունի։



ԴԱՒԻԹ։

Կեցցէ՛ Շապուհ քաջ զօրաւար։

ԶՕՐԱԿԱՆՔ․

Կեցցէ՛ Շապուհ քաջ զօրաւար։

ՇԱՊՈՒՀ։

Ժառանգդ Վասպուրականի, Տէրդ պանծալի. նախ և առաջ կամենում եմ յայտնել քեզ, որ զգո՛յշ լինիք այն խառն պատերազմի մէջ. նորա համար որ, բազմատեսակ հնարքներ և խոհեմութիւններ պէտքեն, մանաւանդ քեզ պէս արքայական շքով ազատ կեանք ունեցողին. որ ոխերիմ չար թշնամին միշտ կը ջանայ և կաշխատի, ու ամեն իւր ճիգն գործ կդնի՝ որ իւր ուժի զօրութիւնը թափել նորանց վերայ՝ որոնք են տէրութեան մէջ, անուանիք, ընտիրք և երևելիք. նորա համար որ, եթէ վնասուի հովիւն. ոչխարքը վա՜յ տալով կցրուեն. կամ եթէ վնասուի գլուխն՝ միւս անդամքն կոչնչանան։ Այո՛ որ դու մեծ բանակիս գլուխն ես և տէրը, ուրեմն պա՛րտ ես ամենայն խոհեմութեամբ պաշտպան լինել քոյ անձին. որ քո կենդանութեամբն, քեզ հետ եղող շատերից կենդանութիւն կշնորհես. խրախուսւի՛ր պատերազմի համար՝ և քա՛ջ եղիր, բայց աղաչում եմ քեզ առանց խորհրդի երբէ՛ք չմոցնես քեզ վտանգաւոր տեղերը. որտեղ տեսնես թէ թշնամին կատաղութեամբ գժուել է, և վերջին յուսահատութիւնն է պատերազմի՝ զգո՛յշ կաց, խաբս տո՛ւր նորան և միանուագ վրայ չթռչես. որտեղ յաղթող չի երևում պատերազմը՝ այն տեղ զգոյշ կա՛ց. ահա՛ սրա և սոցա նմանները իմանալով կրթի՛ր քեզ ինքդ, մի՛ գուցէ ժառանգդ Վասպուրականի որ անզգուշութեամբ վրայ յարձակուես։

ԴԱՒԻԹ։

Հայրապետիւ ասպետ, գիտեմ որ իմ տղայական հասակս անկիրթ է և անհմուտ պատերազմի մէջ. բայց քո խնամքովը դաստիարակուելով կվստահանամ բարութեան հանդիպել, և իմ բոլոր ջանքը և ճիգն առանց արդիւնաւորելոյ չե՛մ թողնիլ։ Բայց, անվեհեր վստա՛հ եմ որ կթափեմ արիւնս Վասպուրականիս փառքի՝ և ուղափառ սրբազան կրօնիս սիրոյ համար. Թո՛յլ տո՛ւր ինձ խնդրեմ, որ եթէ իմ մահուամբը հայրենիքս ազատութիւն պիտի գտնէ՝ չե՛մ ծուլանալ ինձ մահու վտանգ տալով, վասն զի շատ քաղցրնէ հայրենեաց սիրոյ համար նահատակութեան պսակ ընդունել. աւելի չե՛մ ես քան թէ մեր նախնի դիւցազունքը, որոնք խրախուսական յորդորներ տալով ապագայի՝ իրենց կեանքը նահատակեցին և եղեն ազատիչք Հայաստանեայց աշխարհի։ Եթէ մեծին Աքիլլէսի արարքը՝ վառումէր Աղէքսանդր Մակեդոնացւոյն սիրտը, ապա քանի՜ անգամ առաւել մեծին Վարդանայ՝ գերահրաշ արարքը իմ սիրտը միթէ չե՞ն տոչորիլ. որի անձնանուէր քաջութեան յիշատակը՝ Աստուծոյ սուրբ եկեղեցին մեծաւ տօնախմբութեամբ յաւերժացնելով անմահացնումէ նորան. և դաշտն Աւարայրի անջնջելի արձան է կանգնացրել Արտազում դարուց ի դարս յիշելով։

ՇԱՊՈՒՀ։ (Առ զօրականս)։

Արի և քա՛ջ զօրականք, որ Վասպուրական Թագաւորութեան փառքնէք. գիտէ՞ք որ այս առաջին նուագն է ինքն արքայորդին՝ ձեզ հետ պատերազմէ դուրս գալիս ընդդէմ անհաւատոյն։—Այս անգա՛մնէ ահա՛ որ ամե՛ն մի քաջ զօրական պանծաշուք պսակը իւր արժանի վարձն պիտի ընդունի։



Ուրեմն զօրացարո՛ւք, քաջացարո՛ւք և պատրաստ եղէ՛ք որ քաջ զօրութեան որդիք լինիք. ահա՛ գնումենք պատերազմ. յաղթութեան ճանապա՜րհ և դարձ։

ԶՕՐԱԿԱՆՔ։ (Երգում են)

Արք զօրութեան, ընկերք արի՛ք անվեհեր՝
Զէ՛ն կալարուք, վառ խուժանին տա՛լ երեր,
Թէպէտ շատինք, թէպէտ շփոթ շատ որեար՝
Բայց մեր հաւատ մշտայաղթող զօրաւոր։
(Գնալով) Աստուած ընդ մեզ՝ մի՛ երկիցուք երբ անզօր՝
Մեր թշնամին Նա իսկ առնէ գլխակոր։

(Վարագոյրը իջնում է)։

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանն է Արքունի Հայոց պալատը, նոյն դրութեամբ, որպէս Ա. արարուածը միայն աթոռներ աւելացրած է. Թագաւորը նոյնպէս բազմած է գահի վերայ, ղարադրը բացակայուն պէս մտնումեն, Դաւիթ, Շապուհ և Սիսակ. իսկ Ատոմ և Ապուսահլը սկզբից կանգնածեն Թագաւորի դէմ։

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

### ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՏՈՄ, ԱՊՈՒՍԱՀԼ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ և ՍԻՍԱԿ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Ողջո՛յն Ձեզ քաջ զօրականք իմ, ի՛նչպէս յաջողեց ձեզ Տէր Աստուած, և ի՞նչպէս յաղթեցիք թշնամեաց։

ՇԱՊՈՒՀ։

Տէր արքա՛յ, փա՛ռք վերին խնամոցն որ ամենայն յաջողութեամբ մեծ նահատակութիւն արեց այս անգամ եւ՝ մեր ազատագունդն Վասպուրականի. որ իւրեն Արծիւ դրօշակը՝ կանգնացրեց Թշնամեաց բանակի տեղը և բարձրացրեց Թագաւորութեանդ փառքը։ Բայց արքայորդիդ շատ անգամ զարհուրելի վտանգի մէջ մտաւ, և հազիւ նահատակութիւնից ազատուեց. և խոստովանումեմ որ այս յաղթութիւն՝ բոլորը համարեա նորան է պատկանում. որ ամե՛ն արենարբու Թըշնամեաց առաջն փակելով սաստիկ կոտորում հասցրեց։

ՍԻՍԱԿ։

Արդարն ասեմ Տէր իմ, իմ կենացս մէջ երբե՛ք չէի տեսել այնպիսի մի զարհուրելի պատերազմ. այս անգամիս, բոլոր նոցա զօրականքն՝ արի՛, քա՛ջ, հուժկո՛ւ, անվեհեր և խուժանդուժ էին. նամանաւանդ բնութիւններն արենարբու գազանի նման էին, որ զարհուրեցնում էին իրենց երեսը նայողին, նոքա բնակվումեն լեռների, դաշտերի, անապատների և անտառների մէջ. ինչպէս վայրենի գազաններն որ մինչև անգամ՝ ամենայն դիակուց մսերն եւ ուտումեն ինչպէս գազանք. նոքա՝ ո՛չ մեծերին են պատվում, ո՛չ ալևոր ծերերին՝ ո՛չ ողորմումեն երիտասարդին և ո՛չ գառնուկ տղայոց։ „Այս ազգը՝ չա՛ր է և գառնացող, ազգ՝ որ չուղղեց իւր սիրտը, և ոչ էլ հաստատեց առ Աստուած իւր հոգին„ ո՛չ օրէնք գիտեն և ո՛չ քաղաքականութիւն. գազանաբար ծնուած են՝ և գազանաբար եւ կենցաղաւարումեն. վերջապէս եթէ Աստուծոյ պահապան հըրեշտակը չլինէր, ու արքայորդու արիական քաջութեան պընդութիւնն՝ և ազատագունդ զօրաց դէմ կենալը, Վասպուրական հայրենի աշխարհիս մե՜ծ վնաս կլինէր։



ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Եթէ այդպէս՝ ուրեմն վտանգաւո՞ր էր պատերազմն. (առ Դաւիթ) բայց զարմանումեմ ի՞նչպէս արդե՛օք Դաւիթ որդեա՛կ իմ, քո անձն մտնումէիր վտանգի մէջ. չէ՞ Թէ մեր տէրութիւնն մե՜ծ վնաս կըկրէր, եթէ Տէր՝ մի արասցէ մի ձախողակի վտանգ հանդիպէր։

ԴԱՒԻԹ։

Վեհափա՛ռ տէր, ես շատ անգամ լսել եմ այն խրախուսական բանը որ ասումէ „լա՛ւ է քաջութեամբ մեռնել հայրենեաց համար՝ քա՛ն Թէ, վատութեամբ կեանք վարելով ցաւոց հաց ուտել„ մի՛Թէ ինձ բաւական չէ՞ին հօյակապ անձանց արարքը, և հայրենեաց սիրոյ համար անձնադիր եղողների եռանդն, չէ՛, չե՛մ սխալուիլ մեռնելու Աստուծոյ սիրոյ՝ և հայրենեացս համար։ Արդա՛րև մեծ վտանգ էր ա՛յն՝ և համարեա Թէ հրաշք՝ որ ես ազատուեցի այնպիսի կոտորածից. բայց Նախախնամող Տիրոջ յաջողութիւնը, և հայրագութ գորովը Շապուհ մեծ հազարապետի ինձ Թիկունք տալով՝ կրկին տեսայ հայրենեացս արևը։

ՇԱՊՈՒՀ։

Ներեցէ՛ք ասել Տէր Արքայ. — որովհետև մեր Թշնամիքը այդպէս խիստ են և կամակոր՝ և ինչպէս ականատես եղանք, որ մեր ամենաքաջ զօրականքն եւ սարսափելով վախենումէին. վասնորոյ իրանց Թշնամութիւնը չպետքէ յապաղեցնեն կրկին մեզ վրայ գալու. որովհետև նոցանից շատ կոտորուած եղաւ. Ուրե՛մն հարկաւոր է անշուշտ Վեհափառ Արքա՛յ ու մի օգնութեան հնարք գտնէք։ Եթէ հնա՛րէ մեր շրջակայ հայերից օգնութեան հրաւիրենք. կա՛մ վարձով զօրք ինդրենք. և կամ

դիմենք դէպի Բիւզանդիոն, առ Վասիլ Կայսրն Յունաց. աղերսենք նորան, որ մեզ օգնութեան համար քաջ զինուորներ տան. մեր մեծամեծ քաղաքները անշուշտ պէտք է ամրացնել. զօրաց համար՝ հացի և այլ ուտելեաց պատրաստութիւններն տեսնելով ժողովենք և ամբարենք. զէնք, սուր, նիզակ և վահանք՝ ամենից առաջ պիտո՛յ է ունենանք. և այս բոլոր պատրաստութիւններից յետոյ՝ հրաւիրանաց ծանուցագիր ուղարկենք ամէ՛ն գաւառները և տեղերը. նոցա սրտերը վառենք ազգասիրութեամբ. որ ամէ՛ն մարդ յօժարութեամբ անձնազոհ լինի հայրենեաց սիրոյ համար։

ԴԱՒԻԹ։

Իմ կարծիքը ևս, համապատասխանէ հազարապետիս խօսքին և կամքին։

ՍԻՍԱԿ։

Ճշմարիտ որ պէ՛տքէ այդպէս անել. որովհետև ուրիշ հընարք չկայ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Այո՛ բարւոքէ ձեր ասածը ազնիւ քաջերս. բայց մեր շրջակայ կողմերից՝ վտանգելի է օգնութիւն խնդրել. վասնզի՝ Արաբին և Պարսիկը, արդէն յաղթուած լինելով այն Սարակինոսի գազան բնակիչներից՝ սաստիկ նեղութեան մէջ են. Յունաց տէրութիւնն ևս, քանի՜ցս անգամ խարդախութեամբ վարուեց Հայերի հետ. որոնց շա՛տ ու շա՛տ անգամ փորձեցինք. նկըսեալ նոյն իսկ մեր հայրերից. իսկ մեր բնիկ և արիւնակից Բագրատունեաց թագաւորութեանն եթէ դիմենք՝ նոցանից ևս կասկածելի է. նորա համար որ, նոցա հետ նախ և առաջ մեր հայրերը Արծրունիք՝ ապստամբութեամբ վարուեցին. և նո՛յն



իսկ՝ հակառակութեան բո՛ցը, դեռ մինչև օրըս չվերջացաւ մեր մէջից. ափսո՜ս մեր Հայութեան. որ միմեանցից պարզութեամբ չենք վստահանում օգնութիւն խնդրել, բացի այն՝ և այժմյս թագակալն, այն պանծալի Բագրատունեաց թագին՝ ինքն Սմբատ Յովհաննէս թագաւորը, չո՛ւնի այն արիութեան քաջութիւնն իւրեանց նախնեաց քաջերի նման. որ գո՛նէ վստահանանք օգնութիւն խնդրել՝ և այս բոլորից յետոյ. մնում է ինձ խիստ ծա՜նր մտածել, խորհե՛լ և մի փրկարար միջոց գտնել. որ գո՛նէ խաղաղութիւն և անդորրութիւն ձեռք բերեմք. թէ՛ մեզ՝ և թէ՛ մեր գալոց սերնդոց համար։ (Մէկուսի տատանէ խոր մըտածմունքի մէջ ընկնել յետոյ ճակատին դնելով գլուխը յածայրած)։

ՇԱՊՈՒՀ ԴԱՒԻԹ ԵՒ ՍԻՍԱԿ։

(Մի ձանի վայրկեան միմեանց աչքերի նայելով իբր խորհուրդ են անում. բայց յետոյ խմբովին ասում են)։ Բայց ի՞նչ անենք Տէ՛ր Արքայ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

(Չէ՞ լսում. բայց տատանէ շփոթմանց մէջ, հեծեծական եղանակով ասում է) Ա՜խ. . . հայրենիքս։

ՇԱՊՈՒՀ ԴԱՒԻԹ ԵՒ ՍԻՍԱԿ։

(Գլուխները շարժելով՝ խմբովին ասում են։) Տէ՛ր Աստուած. . .։ (Մի վայրկեանից յետոյ) Բայց ի՞նչ անենք Տէ՛ր արքայ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

(Խորին հառաչելով,) Ա՜խ, շատ մտածելով՝ անհանգիստ վըրդովմանց մէջ եմ. ինքս շուարուածեմ և չգիտեմ ի՞նչ անեմ. պէ՛տքէ զգուշանալով խորհել՝ որ մեր անձը և ընտանիքը անհաւատ թշնամիներին չմատնենք։ (Գահոյքին նստի հետև ընկնում։)

ԴԱՒԻԹ:

Բայց ի՞նչ խորհենք Տէր Արքայ. կա՞յ արդեօք մի հնար ազատուելու:

ՍԵՆԵՔԵՐԻՄ: (Չէ լսում:)

ԴԱՒԻԹ:

Ո՜հ անտանելի դրութիւն և դառն վիճակ. խե՜ղճ Հայաստան. այս ի՞նչ օրերի ես ենթարկուում, (Առ Սենեքերիմ) Տէ՛ր Արքայ բայց ի՞նչ խորհենք:

ՍԵՆԵՔԵՐԻՄ:

(Խոկալուց զարթնելով) Ա՛խ, իմ սիրելիք. երկա՜ր մտածելով, ես բարւոք եմ համարում տալ՝ մեր երկիրը Յունաց Վասիլ Կայսերի ձեռքը, և առնենք նորանից փոխարէնը Սեբաստիայ հռչակաւոր քաղաքը իւր սահմաններովը. այն տեղ՝ գոնէ մի փոքր հանգստութեամբ կանցուցանենք մեր օրերը:

ԱՏՈՄ:

Դառն են այդ յիշատակութիւններդ Տէ՛ր Արքայ. և ո՞վ կարող է հեշտութեամբ տանել. ի՞նչպէս կլինի մեզ, որ թողնենք մեր հայրենի տունը և ժառանգութիւնը՝ ու գնանք բնակենք օտար և անծանօթ երկրում. ո՜հ տխո՜ւր տեսարան. ի՞նչպէս մոռանանք արդեօք այս մեր լեռների գեղեցկութիւնը, պտուղաբերանց սքանչելի դաշտերը՝ և վերջապէս մեր հօյակապ պալատը և բերդերը:

ԱՊՈՒՍԱՀԼ:

Ո՜հ քաջ եղբա՛յր իմ Ատոմ, ի՞նչ անարգանաց նախատինք պէտքէ տան մեզ մեր ապագայ սերունդն. ի՞նչ է այս, մի՞թէ մեր այս օրերո՞ւմ պէտքէ վախճան լինէր Վասպուրական թա-



գաւորութեանս գահը. մի՞թէ մեզ էր մնում քաղցրահամ ճաշակել այս դառնութեան պտուղը. մեր անգին օրերը, ո՜հ, այն գաղթականութեան մէջ, ուրիշ բան չէ լինելու՝ այլ միայն, սո՜ւգ և անմխիթա՜ր տրտմութի՛ւն վա՜յ մեզ՝ որ մեր ազատութիւնը ինքնայօժար կամքով գերութեան ենք վաճառում:

ՍԻՍԱԿ:

Լոկ բաներով ոչինչ չէ լինիլ Տեա՛րք իմ. բայց ասացէք խնդրեմ, կարո՞ղ է արդեօք մեր արիագունդ բանակը դէմ կենալ այն արենարբու բարբարոսներին. քանի որ ո՛չ ոքից մի օգնութեան յոյս չունենք:

ԴԱՒԻԹ:

Ինձ համար շա՜տ քաղցր է Հայրենեացս համար քաջութեամբ մեռնիլը, քան թէ յիմա՛ր փարթամութեամբ ապրել:

ՍԵՆԵՔԵՐԻՄ:

Ինչպէս որ մտածել եմ, առանց յետաձգութեան՝ պէտքէ և այնպէս կատարել. որ անմտութեամբ չմնանք գերութեան մէջ և չծառայենք ամբարշտին: Բայց սորա համար ե՛կ որդեակ իմ Դաւիթ՝ ուղարկեմ քեզ Դեսպանութեամբ Բիւզանդիոն առ Վասիլ Կայսրն Յունաց. որի հետ, Դաշնադրութեան պայմաններ կազմելով՝ կտաս մեր այս ողորմելի Վասպուրական Թիմս աշխարհս՝ հանդերձ գաւառներով, որի փոխարէնը գիտեմ որ կբարեհաճի տալ մեզ. Սեբաստիայ հռչակաւոր քաղաքը իւր շրջականներով. որը, այնքան հեռու չէ մեր հայրենիքից. ո՛ւրեմն մեր կողմից Դաշնադրութեան պայմանը, գնացէք Դիւանատան մէջ գրեցէ՛ք՝ որ հանդերձ եպիսկոպոսներով՝ 3000 ազատաց ցեղերով՝ 300 ջորիով բարձած գանձերով՝ և

1000 ձիաւոր Տաճկիններով ուղարկումենք. և շուտով բերէք որ ստորագրեմ, ու յետոյ ուղարկենք։

ՇԱՊՈՒՀ։

Շատ բարի Տէր Արքայ։ (Շապուհի հետ գնումեն և Ատոմ ու Արտաւազդը)։

## ՏԵՍԻԼ Բ.

## ՍԵՆԵՔԵՐԻՄ, ՍԻՍԱԿ ԵՒ ԴԱՒԻԹ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Իսկ դու, Սիսակ զօրավո՛ր որդեա՛կ նախ՝ շտապի ծանուցանելու փոքրիկ նամակաւ մեր Եպիսկոպոսաց՝ որ երբ տեսնեն մեր զօրաց բազմութիւնը՝ պատրաստ լինեն ճանապարհ գնալու. յետոյ գնա՛ ամենայն զօրքերը կարգի դի՛ր, և հրամայի՛ր որ ճանապարհի պատրաստութիւններն տեսնեն. և այս բոլորը կատարելուց յետոյ՝ հրամայի՛ր գան քեզ հետ պալատս, որ այս տեղից փառաւոր կերպով Թագաժառանգ որդուս ճանապարհ ձգենք։

ՍԻՍԱԿ։

Պատրա՛ստ եմ այս վայրկենիս կատարելու Վեհափառ Տէր։ (Գնումէ)։

## ՏԵՍԻԼ Գ.

## ՍԵՆԵՔԵՐԻՄ ԵՒ ԴԱՒԻԹ,

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Այժմ բոլոր բաները պատրաստ կլինի որդեա՛կ իմ Դաւիթ. և քեզ շուտով ճանապարհ կձգենք Աստուծոյ յաջողու-



թեամբը առ Յունաց Կայսրն. բայց լա՛ւ նայիր պարծանքդ Վասպուրականիս. որ զգուշութեամբ շարժես ամեն մի քայլդ մէջ. որովհետև ամբողջ զօրքը և զօրապետքը քեզ են նայում. լա՛ւ ճանաչիր որ զօրքիդ բոլո՛ր պակասութիւնները քե՛զ է վերաբերում։

## ՏԵՍԻԼ Դ.

(Մտնումեն Շապուհ, Ատոմ և Արտաւազդ. նամակը Շապուհի ձեռին է. գրած պատրաստ և ծրարի մէջ դրած մնայ տալու կնքելու։)

## ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ, ԱՏՈՄ ԵՒ ԱՊՈՒՍԱՀԼ։

ՇԱՊՈՒՀ։

Ահա՛ Տէր Արքայ պատրաստ է նամակը։ (Տալիս է)։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

(Առնումէ նամակը և երբ հաւանեալ է անուն, յետոյ տալումէ) Ուրեմն տուէք գրիչը որ ստորագրեմ. (Ստորագրումէ) Առէք և կնքեցէք։

ՇԱՊՈՒՀ։ (Կնքումէ)։

Բոլորովին պատրաստ է Տէր իմ։

## ՏԵՍԻԼ Ե.

(Մտնումեն Սիսակ և զօրքերը)։

## ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ, ԱՏՈՄ ԱՊՈՒՍԱՀԼ ՍԻՅԱԿ, ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ։

ՍԻՍԱԿ։

Բոլոր հրամաններդ պատրա՛ստ են Տէր Արքայ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Մեծ հազարապետդ իմ Շապո՛ւհ, յայտնի լինի քեզ՝ որ դո՛ւ ես միայն գնաս անշուշտ գահաժառանգ որդւոյս Դաւթի հետ Բիւզանդիոն. որ՝ թէ՛ ճանապարհին և թէ՛ Յունաստանի մէջ, նայես նորա վերայ իբրև գթառատ հայր. որովհետև քեզ ինչպէս յայտնի է նա՝ այդպէս երկար ճանապարհ երբէ՛ք չէ գնացել. ուրեմն պա՛րտես որ մօտիցն բնաւ չհեռանաս։

ՇԱՊՈՒՀ։

Պատրա՛ստ եմ կատարելու Ձեր վեհ հրամանները։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Քա՛ջ և պատուական զօրականք իմ. ահա՛ այսօր ուղարկում եմ Ձեզ հետ իմ թագաժառանգ որդի Դաւթին. որ գնաք Յունաստան Բիւզանդիոն մայրաքաղաքը. որի մասին գիտե՛մ անշուշտ յայտնի է Ձեզ. և մի քանի օր մնալուց յետոյ կրկին կվերադառնաք. միմիա՛յն զգո՛յշ կացէ՛ք ամենայն քայլափոխում որ մի՛ գուցէ մի վնաս պատահի Ձեր ամեն մէկին. ուրեմն բարի՛ ճանապարհ, Աստուած Ձեզ հետ։ (Դառնալով առ Դաւիթ։) Իսկ դու գահաժառանգդ իմ Դաւի՛թ, երբ կհասնես Բիւզանդիոն, մեր բոլոր պալատի կողմից սիրտ բարեկամական ողջոյն տալով Վասիլ Կայսրին. կտաս ահա՛ այս դաշնադրութեան նամակը (Տալիս է) և կասես որ՝ այն բարեկամական ան-



կեղծ սէրը որ ունիք իմ արքայիս հետ՝ նոյնը ունեցէ՛ք և ինձ թագաժառանգիս հետ նոյն նոյն, և այս բոլոր դէպքերում զգո՛յշ կաց որ միշտ վեհա՛նձն, ծա՛նր և խոհե՛մ ընթացքով շարժես և խօսես. և համաձայն մեր դաշնադրութեան նամակին և մտքին՝ մի բարեկամական դաշինք կհաստատէք Ձեր մէջ։ Ուրե՛մն յանձնելով քեզ ևս Աստուածային խնամոցը՝ կ՚բարեմաղթեմ բարի՛ ճանապարհ և դարձ։

ԶՕՐԱԿԱՆՔ։

(Երգում են ըստ եղանակին ,,Մնայէս բարեաւ սէր իմ սէր,,)

Այս ի՞նչ օր է, և ի՛նչ ժամ,
Որ փոխանակ քաջ կռուի
Գնումենք մենք Յունաստան,
Բարձած, զանձով և զօրքով։
Մենք գնումենք սուսերով,
Թագաժառանգ քաջ Դաւթով,
Եւ քաջ արի զօրքերով՝
Տող մեր Հայոց աշխարհը։
Ա՛խ հայրենիք հայրենիք,
Ի՞նչ օրերէ տեսնումենք՝
Վա՜յ մեր աչքին և կեանքին,
Որ մեր կամքով փոխումենք։
Բայց մեր կամքը սրտով չի՛
Ընծայացեալ եմք տալիս,
Ո՜հ, մի՛ ողբար, թէ և ուշ՝
Դարձեալ, կգամք քո գիրկը։
Մնաս բարեաւ Տէ՛ր արքայ,
Ահա՛ գնումենք ճանապարհ,

*Խաստատ եղէ՛ք մեզ վերայ՝*
*Միշտ քաջ սրտով պատրաստենք։*
(Վարագոյրը իջնում է)։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

*Տեսարանն է Յունաց պալատը Բիւզանդիոնում, որը ամենայն շքեղութեամբ զարդարած է հանդերձ գրասեղանով, որի վերայ կարգաւ դրուածեն, թուղթ, գրիչ, կաղամար և զանգակ։ Գահի վերայ բազմած է Վասիլ Կայսրը։ Վարագոյրը բացուելուն պէս ասում է։*

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

### ՎԱՍԻԼ (Առանձին)

ՎԱՍԻԼ։

*Անցեալ աշնան մի գեղեցիկ պարզ երեկոյ, երևեցաւ յանկարծ մի մեծ աստղ՝ որ կրակի նման բոցով վառվում էր. որից քանի մի օր յետոյ՝ սաստիկ շարժ եղև ամենայն պետութեանց մէջ, և շա՜տ վնասներ տուեց. վերջապէս ես այքան ժամանակ միշտ մտածելով կասկածումեմ այն զարհուրելի աստղից, որ վատթար նշան էր երևում. պէ՛տքէ այսպիսի դէպքերում միշտ զգո՛յշ մնալ. որ մեր ամե՛ն զօրքերը, կարգի լինին և պատրաստ. որ մի՛ գուցէ յանկարծ տէրութիւններից մեզ վերայ յարձակուեն, երբ մենք միամիտ նստած կլինենք. ուրեմն պէ՛տքէ տեղեկանալ մեր զօրաց համար կանչեմ այստեղ Ռոմանոս հազարապետին և տեղեկանամ զօրքի դրութիւնից։*
(Զանգակը հնչում է)։



## ՏԵՍԻԼ Բ. (Մտնում է Կոստանդ)։

### ՎԱՍԻԼ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ։

ԿՈՍՏԱՆԴ։

*Ի՞նչ կհրամայէք Տէր իմ։*

ՎԱՍԻԼ։

*Կոստա՛նդ այս րոպէիս հրաւիրիր այստեղ Ռոմանոս հազարապետին։*

ԿՈՍՏԱՆԴ։

*Շա՛տ բարի, Վեհափառ Տէ՛ր։* (Գնում է)։

## ՏԵՍԻԼ Գ.

### ՎԱՍԻԼ։ (Առանձին)։

ՎԱՍԻԼ։

*Պէ՛տքէ պատուիրեմ նոյնպէս, որ մեր տէրութեան սահմանները ամրացնեն։*

## ՏԵՍԻԼ Դ։ (Մտնումեն Կոստանդ և Ռոմանոս)։

### ՎԱՍԻԼ, ԿՈՍՏԱՆԴ, ԵՒ ՌՈՄԱՆՈՍ։

ՌՈՄԱՆՈՍ։

*Ողջո՜յն Ձեզ Վեհափառ և ամենաողորմած Արքայ։*

ՎԱՍԻԼ:

Ռոմանոս իմ քա՛ջ հազարապետ. ես կամենումեմ քեզ հետ խօսել այսօր մեր երկրի զօրաց, կարգի՝ և դրութեանց վերայ. որովհետև ես բաւականին շփոթվումեմ, երբ միտքս գալիս այն կրակի նման բոցավառ աստղի երևալը. ո՞վ գիտէ, կարելի է անշուշտ տէրութեանց վերայ մեծանցից փորձանք գայ. վասնորոյ մենք ևս ի նկատի պէ՛տք ունենանք այս բոլորը. արդե՛օք, ի՞նչպէս են, կարգի դրուա՞ծեն մեր զօրքերը. կամ պատրա՞ստեն. և կամ արդեօ՛ք մեր տէրութեան սահմանները ամրացրա՞ծ են, թէ՛ ոչ:

ՌԱՄԱՆՈՍ:

Այո՛ Տէր արքա՛յ բոլոր զօրականքը կարգի դրուած պատրաստեն. և մեր սահմանները ամրացրածեն. այս մասին միամիտ և անհո՛գ եղէք:

ՏԵՍԻԼ Ե. (Մտնում պալատական Միխայէլը:)

## ՎԱՍԻԼ, ԿՈՍՏԱՆԴ, ՌԱՄԱՆՈՍ, ԵՒ ՄԻԽԱՅԷԼ:

ՄԻԽԱՅԷԼ:

Վեհափա՛ռ Տէր, այս րոպէիս լուր հասաւ մեր տէրութեանը՝ որ Վասպուրականի Հայոց Սենեքերիմ թագաւորի որդին՝ Թագաժառանգ Դաւիթը, գալիսէ մեծ բազմութեամբ Վեհափառութեանդ հետ բարեկամական դաշինք դնելու. և այսօր իսկ, կմանէ Մայրաքաղաք:



ՎԱՍԻԼ: (Զարմանալով):

Հաստա՞տ գիտես:

ՄԻԽԱՅԷԼ:

Այո՛, ինչպէս չէ՛ նոցանից իսկ մի դեսպան եկաւ ինձ մօտ. և ասումէր որ փոքր միջոցից յետ՝ կմանեն Մայրաքաղաք:

ՎԱՍԻԼ:

Եթէ այդպէս՝ ուրեմն դո՛ւ Ռոմանոս քաջ հազարապետ, գնա՛ և այս իսկ րոպէիս զօրքերով իմիասին նոցա առաջ. գը-նացէ՛ք և ընդունեցէ՛ք քաղաքից գո՛նէ 15 մղո՛ն հեռաւորութեամբ. և երբ հանդիպէք նորին բարձրութեան՝ մեր կողմից, ինչպէս կարգն է, ողջունեցէ՛ք. իսկ յետոյ՝ իմիասին բազմութեամբ եկէ՛ք փառաւորապէս:

ՌԱՄԱՆՈՍ:

Շատ բարի Վեհափա՛ռ Տէր: (Գնում):

ՏԵՍԻԼ Զ.

## ՎԱՍԻԼ, ՄԻԽԱՅԷԼ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ:

ՎԱՍԻԼ:

Քա՛ջ պալատականդ իմ Միխայէլ. գնա՛ շուտով և դու՛ պատրաստի՛ր պալատիս մէջ այն արքայավայել գեղեցիկ սենեակը, ամենայն փառաւորութեամբ և շքեղութեամբ. նմանապէս նորա զօրապետաց և զօրականաց համար՝ ամե՛ն մի պատրաստութիւնները հոգա՛յ և կարգի դի՛ր. որ յետոյ չամաչենք, ո-

րովհետև Հայոց տէրութիւնը շատ պատուասէր է և հիւրասէր. որ մինչև անգամ՝ ո՛չ մի բան չէն խնայում իրենց հիւրերի համար. նա՛ մանաւանդ՝ արքայազն Թագաժառանգ հիւրի։

ՄԻԽԱՅԷԼ։

Անհոգ կացէ՛ք Տէր արքայ, որ ամէն բանը կփառաւորացընեն Ձեր Վ․եհափառ անունը։ (Գնում է)։

## ՏԵՍԻԼ Է․

## ՎԱՍԻԼ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ։

ՎԱՍԻԼ։

Իսկ դու Կոստա՛նդ, արի՛ սպասաւորդ իմ, գնա՛ փութապէս հրաւիրիր այստեղ Զմշկիկ արքունական գանձապետին և Դեմեսկլոս քաղաքապետին. յետոյ սկսիր քո սպասաւորութեան ամենայն բաները պատրաստի ունենալ․ զգո՛յշ կաց Կոստա՛նդ, որ ե՞րբ, և ի՞նչ ժամանակ անշուշտ պէտք լինիս Թագաժառանգի մօտ. մտածեցէ՛ք բոլորդ, որ մեր Յունաստանի անունը՝ դուք պիտի բարձրացնէ՛ք ձեր այդ հաւատարիմ և մաքուր ծառայութեամբ։

ԿՈՍՏԱՆԴ։

Պատրա՛ստեմք խնկութեամբ կատարելու, Ձեր ամէն մի հրամանը Վ․եհափա՛ռ արքայ։ (Գնում է)։



## ՏԵՍԻԼ Ը․

## ՎԱՍԻԼ։ (Առանձին)

ՎԱՍԻԼ։

Արդեօ՛ք այս Թագաժառանգի գալն ի՞նչ բարեկամական դաշնադրութիւն պիտի լինի. . (Մտնէ գալիս Տռամէնով,) երևի՛ մեր, Յունաց և Հայոց՝ երկու տէրութեանց մէջ, պատերազմի միութեան դաշինք հիմնելու համար լինի. որովհետև, ես ժառանգ չունիմ՝ որ կարծի՛ք տանեմ Թէ խնամութեան համար լինի սորա գալն. ուրե՛մն անշուշտ միմեանց օգնութեան համար պիտի լինի։

## ՏԵՍԻԼ Թ․ (Մտնում են Զմշկիկ և Դեմեսկլոս)

## ՎԱՍԻԼ, ԶՄՇԿԻԿ, ԵՒ ԴԵՄԵՍԿԼՈՍ։

ԶՄՇԿԻԿ, ԴԵՄԵՍԿԼՈՍ։ (Ի միասին)։

Ի՞նչ կհրամայէ՛ք Վ․եհափա՛ռ արքայ։

ՎԱՍԻԼ։

Հաւատարիմ գանձապետդ իմ Զմշկիկ. որովհետև դեսպանութեամբ իմացանք՝ որ այսօր իսկ մօտ պէտք գործի մայրաքաղաքս, Հայոց Վ․ասպուրականի, Սենեքերիմ Թագաւորի որդին Թագաժառանգ Դաւիթը. վասնորոյ արդէն հրամայելեմ որ ամենայն հարկաւոր պատրաստութիւններն հոգան. իսկ դո՛ւ՝ հաւատարիմդ Յունաստանի, վե՛րառ արքունի գանձարանից բաւականաչափ ոսկի և արծաթ՝ և պատրա՛ստ կաց ամենայն

զգուշութեամբ. որ երբ Նորին բարձրութիւնը կսկսի մտնի քաղաքիս սահմանը՝ յայնժամ, նոյն վայրկեանին, շտապի՛ր քո օգնականի հետ՝ երկու կողմից ցանել նորա ոտքերի տակ ոսկի և արծաթ. որ թո՛ղ Նորին բարձրութիւնը, ոտնակոխ տալով գանձը՝ գայ հասնի Ս. Սոֆի մայր եկեղեցին. որտեղ կլինեմ և ես. ու այն տեղից ինձ հետ ի միասին կգանք պալատս։

ԶՄՇԿԻԿ:

Շա՛տ բարի, ամենաողորմած արքայ. այս րոպէիս պատրաստ կլինեն Ձեր վեհ հրամանները։ (Գնում է)։

## ՏԵՍԻԼ Ժ.

## ՎԱՍԻԼ ԵՒ ԴԵՄԵՍԿՂՈՍ

ՎԱՍԻԼ:

Իսկ դո՛ւ՝ խոհեմ և ազնիւ քաղաքապետդ իմ Դեմեսկղոս՝ շտապի՛ր մայրաքաղաքիս մէջ յայտարարութիւն ցրուել. որ ամե՛ն մարդ ազատաց և անազատաց, թէ՛ այր՝ թէ՛ կին՝ առհասարակ ընդ առաջ գնան Նորին բարձրութեան, մինչև Մայրաքաղաքիս սահմանը. և իրենց փողոցները, և շուկաները՝ լա՛ւ մաքրեն ու զարդարեն ամենայն գեղեցկութեամբ. յայտնի՛ր նոյնպէս ազատաց՝ որ մե՜ծ սէր ցոյց տան Նորին բարձրութեան։

ԴԵՄԵՍԿՂՈՍ:

Ամենայն փառաւորութեամբ, բոլո՛ր Ձեր հրամանները՝ պատրաստ կլինի այս ժամիս մէջ Վեհափա՛ռ Տէր։ (Գնում է)։



## ՏԵՍԻԼ ԺԱ.

## ՎԱՍԻԼ. (Առանձին)։

ՎԱՍԻԼ:

Շա՛տ ուրախ եմ, որ այժմ ամե՛ն բան պատրաստ կլինին. ու շուտով կարժանանանք միմեանց տեսութեան. բայց այս մեր տեսութիւնը՝ մե՜ծ ուրախութիւն պէ՛տք է լինի ամբողջ Յունաստանիս համար. որովհետև բարեկամութեան դաշնադրութիւն է. առաջինը՝ նորա համար որ, պատերազմների մէջ մեր զօրքը շա՛տ անգամ տկարանումեն. երկրորդ՝ մեծ պատերազմների համար շա՛տ անգամ-կարօտութիւն ենք ունենում զօրքի. բայց որովհետև Հայերը լինելով, նախ՝ քա՛ջ, հսկայք, ուժեղ, և արինարբու թշնամեաց. երկրորդ՝ որ Հայերը բազմաթիւ են, և շատ ազնուութեամբ բարեկամութիւն են անում իրենց բարեկամներին. ո՛րքա՜ն երջանի՜կ է այս օրս, թէ՛ Յունաց համար՝ և թէ՛ Հայոց. նորա համար որ՝ մե՛նք եւ նոցա զօրք կըտանք, պատերազմի հարկաւոր եղած ժամանակին. ո՛րքան որ ուզեն։

## ՏԵՍԻԼ ԺԲ. (Միխայէլը մտնում է։)

## ՎԱՍԻԼ ԵՒ ՄԻԽԱՅԷԼ։

ՄԻԽԱՅԷԼ:

Օգոստափա՛ռ Տէր, Ձեր բոլոր հրամանները արդէն պատրաստուեցան. մայրաքաղաքս իւր շքեղ պատրաստութեամբ՝ ըն-

զըրցումէ. ժողովո՛ւրդը արդէն սկսումեն գնալ ընդ առաջ, նորին բարձրութեան. որովհետև արդէն համարեա մօտ են մայրաքաղաքիս սահմանին. բոլոր հոգևորակա՛նք ժողովուած են Ս. Սոփի մայր Եկեղեցու մէջ. Եկեղեցին փառաւոր կերպով զարդարուած է. ուր սպասումեն Վսեհափառութեանդ այցելութեան և վեհ հրամանին:

ՎԱՍԻԼ:

Ուրեմն մենք շտապե՛նք գնալու:

ՄԻԽԱՅԷԼ:

Այո՛ ամենաողորմած Արքայ՝ եթէ բարեհաճէք:

ՎԱՍԻԼ: (Զանգակով կանչումէ):

Ի՛նչպէս չէ, թո՛ղ Կոստանդը գայ սենեակս, մի քանի բաներ պետքէ ասեմ, ու յետոյ գնանք:

## ՏԵՍԻԼ ԺԳ.

## ՎԱՍԻԼ, ՄԻԽԱՅԷԼ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ:

ԿՈՍՏԱՆԴ:

Ի՞նչ կհրամայէք Տէր արքայ:

ՎԱՍԻԼ:

Այժմ, ես գնումեմ Սուրբ Սոփի մայր եկեղեցին. այնտեղ պետքէ ընդունենք Թագաժառանգին, իսկ դու Կոստա՛նդ գո՛նէ կա՛ց, որ պալատիս մէջ ամենայն հարկաւոր բաները պատրա՛ստ լինելին ինչ որ պահանջումէ. նա մնալու՛նդ այս իմ սենեկիս մէջ. որովհետև Թագաժառանգի հետ, մեծ բազմութեամբ պալատս պիտի գանք: (Գնումեն):



## ՏԵՍԻԼ ԺԴ.

## ԿՈՍՏԱՆԴ (Առանձին):

ԿՈՍՏԱՆԴ:

(Ճանապարհ ձգելուց յետոյ՝ նայում է իւր չորս կողմը, և ասում է հազալով): Գոհութի՛ւն Աստուծոյ, որ իմ սպասաւորութեան ամեն հարկաւոր բաները պատրաստել եմ, այժմ մնումէ սենեկիս մէջ միւս բաները հոգալ. որ շուտով կգան պալատս. (դիմելով ճանապարհւում է ներս) այստե՛ղ հարկաւոր է Թագաժառանգի համար՝ արքայավայել գահ. այստեղ ևս հարկաւո՛ր է նորա քաջերի համար երկու աթոռ. ուրե՛մն գնամ բերեմ. բայց արքայասենեակս՝ առանց սպասաւորի անկարելի է թողնել. վաճորդ կանչե՛մ պալատից իմ զինուորներից մինը, որ գայ պահապան լինի. (կանչումէ) զինուո՛ր:

## ՏԵՍԻԼ ԺԵ.

## ԿՈՍՏԱՆԴ ԵՒ ԶԻՆՈՒՈՐ:

ԶԻՆՈՒՈՐ:

Ի՞նչ կհրամայէ՛ք:

ԿՈՍՏԱՆԴ:

Այստեղ զգուշութեամբ նայի՛ր մինչև ես գամ: (Գնումէ):

## ՏԵՍԻԼ ԺԶ.

### ԶԻՆՈՒՈՐ (Առանձին):

ԶԻՆՈՒՈՐ:

(Կամաց, կամաց վախվխելով առաջ է գալիս, և յետ դարձնալով զարմացմամբ նայում է Թագաւորի գահին, գեղեցկութեան, զարդարանքին և ուրիշ բաներին նայելով): Փա՛ռք քեզ Աստուած, ի՞նչ լաւ բան է Թագաւորութիւնը: (Պտտելով շուրջերը) Երանի՜ նորան՝ ո՛վ որ Թագաւոր է. Թէ՛ և ասումեն, որ Թագաւորի բանն էլ շա՛տ դժուար է. բայց ի՛նչ և լինէ՝ մե՛նք մեր երազումն անգամ չենք կարող տեսնել այսպիսի հրաշալի զարդարանքներ, . . . . այս ի՞նչպէս զարդարած գա՛հ է, բոլո՛րը ոսկո՜վ և անգի՛ն քարերով զեղեցկացրած է . . . . : Ա՜հ, (Պտտելով շուրջերը) գնա՛մ տեղս կանգնեմ, Թէ՛ չէ յանկարծ կգան կտեսնեն, ու ինձ մի օրը կցցե՛ն՝ որ ես ինքս ինձ կմոռանամ. ու այն ժամանակը՝ այս զինուորութեանս էլ երնէկ կտամ բայց ձեռս չի գալ: (Գնում ուղղվում իւր տեղը):

## ՏԵՍԻԼ ԺԷ.

### ԶԻՆՈՒՈՐ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ:

ԿՈՍՏԱՆԴ:

(Մտնում Կոստանդ՝ մի զարդարած գահ բերելով. Որին չորսից մահուդ կպցրած, որը դնում Թագաւորի գահի հանդէպը առնելով):

Այս էլ այ՛սպէս:



ԶԻՆՈՒՈՐԸ: (Նոր գահը տեսնելուն պէս՝ սկսում գլուխը շարժել զարմացման չիմանալ ոչինչ պատճառը):

ԿՈՍՏԱՆԴ:

Զինուո՛ր, այստեղ՝ (Ցոյց տալով դատարկ տեղը), 2 աթոռ եմ դնել, վեր ա՛ռ բեր:

ԶԻՆՈՒՈՐ:

Շա՛տ բարի, իմ պարոն, (Գնում է որ բերի):

## ՏԵՍԻԼ ԺԸ.

### ԿՈՍՏԱՆԴ (Առանձին):

ԿՈՍՏԱՆԴ:

(Մտնէ գալիս, մերթ առ մերթ կանգնելով և խորհրդաւորութեան վերայ մտածելով առնում): Ահա՛ այն 2 աթոռներն էլ այստեղ կշարեմ ու բանս կվերջացնեմ:

## ՏԵՍԻԼ ԺԹ.

### ԿՈՍՏԱՆԴ ԵՒ ԶԻՆՈՒՈՐ:

(Մտնում զինուորը, բերելով 2 աթոռ):

ԿՈՍՏԱՆԴ:

Շուտ արա՛, շո՛ւտ: (Առնում է և խորհրդածում):

ԶԻՆՈՒՈՐ:

Ահա՛ տեղաւորե՛ք:

ԿՈՍՏԱՆԴ։

Ուրեմն դու գնա՛ քո բանին։ (Զինուորը գնում է)։

## ՏԵՍԻԼ Ի.

### ԿՈՍՏԱՆԴ (Առանձին)։

ԿՈՍՏԱՆԴ։

Այժմ կը գո՛յշ մնամ, որ յանկարծ հիմայ կմտնեն պալատս. որովհետև լսեցի որ արդէն՝ մտել է նորին բարձրութիւնը մայրաքաղաքս. ափսո՜ս որ ես այս հանդէսին ներկայ չգտնուեցի. այսպէս պատրաստութի՜ւն երբէ՛ք օտար թագաւորութեանց համար՝ չէ՜ր տեսել մայրաքաղաքս. այսօ՛ր առաւօտուանից մինչև այժմ, ամբողջ քաղաքս գլրգում է . . . (ականջ դնելով լսում է ձայն) ահա՛ (զարմացմամբ) ոտների ձա՛յն է գալիս. ուրե՛մն, քաշուեմ մի անկիւնում կանգնեմ։ (Քաշւում է անկիւնը)։ Լսւում են ոտների ձայներ)։

## ՏԵՍԻԼ ԻԱ. (Մի վայրկեանից յետ մտնում են)։

### ՎԱՍԻԼ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ, ՌԱՄԱՆՈՍ, ԶՄՇԱԿԻԿ, ՄԻԽԱՅԷԼ, ԴԵՄԵՍԿԼՈՍ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ։

ՎԱՍԻԼ։

(Դուռնէն ներս քաշուելով մտնում են)։ Ահա՛ մեր արքայական սենեակը, որը՝ խորի՜ն յարգանքով, և ամենաջե՜րմ բարեկամութեա՛մբ՝ ընդունում է Ձերոյին բարձրութեան. բարեհաճեցէ՛ք նստել ուրեմն։



ԴԱՒԻԹ։

(Նստելով)։ Բաղդաւո՛ր եմ համարում ինձ՝ որ արժանանում եմ, տեսնել ամենազօրման Վեհափառութեանդ սուրբ գահը։

ՎԱՍԻԼ։

Այժմ հարցանենք մեր սիրեցեալ՝ Սենեքերիմ Թագաւորի առողջութիւնը. արդեօ՛ք ի՞նչպէս է, լա՞ւ է։

ԴԱՒԻԹ։

Փառք Աստուծոյ, ողջ է և առողջ. շա՛տ կարօտով բարև էր մատուցանում Ձերոյին Վեհափառութեան, (հանում է ծոցից նամակը) ուղարկելով Ձերոյին Կայսրութեան՝ այս դաշնադրութեան բարեկամական նամակը. (տալով) ընդունեցէք ուրե՛մն Ամենազօրման Տէ՛ր, և խնդրեմ կարդացէք, ու բարեհաճեցէ՛ք մեզ հետ, մի աւելի սերտ բարեկամական՝ դաշինք դնել մեր մէջ։

ՎԱՍԻԼ։

Շա՛տ ուրախ եմ որ Սենեքերիմ Թագաւորը՝ մեզ երբէ՛ք չի մոռանում. նա մանաւա՛նդ՝ կամենում է մեզ հետ, մի աւելի բարեկամական դաշինք հաստատել. ուրեմն խնդրում եմ գահաժառանգ Տէ՛ր, բարեհաճեցէք գնալ հանգստանալու՝ Ձեզ համար պատրաստուած պալատս արքայական սենեկի մէջ. որովհետև երկար ճանապարհ գալով՝ անշ՛ուշտ բաւականին դադարած լինէք. նոյնպէս հրամայեցէ՛ք Ձեր զօրքերին, որ և նոքա գնա՛ն հանգստանալու իրենց համար պատրաստուած տեղերը. իսկ մե՛նք, կկարդանք այս նամակը. և ինչ որ կարելի՛ն է՝ անելու՝ կը կարգադրեմք. և Ձեզ կհրաւիրեմք այստեղ մեր դաշինքը ի միասին հաստատելու։

ԴԱՒԻԹ: (Գոռալով):

Շա՛տ բարի, ուրեմն առ այժմ մնաք բարեաւ Վսեհափառ տէրքս:

ՎԱՍԻԼ:

Գնաք բարեաւ Թագաժառանգ Տէ՛ր. (Դէպի Կոստանդ, Միխայէլ և Գէորգէոս) գնացէք ուրեմն Նորին Բարձրութեան հետ, և ալքայական պատուով հանգստացրէք: (Գնում են բոլորը չորսը):

## ՏԵՍԻԼ ԻԲ.

## ՎԱՍԻԼ, ՌՈՄԱՆՈՍ ԵՒ ԶՄՇԿԻԿ:

ՎԱՍԻԼ:

Ռոմանո՛ս իմ քաջ հազարապետ. և դու հաւատարիմդ իմ գանձապետ Զմշկիկ. նստեցէ՛ք, որ ահա՛ բանանք այս նամակը և ի միասին խորհրդածենք: (Սկսում է կարդալ նոր՝ երեսն, հայեցն): «Առ Վսեհափառ Տէր՝ Ամենաողորմած Վասիլ Կայսր «Յունաց: Ի Բիւզանդիոն Մայրաքաղաքն. Արքունական «պալատն Յունաստանի». (Յետոյ բաց է անում նամակը):

«Վասպուրական աշխարհի Սեննեքերիմ Հայոց Արքայից «բարեկամական ողջոյն. առ Ամենաողորմած Վասիլ Կայսրն «Յունաստանի»:

"ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ"

«Որովհետև աշխարհիս մէջ շա՜տ անգամ ամե՛ն կառավա«րութիւնք՝ և ամե՛ն պետութիւնք, ենթարկվումեն բաղդի յա«ջողութեան բերմունքին. վասնորոյ՝ և Վասպուրականիս Հա-



«յաստան աշխարհը, մինչև այժմս բաղդի բերմունքի մէջ լի«նելով՝ խնդումէր և զուարճանում. որ ուրախութի՛ւն էր ա«մե՛ն մի մեծ Քրիստոնեայ պետութեանց, կարծեմ և Ձե«րոյին պետութեանը. բայց այժմ բաղդի բերմունքը դառնա«լով՝ արդէն ամենա՛յն կողմից մեզ վրայ են յարձակուել, ա՛յն «արենարբու Մուղալ Թաթարներն. և որո՛նք՝ անխնայ թա«փելեն բոլոր մեր գիւղերի և քաղաքների վրայ. թէ՛ և՝ քա«նի՜ցս անգամ յաղթանակաւ ցրուեցինք նոցա . . . բայց տես«նումենք վերջ չպիտի լինի այս մեր յաղթութեանը. որովհե«տև, նոցա զօրքերը փոխանակ պակասելու՝ օ՛ր օրի վերայ՝ ա«մենայն կողմից աւելանումեն. և այժմ Հայաստան աշխար«հըս ծփումէ անհանգստութեա՜ն Ովկիանոսի մէջ . . . վասնո«րոյ շա՜տ խորհրդածութիւնից յետոյ՝ Թագաւորական պա«լատս, Ինձ հետ ի միասին, իւր խորհրդականներով և քաջե«րով՝ յարմար դատեցի՛նք որ յանձնենք, Ձերոյին Վսեհափա«ռութեան խնամակալութեան տակ. որ և՝ ահա՛ առաքելով «իմ Թագաժառանգ որդին Դաւիթ՝ Թագաւորական իշխա«նութեամբ. հանդերձ Եպիսկոպոսներով. 3000 ազատաց ցե«ղերով. 300 ջորիով բարձած գանձով. և 1000 ձիաւոր Տա«ճիկներով. ու պէս պէս պատրաստութեամբ. առաջարկելով «հանդերձ՝ մեր բարեկամական Դաշնադրութիւնը որ՝ Մե՛նք, «Տէրութիւնս Վասպուրական Հայոց աշխարհի, մեր սրտի «կամքով և սիրոյ հաճութեամբ, յանձնումե՛նք Յունաստանի «Կայսրութեան Հոգաբարձութեանը՝ և խնամակալութեան, «ամբողջ Վասպուրական Հայոց Թիմա աշխարհս, իւր «երկոտասան անառիկ բերդերով, 37 գաւառներով, երեւելի և «հռչակաւոր քաղաքներով, չորս հազար չորս հարիւր (4400) «գիւղերով, և այլ ամենայն բաներով, որ կայ՝ մեր այս երկրում.

«բաց ի 115 վանքերից. որո՛նք որ, մշտապէս յարատեւութեամբ
«կա՛ն եւ պիտի մնա՛ն՝ ամենա՜յն ազատութեամբ. որ աղօթարար
«լինին մեզ համար. իսկ այս մեր Տէրութեան փոխարէնը՝
«տուէք մեզ Ձեր հաճութեամբ, Սեբաստիա հռչակաւոր քա-
«ղաքը, իւր բոլոր գաւառներով եւ շրջականերով. որ մենք, եւ մեր
«ապագան՝ հիմնե՛նք մեր Թագաւորական գահը, քանի որ Ձեր
«Խնամակալութեան եւ Հոգաբարձութեան ներքոյ եմք՝ եւ կը
«լինին. ուրե՛մն, Ձեր այդ մեծ Խնամակալութեան Հոգաբար-
«ձութիւնը՝ պիտի լինի, ամենա՜յն բարեկամութեամբ եւ գթու-
«թեա՛մբ. որովհետեւ, մե՛նք այժմ անկարող լինելով՝ դիմումե՛նք
«դէպի Ձեզ վստահութեամբ. յուսալով՝ որ մեզ հետ կըն-
«թանաք ամենա՜յն անկեղծութեամբ՝ եւ խորի՛ն ակնածութեամբ.
«այլ ո՜չ այնպէ՛ս որպէս ընթացան Ձեր նախնիքը:,,

«Որով Մնամ Վեհափառ Տէրութեանդ՝,,

«ԱԶԱԿԻՑ, ՍԵՆՆԵՔԵՐԻՄ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ,,:

«Ի Թագաւորական պալատն Հայոց Վասպուրականի.
«ի Թուին Հայոց՝ 465 (ՆԿԵ) եւ ի Թուին Փրկչի՝ 1021 ա-
«մի, ամսեանն Օգոստոսի 12 ին յԱրճիշանիստ մայրաքաղաքն
«Վան,,:

(Նամակը կարդալու միջոցին. Զոհրէն եւ Ռամանոսն ուշադրութեամբ լսումեն. մէկ՝ յուսահատութեան են ցոյց տալիս, իսկ մէկ՝ խնդութեան):

ՌԱՄԱՆՈՍ:

Ներեցէ՛ք ասել Տէր իմ, որ ես զարմանումեմ Վեհափա-
ռութեանդ վերայ. որ ի՛նչ եւ իսկ՝ մարգարէական հոգի ունէք:

ՎԱՍԻԼ:

Ի՞նչպէս:



ՌԱՄԱՆՈՍ:

Կարծեմ չէ՛ք մոռացել որ միշտ պատմումէի՛ք մեզ, ա՛յն կրա-
կի նման բոցավառ աստղի երեւալը, որ ասումէի՛ք թէ՝ «ան-
շուշտ Տէրութեանց վերայ փորձանք պիտի գայ. կարգի դրէ՛ք
մեր զօրքերը եւ այլն եւ այլն,,: Ահա՛ այսօր կտրդումենք յայտ-
նապէս՝ Մեծութեանդ մարգարէութիւնը, անրա՜ղդ Վասպու-
րականի Հայոց աշխարհի վերայ պատահած. ինչպէս գիտեմ
Սենեքերիմ Թագաւորը՝ խե՛ղճ Հայերը ա՛յն անհաւատ Թա-
թարներից շա՜տ նեղութիւններ են կրել. եւ դեռ այժմ կրումեն:

ԶՄՇԿԻԿ:

Այո՛, Վեհափառ Արքայ, քանի՞ցս անգամ Ձերդ Մեծու-
թիւնը՝ ա՛յսպիսի մարգարէութիւններ է արել. եւ բոլորն էլ
առա՛նց խախտուելու կատարուել են:

ՎԱՍԻԼ:

Այո՛, ես նորա՞ համար էի միշտ չփոթուած մտածում՝ ու
Ձեզ պատուիրում, որ զօրքե՛րը՝ կարգի դրէ՛ք եւ զէնքերը
պատրաստէ՛ք. բայց դո՛ւք, դեռ ոչի՛նչ չէի՛ք մտածում այս մա-
սին, ապա տեսա՞ք. խե՛ղճ Սենեքերիմ Թագաւորի վրայ ի՜նչպէս
են յարձակուել անիրաւները, եւ ի՜նչ զարհուրելի վնասներ են
տուել. որ այժմ անճարութիւնից ստիպուած՝ ողորմելին իւր
բոլո՛ր Վասպուրական Հայոց աշխարհը՝ հանդե՛րձ շրջակայ-
քով եւ ահագին գանձերով, մե՜զ է յանձնում հոգաբարձու-
թեան. եւ բաւականանումէ ստանալ նորա փոխարէն՝ միմիայն մեր
Սեբաստեան իւր գաւառներով. ի՛նչ կարծէ՛ք, որ եթէ Սենեքե-
րիմ Թագաւորը, սկզբից նախազգուշութիւն արա՞ծ լինէր՝ եր-
բէ՛ք նա չէր հասնիլ այսպիսի մի տարապա՛նդ վիճակի:

ՌԱՄԱՆՈՍ։

Ճշմարի՛տ էք համայում Տէ՛ր արքայ։

ԶՄՇԿԻԿ։

Այո՛, և շա՜տ ճշմարիտ։

ՎԱՍԻԼ։

Ուրեմն գնացէ՛ք և որքան կարելի է շուտով գրեցէ՛ք. նախ՝ մեր երկու Տէրութեանց կողմից մի բարեկամական պայմանաւ֊ դաշնադրութիւն. որ թէ՛ ես՝ և թէ՛ արքայորդին Դաւիթը՝ ի միասին ստորագրենք. և ապա՝ մեր կողմից մի բարեկամական դաշնադրութեան նամակ, ա՛ռ Սենեքերիմ արքայն. որ շուտո՛վ ճանապարհ ձգենք դահաժառանգ Դաւթին՝ մեր հռչակաւոր գաւառը Սեբաստիայ. գրեցէ՛ք նաև զանազան հրամաններ և յայտարարութիւններ, համաձա՛յն դաշնադրութեան պայմանին. բոլոր մեր Գաւառապետներին, Քաղաքապետներին, և Զօրապետներին. որ գնա՛ն տիրեն Վասպուրական Հայոց աշխարհը. իսկ նորա փոխարէ՛ն յանձնեն Սենեքերիմ արքային, մեր հռչակաւոր Սեբաստիայ քաղաքը՝ իւր գաւառներով և ամե՛ն շրջակայքով։

ՌԱՄԱՆՈՍ ԶՄՇԿԻԿ (Մեկնին)։

Պատրա՛ստեմք փութով կատարելու Տէր արքայ։ (Առնելով նամակը գնան)։

ՏԵՍԻԼ ԻԳ.

ՎԱՍԻԼ։ (Առանձին)։

ՎԱՍԻԼ։

Վերջապէս մեր Յունաստանը հարստացա՜ւ. . . . բայց



ես բոլորովի՛ն զարմանումեմ այս յաջողութեան վերայ. որովհետև նոքա՛ միմեանց հետ կռուելով՝ զարհուրելի պատերազմ սկսեցին, և մե՜ծ կոտորում տուին միմեանց, և այժմ և՛ս տանջեսեն. իսկ ես, հանգի՛ստ տեղս նստած՝ և առա՛նց մի մարդ սպանուելու՝ ամբո՛ղջ Վասպուրականի (ուրախանալով) Հայաստա՛ն աշխարհին՝ տէ՜ր եղայ. և ահա՛ ստուգվում ա՛յն հասարակաց առածը որ ասում՝ "Աշխատո՛ղն ո՞վ՝ իսկ ուտողն ո՛վ . . . ." ի վերջոյ պէ՛տք է Թագաժառանգի համար՝ պատրաստութիւն տեսնել, որ շուտով ճանապարհ գնան. ուրե՛մն կանչեմ այստեղ Կոստանդին, և հրամայեմ որ ամենա՛յն բան պատրաստեն ի՛նչ որ հարկաւորն է։ (Զանգակով կանչէ)։

ՏԵՍԻԼ ԻԴ.

ՎԱՍԻԼ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ։

ԿՈՍՏԱՆԴ։

Ի՞նչ կհրամայէք Տէ՛ր իմ։

ՎԱՍԻԼ։

Որովհետև շուտով պիտի գնայ Նորին բարձրութիւնը, փանորդ հրամայումե՛մ Ձեզ, որ ճանապարհի բոլո՛ր պատրաստութիւններին՝ հոգացէ՛ք և կարգի դրէ՛ք. եպիսկոպոսներ, զօրքեր, և բաւականին գանձեր՝ պատրաստէ՛ք. նմանապէ՛ս ընտիր և պատուական պարգևներ պատրաստի ունեցէ՛ք. սկսեալ արքայից մինչև յետին մի պնուորի համար. վերջապէս յայտնի՛ր իմ կողմից քաղաքապետ Դիմեսկլոսին, որ ինչպէս փառօ՛ք և պատուօ՛ք ընդունեցին՝ նոյնպէս շքեղութեա՛մբ և ճանապարհ

ձգէն. տե՛ս Կոստանդ, մի՜ գուցէ որ ամենափոքր բա՛ն ևս պակաս լինի:

ԿՈՍՏԱՆԴ:

Ո՛չ, ո՛չ Տէր իմ, ամե՛ն բան պատրաստ կլինին շուտով:

ՎԱՍԻԼ:

Ուրեմն գնա՛, նախ հրաւիրիր այստեղ նորին բարձրութեանը, և ապա՛ սկսի՛ր փութով կատարելու, ինչ որ հրամայեցի:

ԿՈՍՏԱՆԴ:

Շա՛տ բարի Տէր իմ: (Գնում է):

## ՏԵՍԻԼ ԻԵ.

## ՎԱՍԻԼ (Մենակ):

ՎԱՍԻԼ:

Շուտով ամենայն բան պատրաստ կլինի. . . . միայն յետոյ ես ի նկատի պէ՛տք է ունենամ, որ առանձին հրովարտակներ ուղարկեմ, բոլոր մեր սահմանների գաւառապետներին. որ ամենա՛յն կերպ բարեկամութեամբ պատիւ և յա՛րգ ցոյց տան, առ հասարակ Սենեքերիմ թագաւորի թէ՛ պալատի անձանց և թէ՛ նորա ամեն մի զօրականաց և զօրապետաց. որովհետև նորա՛ մեզ աւելի բարեկամ ճանաչելով, իրենց հայրենիքը՝ մեզ նուիրեցին, և ո՛չ օտար այլ տէրութեանց. ուրե՛մն և մենք չըպիտի ապերախտ գտնուենք թէ Աստուծոյ առաջ՝ և թէ նորա. Ես իմ կողմից երդուե՛մ, և երբէք կա՛մք թողնուե՛մ իմ ա-



պագայիս, որ Յունաստանի թագաւորներին պարտակա՛ն են Սենեքերիմի որդւոց՝ մի՛շտ սիրտ բարեկամութեամբ հոգաբարձութիւն անել. (լռելով ոտերի ձայն) բայց ահա՛ ոտերի ձայն է գալիս. երևի գալիսէ նորին բարձրութիւնը: Բայց ինչպէս ուշացըրեցին դաշնագրութիւնը: (Նայում է դուռն):

## ՏԵՍԻԼ ԻԶ.

## ՎԱՍԻԼ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ ԵՒ ՄԻԽԱՅԷԼ:

ԴԱՒԻԹ:

Ողջո՛յն Ձեզ, Վեհափառ Կայսր. ինչպէս էք, լա՞ւ էք:

ՎԱՍԻԼ:

Շա՛տ շնորհակալեմ Թագաժառանգ Տէ՛ր. արդեօք ինչպէս հանգիստ էիք:

ԴԱՒԻԹ:

Վեհափառութեանդ շնորհիւ և ողորմածութեամբը՝ շատ անդորր և հանգիստ էինք:

ՎԱՍԻԼ:

Իսկ դո՛ւ քաջ հզօրապետ Շապուհ, ինչպէս էիր. արդեօ՛ք հանգիստ էիր թէ՛ ոչ:

ՇԱՊՈՒՀ:

Ամենա՛յն շնորհակալութիւն պատրաստեմ մատուցանելու, որ բաւականին հանգիստ էինք Վեհափա՛ռ արքայ:

## ՏԵՍԻԼ ԻԷ. (Մտանեն Ռամանոս և Զմշկիկ ձեռին մի նամակ չուանեղէն բռնած)։

## ՆՈՐԱ՝ ԵՒ ՌԱՄԱՆՈՍ ՈՒ ԶՄՇԿԻԿ.

ՌԱՄԱՆՈՍ ԵՒ ԶՄՇԿԻԿ: (Ներկայացնելով ի միասին նամակները)։

Ահա՛ պատրաստեն Վեհափառ Տէր։

ՎԱՍԻԼ:

Բայց ինչո՞ւ այսքա՛ն ուշացաք։

ՌԱՄԱՆՈՍ։

Հազիւ հազ կարողացանք, բոլորը ի միասին հասցնել Տէ՛ր Արքայ։

ՎԱՍԻԼ։

Տուէ՛ք ուրեմն, նախ՝ դաշնագրութեան պայմանը։

ԶՄՇԿԻԿ։ (Տալով)։

Ահա՛, Վեհափա՛ռ Տէր ընդունեցէ՛ք։

ՎԱՍԻԼ:

Թագաժառանգ Տէ՛ր, ահա՛ մեր երկու տէրութեանց կողմից դաշնագրութեան պայմանը. կբարեհաճէ՞ք կարդալ։

ԴԱՒԻԹ։

Այո, կխնդրեմք Տէ՛ր արքայ։

ՎԱՍԻԼ.

Դո՛ւդ իմ Ռամանոս, ուրեմն ա՛ռ և բարձր կարդա։



ՌԱՄԱՆՈՍ։ (Կարդալով)։

“Վասպուրական աշխարհի Հայոց՝ և Յունաց Կայսրու-
“թեան մէջ՝ Բարեկամական Դաշնագրութիւն„ ։
“Մեք Սենեքերիմ Հայոց Վասպուրական աշխարհի Թա-
“գաւորս, Թագաժառանգս նորին Դաւիթ Արծրունիս. և
“Յունաստանի Կայսրութեան՝ Թագաւոր Կայսր Վասիլս,
“հաստատեցինք մեր մէջ ամենաքաղցր սիրով և համահաճ
“խորհրդովք մի Բարեկամական դաշինք, հետևեալ պայմանաւ.
“Նախ՝ Մեք Սենեքերիմ Վասպուրականի Հայոց աշխարհի
“Թագաւորս՝ և Թագաժառանգս նորին Դաւիթ, համաձայնու-
“թեամբ մեծ հպարտապետին մերոյ Շապհոյ, և այլոց բո-
“լոր ազատաց և անազատաց հաճութեամբ. տալիս ենք Յու-
“նաստանի Վասիլ Կայսրին, ամբողջ մեր Վասպուրական
“Հայոց Թիմա աշխարհը՝ հանդերձ իւր շրջականերով, 37
“գաւառով՝ քաղաքներով, և տեղերով. և և՛ 12 անառիկ բերդովք՝
“4400 գիւղերով, և ամենայն բանով որ կա՛յ այս մեր Թիմա
“աշխարհիս մէջ. բա՛ց ի 115 վանօրէից. որոնք որ մի՛շտ, թէ՛
“այժմ, թէ՛ ապագայում պիտի լինին բոլորովի՛ն ազատ. որ
“աղօթարար լինեն Սենեքերիմիս՝ և իմ որդւո՛ց համար։—Այս
“մեր սրտի հաճութեամբ տալոյ ամենագլխաւոր առիթն ա՛յն
“է՝ որ անհաւատ Մուղալ—Թաթարների բաւական համա-
“րելով այսքա՛ն տանջանքները, և սոսկալի նեղութի՛ւնները. ո-
“րոնց երբէ՛ք առ այժմ վերջ չկայ. ուրեմն տալով Արքային
“Յունաստանի, այս մեր հօչակաւոր և բարեխ երկիրը. յանձ-
“նումե՛նք մեզ Ձեր անկեղծ սրտի խնամակալութեան և հո-
“գաբարձութեան տակ. ապաւինելով մենք՝ վերի՛ն խնամոցն,
“և սորա փոխարէնը՝ տաք մեզ Սեբաստիան իւր շրջականե-
“րով։—Երկրորդ՝ Ես Յունաստանի Կայսր Վասիլս, համաձայ-

"նութեամբ մեծ հազարապետին իմոյ Ռուամանոսի, պալատա-
"կանին իմոյ՝ Միխայլի, Գանձապետին իմոյ՝ Զմշկիկի, և այլոց
"և այլոց, սրտի սիրով՝ ընդունո՛ւմենք վերոյիշեալ պայմանը,
"և որի փոխարէնը՝ քա՛ղցր սիրով տալիս եմք, Սեբաստիայ հըռ-
"չակաւոր քաղաքը՝ իւր գաւառներով և շրջակայքով, և ամե-
"նայն բանով՝ որ կա՛յ այս մեր աշխարհի մէջ. խոստանալով
"համդերձ, բարի՛ խնամածու՝ և Հոգաբարձու լինե՛լ ի վերայ
"ցեղին Սենեքերիմայ. մինչև որդւոց որդիս, թէ՛ ես՝ և թէ՛ իմ
"աթոռակալքս, պարտակա՜ն եմք, ամենա՛յն անկեղծ բարեկամու-
"թեամբ վարուել՝ և պատուել, ինչպէս արքայազն ցեղին՝ նո՛յն-
"պէս և բոլոր զօրաց և զօրապետաց նորին. երդնո՛ւմք, և խոս-
"տովանի՛մք մեր ճշմարիտ և ուղղափառ Դաւանութեամբքս։
"Եւ որ ստորագրեմք իսկական Ձեռամբք մերով,,։

ՎԱՍԻԼ։

Ինչպէս է, հաւանո՞ւմէք դահաժառանգ Տէ՛ր։

ԴԱՒԻԹ։

Այո՛ ինչպէս չէ. իսկ և իսկ մեր ցանկութիւննէ. տուէ՛ք ստորագրեմք։ (Ստորագրում) "Վասպուրականի Հայոց Թա-
"մա աշխարհի Թագաւոր Սենեքերիմ՝ և Թագաժառանգ Նո-
"րին ՚ի միասին, ստորագրեմ Արքայական իշխանութեամբս։
" ԴԱՀԱԺԱՌԱՆԳ ԴԱՒԻԹ ,,։

"Հազարապետ տանն Հայոց Վասպուրականի, և ի կող-
"մանէ բոլոր զօրապետաց՝ ազատաց և անազատաց, ի միասին
"ստորագրեմ ՇԱՊՈՒՀ ,,։
"Յունաստանի Թագաւոր Կայսր ստորագրեմ. ՎԱՍԻԼ ,,։
"Հազարապետ Յունաց. . . . . . . . . . . ՌՈՄԱՆՈՍ ,,
"Գանձապետ Յունաց. . . . . . . . . . . ԶՄՇԿԻԿ ,,։
"Պալատական Յունաց . . . . . . . . . . ՄԻԽԱՅԷԼ ,,։



"Հաստատեցաւ ի Թուին Փրկչի 1021 ին Սեպտեմբերի 16
"ին, Արքունական պալատս Յունաստանի,,։
"Ի Կայսերանիստ մայրաքաղաքն Բիւզանդիոն,,։

ՎԱՍԻԼ։

(Դաշնադրութիւնը ստորագրելոյ յետոյ՝ կրկնում Դաւիթն և համբուրելով միմեանց՝ ասում)։ Ուրե՛մն, շնորհաւո՛ր լինի մեր Դաշնադրութեամբ բարեկամութիւնը։

ԴԱՒԻԹ։

Թող լինի Վեհափա՛ռ արքայ. . . . (Խօսելոյ փաշելով մի կողմը) ա՜խ. . . . . ։

ՎԱՍԻԼ։

Թագաժառանգ Տէ՛ր, որովհետև ես զաւակ չունիմ՝ վասնորոյ ա՛յն րօպէից՝ երբ միմեանց ողջունեցինք Սուրբ Սոփի մայր եկեղեցւոյ մէջ, ընդունելեմ արդէն Ձերոյին Բարձրութեանը՝ ինձ ամենասիրելի որդեգիր. ուրե՛մն այսուհետև իմ մօտ երբէ՛ք օտար չպիտի լինիս. այլ՝ ինչպէս բարեխնամ հօր մօտ. և այսուհետև ի՛նչ ցանկութիւն, կամ ի՛նչ դիտաւորութիւն որ ունենաս՝ կարո՛ղ ես համարձակ, ամենայն վստահութեա՛մբ գըրել ուղղակի ինձ. առանց ո՛րևիցէ մի միջնորդի։

ԴԱՒԻԹ։

Վեհափա՛ռ Տէր, մեծաւ յարգանքով յայտնումեմ իմ խորին շնորհակալութիւնը, որ չափից դուրս ինձ սիրումէք. և ամենամեծ բաղդաւորութի՛ւն եմ համարում ինձ. որ անարժանըս՝ արժանացե՛լ եմ Ձեր սրտի քաղցր համակրութեանը. և որ ընդունուե՛լ եմ Վեհափառութեանդ ամենասիրելի որդեգիր։

ՇԱՊՈՒՀ։ (Առ Դաւիթ)։

Տէ՛ր իմ ներեցէք յայտնելու՝ որ ժամանա՛կ է ուղևորել։

ԴԱՒԻԹ։

Վեհափա՛ռ Տէր, առ հասարակ մե՜նք ա՜յնքան սիրով համակրուած ենք միմեանց՝ որ ո՛րքա՛ն խօսենք՝ այնքա՛ն ևս կ'երկարի մեր խօսակցութիւնը. ուստի միջոցներս սուղ լինելու աղագաւ՝ կամենումենք հրաժարական տալ բարեխնամ Տեառնըդ, և ուղևորել Հայաստան։

ՎԱՍԻԼ։

Այո՛, շատ ու շատ ճշմարի՛տ էք ասում. պէ՛տք է Ձերոյին բարձրութեանը փութով ճանապարհ ձգել։ (Զանգակով կանչում է) Որովհետև բաւականին հեռու ճանապարհ պիտի գնաք։

## ՏԵՍԻԼ ԻԸ. (Մտանում Կոստանդ)։

## ՆՈՔԱ՝ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ։

ԿՈՍՏԱՆԴ։

Ի՞նչ կհրամայէք Վեհափա՛ռ Տէր։

ՎԱՍԻԼ։

Գիտե՛մ, որ արդէն ճանապարհի բոլոր բաները պատրաստուած են. վաղորդ գնա՛ շուտով, մի գունդ ազատաց զօրքերից՝ հրաւիրի՛ր և բեր քեզ հետ պալատս. որ այստեղից իմիասին ճանապարհ ձգենք նորին բարձրութեանը։



ԿՈՍՏԱՆԴ։

Այո՛, բոլոր պատրաստութիւններն վաղուց արդէն հոգացուել են Տէ՛ր իմ. և այս րոպէիս կներկայանան Ձերդ հրամանին համաձայն՝ ազատագնդից մի գունդ զօրք. որո՞նք պատրաստուած են նորին Բարձրութեան Թագաժառանգի հետ ուղևորելու (Գնում է)։

## ՏԵՍԻԼ ԻԹ.

## ՎԱՍԻԼ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ ՌԱՄԱՆՈՍ, ԶՄՇԿԻԿ ԵՒ ՄԻԽԱՅԷԼ։

ՎԱՍԻԼ։

Ուրեմն տո՛ւր ինձ Ռոմանոս իմ քաջ հազարապետ, այն բարեկամական Դաշնադրութեան նամակը՝ որ գրած եմ առ Նորին Մեծութեան Սենեքերիմ Արքային։

ՌԱՄԱՆՈՍ։

(Տալով) Ահա տէր իմ ընդունեցէ՛ք։

ՎԱՍԻԼ։

Ուրեմն առէ՛ք Թագաժառանգ Տէր՝ այս նամակը և տարէք տուէք Ձեր գթառատ Հայր Սենեքերիմ արքային. մատուցանելով հանդերձ Նորին Մեծութեանը, թէ՛ մեր՝ և թէ՛ ամբողջ պալատիս կողմից՝ ամենաջերմ բարեկամական շա՛տ և շա՛տ ողջոյն։

ՌԱՄԱՆՈՍ։

Այո՛, Թագաժառանգ Տէ՛ր, խնդրո՛ւմենք Ձերդ բարձրու-

թիւնից՝ անշո՛ւշտ հաղորդէք Նորին Մեծութեանը, մեր փափականօք ողջոյնը։

ԶՄՇԿԻԿ։

Եւ ես նմանապէս խնդրո՛ւմեմ Թագաժառանգ Տէր, որ արժա՛ն համարէք պատուելու մեզ։

ՄԻԽԱՅԷԼ։

Ամենախոնարհ գլխօք կաղաչէի և ես՝ եթէ միայն բարեհաճէր Ձերդ Բարձրութիւնը, հաղորդել Նորին արքայական Մեծութեան՝ և մե՛ր նուաստութեան կողմից։

ԴԱՒԻԹ։

(Նամակը ձեռքին բռնելով։) Վեհափա՛ռ արքայ՝ ի՛նչ եռանդով, և ի՛նչ սիրով, իմ ողջոյն էք առաքում որ արքայիս՝ նո՛յն գեղեցիկ զգացմունքով սորա հետ՝ (ցոյց տալով նամակը) կնուիրեմ, (դառնալով առ Ոստանոս և Զմշկիկ և Միխայէլ) նո՛յնպէս և վառվռուն քաջերից՝ որ ի՛նչ սիրով և համակրութեամբ ընդունումեմ, նո՛յնը՝ և պիտի հաղորդեմ Նորին Մեծութեանը. այս մասին անհո՛գ կացէք։

## ՏԵՍԻԼ Լ. (Մտնում են զօրականք)։

## ՆՈՐԱ, ԿՈՍՏԱՆԴ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ։

ԴԱՒԻԹ։

(Վեր կենալով)։ Ուրեմն, (բռնում է նրանց ձեռքը) մնացէ՛ք բարեաւ, ցանկանալով Ձեզ ամենայն յաջողութիւն։



ՎԱՍԻԼ։

(Համբուրում են միմեանց)։ Գնա՛ք բարեաւ գահաժառանգ Տէ՛ր։

ԶՕՐԱԿԱՆՔ։

(Բոլորն երգում են. ըստ եղանակին ‘Ողջոյն ընդ քեզ Հայաստան,, երգոյն)։

Խնդա՛ այսօր Յունաստան,
Խնդա՛ և դու Հայաստան.
Որ միմեանց շատ սիրեցիք՝ սէ՛ր, սէր,
Դաշնադրութիւն կազմեցիք։
Դէ՛հ քաջ ընկերք խնդացէ՛ք,
Այս գեղեցիկ օրս՝ յիշէ՛ք.
Այսուհետև սրտա սիրով մի՛շտ, միշտ,
Պէ՛տք է սիրենք Հայերին։
Գութի մէջ սպասումեն,
Մեր միւս քաջերը շարուած.
Իսկ Հայոց զօրքը նոցա դէմ՝ վե՛հ, վեհ,
Իւր քաջերով է կանգնած։
Թո՛ղ կորնչի Սկիւթացին,
Երբ մեզ տեսնի միացած.
Մեր սրերը նոցա դէմ, սո՛ւր, սուր,
Միշտ յաղթութեամբ կ՚փայլէ։
Մնա՛ք բարեաւ Տէ՛ր արքայ,
Մնաս բարեաւ Յունաստան.
((Գնալով) Եկէ՛ք ազնիւ քա՛ջ Հայեր՝ փա՛ռք, փառք,
Մենք գնումենք Հայաստան։

(Վարագոյրը իջնում է)։

# ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

*Տեսարանն՝ է, Հայոց պալատը փոխադրուած Սեբաստիայ. ուրտեղ Թագաժառանգը սպասում է Սենեքերիմ Արքային: Պալատը զարդարուած է նոյն և նման Ա. և Բ. Արարուածի: Վարագոյրը բացուելուն պէս ասում է Դաւիթ:*

## ՏԵՍԻԼ Ա.

### ԴԱՒԻԹ ԵՒ ՇԱՊՈՒՀ:

ԴԱՒԻԹ:

*Ահա՛ հասանք մեր նոր հայրենիքը. և փոխեցինք մեր Վասպուրական աշխարհը Սեբաստիայիս հետ. փոխեցի՛նք նոյնպէս՝ մեր անուշիկ բերդերը և լեռները՝ այս գաւառիս հետ. և վե՛րջապէս մեր Արծրունեաց հայրենի շքեղ պալատը, և Արքայական գա՛հը՝ փոխադրեցինք այստեղ. այժմ պէ՛տք է այս մեր նոր Տէրութեան մէջ ամե՛ն կարգադրութիւններ անել և զարդարել ա՞յնպէս՝ ինչպէս էր, ա՜խ, մեր Հայաստան Վասպուրական աշխարհը . . . է՛հ . . . թողնե՛նք այս մի կողմը. այժմ պիտո՛յ է սպասենք Հօրս արքայի գալստեանը. (Ա- Շապուհ) բայց չգիտեմ, հայրապատիւ քաջդ իմ Շապո՛ւհ արդեօք շուտո՞վ կգայ:*

ՇԱՊՈՒՀ:

*Ինչպէս չէ՛ Թագաժառանգ Տէր, մենք վաղուց է որ սպասում ենք. և արդէն բոլոր զօրքը պատրա՛ստ է Նորին Մեծութեանը փառաւորութեամբ ընդունելու. որովհետև, մենք քանի՛ քանի՛ դեսպաններ ուղարկեցինք, թէ՛ Ճանապարհից՝ և թէ՛ Սեբաստիայից:*



## ՏԵՍԻԼ Բ. (Յանկարծ մտնում է Սիսակը):

### ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ ԵՒ ՍԻՍԱԿ:

ՍԻՍԱԿ:

*Թագաժառանգ Տէ՛ր, ահա՛ այս րոպէիս լուր ստացայ պալատում՝ որ Նորին Արքայական Մեծութիւնը, այս ժամիս մէջ անշո՛ւշտ կը մտնէ նոր մայրաքաղաքս. և արդէն բոլոր զօրքը պատրաստ՝ այս րոպէիս կամենում է մեզ հետ ի միասին ընդ առաջ գնալ:*

ԴԱՒԻԹ: (Շապուհին):

*Այսպէս շո՞ւտ:*

ՍԻՍԱԿ: (Նոյնպէս):

*Այո՛:*

ԴԱՒԻԹ:

*Ուրե՛մն, գնա՛նք և մենք հայրապատիւ սպետ:*

ՇԱՊՈՒՀ:

*Այո՛ գնանք Տէր իմ. բայց արքայական սենեակս՝ մի պահապան պէ՛տք է դնել պալատի պահապաններից:*

ԴԱՒԻԹ:

*Այո՛, անշո՛ւշտ պէտք է. ուրեմն հրամայի՛ր որ մէկը գայ:*

ՇԱՊՈՒՀ: (Դուռն մօտիկ կանչում է):

*Պահապա՛ն:*

## ՏԵՍԻԼ Գ. (Մտնում պահապանը)։

## ՆՈՔԱ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ։

ՊԱՀԱՊԱՆ։

Ի՞նչ կհրամայէք Տէ՛րք իմ։

ՇԱՊՈՒՀ։

Այս սենեակիս պահապան կա՛ց՝ և զգոյշ մնա՛։ Չհեռա-նաս, մինչև մեր գալը։

ՊԱՀԱՊԱՆ։

Շատ բարի Տէր իմ։ (Դուրս գնում են)։

## ՏԵՍԻԼ Դ.

## ՊԱՀԱՊԱՆ։ (Առանձին)։

ՊԱՀԱՊԱՆ։

Ի՜հ խեղճ պահապան՝ (մի փոքր առաջ գալով) հենց ո՞վ որ տեսնում է պահապանին՝ հրամայո՛ւմ է, թէ "այս արա՛, այս-տեղ կա՛ց, այնտեղ գնա՛, լա՛ւ նայիր, զգո՛յշ մնա,, և այլն և այլն. ե՞հ էս ժամանակիս մէջ. ի՛նչ լինումես լինիր՝ միայն թէ պահապան կամ ծառայ չլինիս. որովհետև, մի՛նը չկայ որ ա-սի մեզ, թէ՝ ա՛յ խեղճ պահապան. "մի փոքր էլ դու նստի, հանգստացի՛,, կամ թէ "այս մի փոքրն էլ դո՛ւ կեր,, կամ "այս մի գաւաթը խմի՛ր,, . . . և այլն և այլն։ Ահա՛ մեր Սե-նեքերիմ թագաւորը Յունաց կայսերի հետ՝ փոխեց իրեն եր-



կիրը և գահը այստեղ. է՛ ի՞նձ ինչ, որ Վասպուրականի տեղ այս Սեբաստիան ընդունեց. ինձ համար միևնոյն է, թէ՛ Վաս-պուրական երկրումը, թէ՛ այս Սեբաստիայումը՝ և թէ, ուր որ կամենան. մենք ամե՛ն տեղ միմիայն պիտի աշխատենք և պահապան մնանք. ուրեմն ինչ կարծիք, որ մե՞զ ինչ. ահա՛ սպասումեն այսօր արքայի գալստեանը. է՛ ի՞նձ ինչ . . . (Ձայն է գալիս. բայց յանկարծ նայելով դէպի դուռը, լսելով դղրդոցի ձայներ) ահա՛ դղրդոցի ձայն է գալիս, երևի թագաւորը մտել է նոր մայրաքաղաքս, ուրեմն և շուտով կլինի պալատումս. գնա՛մ կանգնեմ իմ տեղը, թէ չէ բանը վատ կանցնի. որովհետև պա-հապան եմ։ (Գնում անկիւնումը ուղղվում և կանգնում ասելով)։ Աշխարհիս երեսին բոլոր անկիւնները, քունջերը մեզ համար է շինուած։

## ՏԵՍԻԼ Ե. (Մտնում է Սենեքերիմը պատերին նայելով)։

## ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ, ՍԻՍԱԿ, ԱՏՈՄ ԵՒ ԱՊՈՒՍԱՀԼ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Ահա՛ նոր պալատ՝ և ահա՛ արքայական նո՜ր սենեակ (Խօ-սելով պտտում է)։ Ա՜խ . . . ուրեմն, ողջո՛յն քեզ իմ սենեակ. ող-ջո՛յն քեզ իմ փոխադրուած գա՛հ՝ (Նստում է) ողջո՛յն Ձեզ, իմ քաջեր, ողջո՛յն և քե՛զ իմ թագաժառանգ Դաւիթ. ար-դեօք ի՞նչպէս, սիրո՞վ եղև Ձեր ընդունելութիւնը Բիւզան-դիոնում. կամ ո՛րևէցէ բարեկամական կերպո՞վ փոխեց Ձեզ հետ կայսրը, թէ՞ այսպէս։

ԴԱՒԻԹ։

Նախ և առաջ, Հա՛յր իմ գթառատ՝ կարօտալի սիրով լըցուած ողջունումեմ Ձեզ՝ (Համբուրում է ձեռքը, նոյն Սենեքերիմը նոյն կերպ) և ապա յայտնումեմ որ մի՞թէ չգիտէք Դուք Յունաց ազգը, որ ամե՛ն քայլի մէջ պատրաստ են իրենց առաջին բարեկամ ձևացնել. թէ և մենք մեծապէս շնորհակալ եմք Վասիլ արքայից. որ չափից դուրս՝ մեզ պատուեց և յարգեց, այնպէս որ՝ մենք չենք կարող մոռանալ նորա լաւութիւնը, որ մինչև անգամ ինձ որդեգիր ընդունեց։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։ (Զարմացմամբ)։

Մի՞թէ այդչափ սէր ցոյց տուեց Ձեզ։

ՇԱՊՈՒՀ։

Ի՛նչպէս չէ՛ և ամենքիս առ հասարակ բարեկամութեամբ սիրումէր։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Շարունակի՛ր խօսքդ, ազնիւ որդեա՛կ իմ Դաւիթ։

ԴԱՒԻԹ։

Հա՛յր իմ արքայ. երբ նոր կամենումէինք մտնել մայրաքաղաքը, յանկարծ տեսանք որ երկու կողմից իմ ոտների տակը փողեր էին ցանում ոսկի ու արծաթ. որո՛նք ոտնակոխ առելով՝ անցնումէինք մինչև նո՛յն իսկ պալատը. Յունաց զօրքը սկըսեալ 15 մղոն հեռաւորութեամբ մեզ ընդունեց. այնտեղ ևս արքայական պատուով մեծարեցին մեզ. և իւրեանց հետ ամենափառաւոր և շքեղ պատուով՝ ի միասին գնացինք Սուրբ Սոֆի մայր եկեղեցին. որտեղ՝ սպասումէր ընդունելու մեզ Վասիլ Կայսրը բոլոր հոգևորականներով. որ իսկո՛յն մատու-



ցին գոհաբանական մաղթանքներ, թէ՛ մեր արքայական պալատի կենաց և թէ՛ Յունաց. յետոյ մեծաշուք փառքով կայսերի հետ ի միասին գնացինք իւր պալատը. վերջապէս՝ թէ մեր բոլոր զօրաց՝ և թէ ինձ համար, արժանավայել սէր և պատիւ ցոյց տուեց. (Հանում է ծոցից նամակը) և ահա՛ առաքելով առ Ձեզ Վասիլ Կայսրը, այս Բարեկամական Դաշնադրութեան Նամակը, հանդերձ ամենափափականօք ողջունիւ. որ և հասուցանումեմ գթառատութեանդ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։

Որդեա՛կ իմ Դաւիթ, այդ բոլորը բարի է և ուրա՛խ եմ որ աւելի բարեկամութեամբ է եղել ամեն մեր պայմանը։ Բանանք ուրեմն այս նամակը և տեսնենք թէ ի՞նչ է գրել Վասիլ Կայսրը։ Քաջդ իմ Շապուհ, առ և կարդա՛ այս նամակը։

ՇԱՊՈՒՀ։ (Բանում է և կարդում)։

“Յունաստանի Վասիլ Կայսրից Բարեկամական ողջոյն
“առ Սենեքերիմ Արքայդ Հայոց Վասպուրականի (Այժմ
“Սեբաստիոյ)։

“ԽՆԴԱԼ Ի ՏԷՐ„։

“Ձեր ամենապատուական բարեկամութեամբ սիրով գրած
“նամակը՝ ընկալայ մեծաւ ուրախութեամբ. նա և քաղցր ըն-
“դունելութեամբ մեծարեցինք Արքայական ժառանգ՝ Ձեր քաջ
“Դաւիթն, և ընդ նմին բոլոր Հայոց քաջերին. պէտք է խոս-
“տովանել ճշմարտութեամբ, որ Ձեր ամենապատուական նա-
“մակի տողերը կարդալուն պէս, շա՜տ ցաւեցի այն շքեղ
“Վասպուրական աշխարհի գիւղերի աւերմանը, որոնց վերայ
“թափել են անհաւատ Թաթարներն. և Դո՛ւք, ամենա-

“ղորմած Տէր կարծես թէ մարգարէական հոգւով լինիք թե-
“լադրած Ձեր ամենապատուական նամակը. Նորա համար որ
“ինքներդ ասում էք թէ “Երբ Հայաստանը բաղդի բերմունքի
“մէջ լինելով` խնդումէր, որ ուրախութիւն էր ամեն մի Քը-
“րիստոնեայ պետութեանց` կարծեմ և Ձերոյին պետութեան,,
“և ճշմարիտ որ այդպէս էր. մենք միշտ ուրախ էինք լինում,
“երբ Հայաստանը բաղդի յաջողութեան մէջ էր. բայց այժմ
“ընդ հակառակը փոխանակ ուրախութեան` մենք շատ տըխ-
“րութեան մէջ եմք. վերջապէս Ձեր տխրութիւնը փարատե-
“լու համար` Ձեր սրտի ցանկութեան համաձայն, ընդունե-
“ցինք քաղցր սիրով և մեծ համակրութեամբ Ձեր բոլոր պայ-
“մանները. և մեր մէջ Բարեկամական դաշինք հաստատելով
“ի միասին Ձեր Թագաժառանգ քաջ Դաւթի հետ, և բոլոր
“Ձեր և մեր քաջ իշխանաց երաշխաւորութեամբ. ուրեմն
“շնորհաւոր լինի մեր Դաշնադրութեան պայմանը.—ահա՛ ա-
“ւելորդ չեմ համարում Դաշնադրութեան պայմանից յայտ-
“նել Ձեզ` որ մենք, Վասպուրականի Հայաստան աշխարհը
“սիրով ընդունելուց յետոյ` տալիս եմք մեր կամքով ամենայն
“բարեկամութեամբ, ամբողջ Սեբաստիան իւր շրջակայ բոլոր
“գաւառներով` որի մէջ փութով փոխադրեցէք Ձեր Արքա-
“յական գահը. և այնպէս շէնացրէք Սեբաստիան, ինչպէս
“որ Ձեր ազնիւ սովորութիւնն է: Մեր Բարեկամութիւնը
“աւելի հաստատութեան համար` Ձեր գահաժառանգ քաջ
“Դաւթին մենք ընդունեցինք որդեգիր. երդուելով միանգա-
“մայն, որ թէ՛ ես՝ և թէ իմ ապագայքս Յունաստանի թա-
“գաւորութեան` պարտական եմք ճշմարիտ մարդկութեամբ, հո-
“գարարձու լինել Սենեքերիմ արքայից որդւոյը և թոռան
“թոռանց: Ընդ սմին առաքելով Ձեզ նուէր, ջորիներով բար-
“ձած գանձեր, և զանազան պարգևներ և այլն և այլն. ըն-



“դունեցէք ուրեմն ամենաողորմած արքայ Ձեր բարեկամից
այս չնչին նուէրները,,:

“Որով մնամ Ձերոյին Արքայական Մեծութեան` նիզակա-
“կից Ձեր, և մինչև ի մահ հաւատարիմ և անկեղծ բարե-
“կամ,,:

“ՎԱՍԻԼ ԿԱՅՍՐ ՅՈՒՆԱՑ,,:

յԱրքայական պալատի Մեծին:
ի Թուին փրկչի 1021 ամի ի 16.ն Սեպտեմբերի:

Մայրաքաղաքս Յունաստանի Բիւզանդիոն:

(Շարունակ կարդալէն չէնք տալիս է նամակը արքային):

ՍԵՆԵՔԵՐԻՄ:

Շատ լաւ է եղել որ ինքն իրեն երդման խոստումն գրել իրենց մէջ. արդեօք նոյն իսկ Դաշնադրութեան մէջ ևս գրած է այդ խոստումը, թէ ոչ:

ԴԱՒԻԹ:

Այո ինչպէս չէ:

ՇԱՊՈՒՀ:

Այնտեղ առաւել ընդարձակ է գրած:

ՍԵՆԵՔԵՐԻՄ:

Ուրեմն իմ քաջ զօրաւարք, տեսէք որ Ձեր ազնիւ խոհականութեամբ, մեր այս նոր Տէրութիւնը պիտի ծաղկեցնէք. այստեղի լեռները ևս մեր Վասպուրականի նման անառիկ են. միայն կան շատ տեղեր որոնք որ պէտքէ մշակուի տէրութեանս սահմանները լինելով. զգո՛յշ կացէք որ բոլոր գործերը կարգի լինին. լաւ հայեցողութիւն արէ՛ք, որ մենք ևս անշուշտ ժամանակին կ՛հարստանանք աւելի ևս, որովհետև միշտ

խոհեմութեամբ գործեր ենք տեսնում. աղաչումեմ Ձեզ իմ քաջեր, և քեզ գահաժառանգ Դաւիթ որդեակ, որ միշտ ձեր մեջ հաշտութիւն թագաւորէ. երբէք կռիւ, ոխակալութիւն և եղբայրատեցութիւն՝ չունենաք միմեանց հետ. այլ սիրեցէք սէր և միաբանութիւն. որովհետև ուր տեղ կայ սէր՝ և միութիւն՝ այնտեղ կայ անշուշտ հաստատութիւն . . . լաւ մտածէք որ ինչ ընկերութեանց՝ ինչ գերդաստանի, և ինչ թագաւորութեանց մեջ կայ սէր, այնտեղ կայ անշուշտ Աստուած. աշխատեցէք ուրեմն որ Աստուած միշտ Ձեր մեջ լինի իմ զաւակունք:

ՇԱՊՈՒՀ:

Վեհափառ Տէր, բոլորով սրտիւ պատրաստ ենք Ձերոյին վեհ հրամանները անթերի կատարել. և այնպէս միշտ սիրով և միաբանութեամբ պէտքէ մնանք ինչպէս որ մինչև օրս եղած ենք:

ՍԻՍԱԿ:

Տէր արքայ, մի՛թէ մենք չպիտի՞ մտածենք որ այժմ, մեզ աւելի պէտքէ քաջութիւն ունենալ. մի՞թէ մեզ խրատ չի պիտի՞ համարենք, այն անհաւատ Թաթարների յանկարծակի յարձակումը՝ մեր երկրի վերայ:

ԱՏՈՄ:

Այո՛, ճշմարիտ ես ասում Սիսա՛կ զօրապետ. որովհետև եթէ մի փոքր յառաջ իմացած լինէինք՝ բոլոր մեր սահմանները կփակէինք. և թոյլ չէինք տալ այն անիրաւներին մեր երկրի վայելչութիւնը փակել:

ԱՊՈՒՍԱՀԼ:

Ճշմարիտ որ այդպէս է. որ բոլո՛ր մեր անզգուշութիւնները՝ տեղիք տուին այն անբաղդութեանը:



## ՏԵՍԻԼ Զ. (Յանկարծ մտնում Կարապետն):

## ՆՈՔԱ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ:

ԿԱՐԱՊԵՏ:

Տէր արքայ, շտապումեմ յայտնելու որ բոլոր զօրքը, հանպիրձ հարիւրապետօք և հազարապետօք՝ մեծ շփոթութեան մեջ են. որովհետև լուր է տարածուել, թէ Յունաց մեծ իշխան յաղթանդամ Նիկիֆոռ Ծուլիկը՝ իրենց Վասիլ Կայսրի դէմ է յարձակուել. և այս պատճառաւ զօրք է ժողովել ամենայն կողմերից և տեղերից. ու պատերազմելով գալիս է ասումեն և մեզ վերայ:

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ:

Ի՞նչ ես ասում Կարապե՛տ. մի՞թէ ճշմարի՞տ է այդ:

ԿԱՐԱՊԵՏ:

Ինչպէս չէ՛ Ձերդ Մեծութիւն, արդէն բոլոր ժողովուրդը եւ պատրաստվումեն զօրաց հետ խմբովին՝ պատերազմի դաշտը գնալու. միայն սպասումեն գահաժառանգին, քաջերաց՝ և Վեհափառութեանդ վեհ հրամանին:

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ:

Եթէ այդպէս, դէ՛հ քաջերս, ահա՛ հրամայումեմ Ձե՛զ, գնացէ՛ք շուտով և պատերազմի ամե՛ն մի հարկաւոր պատրաստութիւններն՝ հոգացէ՛ք և կարգի դրէ՛ք:

ՍԻՍԱԿ:

Ուրեմն պատերա՞զմ:

ՇԱՊՈՒՀ։

Այո՛, պատերազմ։

ԴԱՒԻԹ։

Եւ մե՛ծ պատերազմ։

ԱՏՈՄ ԵՒ ԱՊՈՒՍԱՀԼ։ (Միասին)։

Գնա՛նք ուրեմն։

ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ, ՍԻՍԱԿ, ԱՏՈՄ, ԵՒ ԱՊՈՒՍԱՀԼ։ (Միասին)։

Գնա՛նք։ (Գնում են)։

(Առաջին վարագոյրը իջնում է)։

# ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տեսարանն է, անտառախիտ պատերազմի գեղեցիկ դաշտը. որի ետևից բարձրացած են լեռներ. զօրքը միատեղ կանգնած են քաջազէմ հայեացքով. որոնց ձեռքին են նիզակներ. Դաւիթ, Շապուհ, Սիսակ, Ատոմ և Ապուսահլ. միմեանց մօտ կանգնած են։ Վարագոյրը բացուելուն պէս ասում է Շապուհ։

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

## ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ, ՍԻՍԱԿ, ԱՏՈՄ ԵՒ ԱՊՈՒՍԱՀԼ։

ՇԱՊՈՒՀ։

Թագաժառանգ Տէ՛ր, ահա՛ բոլոր զօրքերը կարգի դրուած է. այժմ մնում է խօսենք, պատերազմի մէջ վարուելու ամե՛ն մի կերպը՝ և զգուշութեանց հնարները։



ԴԱՒԻԹ։

Խօսեցէ՛ք ուրեմն հայրապատիւ ապետ, որ ուշադրութեամբ և մտադրութեամբ լսեմք։

ՇԱՊՈՒՀ։

Ամենից առաջ Դուք թագաժառանգ տէ՛ր, զգոյշ պէտք է մնաք այն խառն պատերազմի մէջ. լա՛ւ ճանաչիր քեզ ինքդ՝ թէ՛ Դու ո՞վ ես. ճանաչի՛ր որ դու Սեբաստեայի Տէրն ես և թագակալն. ճանաչի՛ր որ բոլոր զօրքը և ժողովուրդը՝ ահա՛ քե՛զ է նայում. ճանաչի՛ր որ բոլոր զօրքին և զօրապետներին գլուխն ես. գնահատի՛ր քեզ ինքդ, բայց շա՛տ թա՛նգ. որ՝ Տէր մի արասցէ, եթէ քեզ մի ձախողակի փորձանք պատահի՝ այն ժամանակը մե՛նք բոլորս էլ ի միասին կորած եմք. կորա՛ծ է այն ժամանակը և ամբողջ Սեբաստիան. ամեն քայլի մէջ ինձ նայիր. նայի՛ր նոյնպէս՝ որ երբ թշնամին կատաղա՛ծ լինի՝ վրայ չյարձակուես. այլ միշտ քեզ ցոյց տալով՝ խոյս տուր նորանից, և այսպէս ընթանալով՝ կյաղթենք նոցա, կազատես մեզ, և կազատես այս նոր Հայրենիքս։

ԴԱՒԻԹ։

Հայրապատիւ քաջ ապետ ազնիւդ իմ Շապո՛ւհ, ամենայն սրբութեամբ կը կատարեմ Ձեր ամե՛ն մի անգին խրատները. ուրախ եմ հոգւով, որ այս մեր Հայրենիքը՝ պիտի ծաղկէ Ձեր քաջ խոհականութեան շնորհիւ. ուրախ եմ, որ ես արժանացել եմ Ձեր ազնիւ հանճարի դաստիարակութեանը. կեցցէ՛ս քաջդ իմ Հազարապետ։

ՇԱՊՈՒՀ։

Իսկ դու՛ք՝ ազնիւ զաւակունք Արքայիս Ատո՛մ և Ապուսահլ. կարծեմ լա՛ւ լսեցիք ինչ որ ասացի Ձեր Թագաժառանգ

եղբօր քաջ Դուլթին. յուսով եմ որ Դուք, ևս գնահատած կլինէք Ձեզ. Դո՛ւք որովհետև առաջին անգամն է մտնումէք պատերազմ. վտանգից ամե՛ն մի քայլափոխում, զգո՛յշ պիտի մնաք. կռուեցէ՛ք, խփեցէ՛ք, և գետնի վրայ թաւալեցրէ՛ք չար թշնամեաց. բայց մե՜ծ զգուշութեամբ. միշտ նայէ՛ք ինձ՝ և քաջ Միսակին. նայէք նոյնպէս հարիւրապետաց և հազարապետաց. որ զգուշութեամբ ընթանալով, թշնամեաց տեղի չըտանք ոտնակոխ անել մեր երկրի հողը:

ԱՏՈՄ:

Հայրապատիւ ասպետ քաջ Շապուհ, խորին յարգանքով ընդունումեմ Ձեր ազնիւ և եռանդուն խրատները, որոնք մեր տկար գլուխներին միշտ պէ՛տք են:

ԱՊՈՒՍԱՀԼ:

Նոյն ես յայտնումեմ իմ խորին շնորհակալութիւնս քա՛ջ ասպետ. որ ինչպէս Հայր՝ այնպէս հոգս էք անում մեր գաղափարները զարգացնել:

ՇԱՊՈՒՀ:

Իսկ Դու քա՛ջդ իմ, ընկերակից Միսակ զօրապետ, տես որ մենք և՛ս առաւել պարտական ենք զգո՛յշ մնալ այս պատերազմի մէջ. որովհետև մեր ամենաողորմած Սենեքերիմ Թագաւորը՝ մե՛զ է յանձնել թէ իւր այս ծաղկափթիթ զաւակունքը՝ և թէ ամբողջ Սեբաստիան. ուրեմն մեզ է մնում քաջութեամբ սրտի ընդունել. բոլոր քաջութիւններդ իրագործիր. և բոլոր խոհականութիւնդ գործ դիր:

ՍԻՍԱԿ:

Քաջդ մեր Շապուհ, մեծ հազարապետ, հաւատա որ ա-



մեն մի խօսքերդ երակներիս մէջ արիւններ է խաղացնում, ուրեմն յուսով եմ, որ վստահ լինիս քեզ սիրող Սիսակի վերայ:

ՇԱՊՈՒՀ:

Շնորհակալ եմ յատուկ, որ միշտ ազդումեն քո սրտի մէջ իմ խօսքերը. բայց ընդունիր խնդրեմ, ո՛չ մեծից՝ այլ ընկերից:

## ՏԵՍԻԼ Բ.

(Յանկարծ մտնում Տուկին՝ ուխտագնացի ձևով. այն է գլխին սև քօղ՝ ձեռքն մի սև ձեռնափայտ, ձեռին մի ցուպ. որի հետ մտնում և Կարապետը):

## ՆՈՔՍԱ, ՏՈՒԿԻԾ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ.

ՏՈՒԿԻԾ:

Ողջո՛յն Ձեզ Թագաժառանգ Տէ՛ր, և ողջո՛յն Ձեզ քաջ եղբայրներ. (Վեր է տալիս ձեռից ձեռնափայտն) արդեօ՛ք ինչպէս էք, լա՛ւ էք:

ԴԱՒԻԹ: (Զարմանալով):

Տուկի՛ծ, մի՛թէ դո՛ւ ես արդեօք. և ի՞նչ պատճառաւ այդպէս ծածո՛ւկ: (Ողջոյնը ողջունումեն յետոյը բռնելով):

ՏՈՒԿԻԾ:

Այ՛հ, Թագաժառանգ Տէր, եթէ այսպէս ծածուկ չգայի՝ այժմ վաղուց ես չէի կարող ողջ լինել. ես եկել եմ Բիւզանդիոնից այս (Ցոյց տալով ձեռնափայտն և քօղը) ուխտագնացի շորերով. որովհետև, այն մեր Յոյն չար Նիկիֆօռ Ծամսկին՝ մեր ճանապարհներն բոլորը փակել է, որ ո՛չ ոք չկարողանայ

այլ տէրութեանց մէջ գնալ. ես եկայ Ձեր պալատը, բայց երբ Ձեզ հարցրի՝ իսկոյն պալատից այս սպասաւորը, (Ցոյց տալով Կարապետին) այսքան ճանապարհ բերեց այս պատերազմի դաշտը. և չգիտեմ, արդեօք ի՞նչ պատերազմի պատրաստութիւն էք տեսնում, որ ահա սպասումէք դաշտիս մէջ։

ԴԱՒԻԹ։

Ահա այն Ձեր ասած չար Նիկիֆօռ Դուքսը, արդէն այս կողմերում ման է գալիս զօրքերով. շատ տեղերից նորան օգնել են. և ինչպէս լսումենք՝ կամենումէ և մեզ վրայ արշաւել. մենք ևս այս բոլորը պարզ ի նկատի ունենալով՝ ահա հաւաքուեցանք, և զօրքերը կարգի դրած սպասումենք. որ գալուն պէս՝ դէմ կենանք և վրայ յարձակուենք։

ՇԱՊՈՒՀ։

Ուրեմն բարի լինի Ձեր գալուստը, քաջ դեսպան. և մեր հին բարեկամ Տուկիծ. ի՞նչ կայ Ձեր Յունաստանում, խաղաղութեան մէ՞ջ էք արդեօք. կամ լա՞ւ է Վասիլ Կայսրը։

ՏՈՒԿԻԾ։ (Խեղճ կերպով հոգւոց քաշելով)։

Այո խաղաղութեան մէջ է Յունաստան. և լա՛ւ է Վասիլ Կայսրը. չլինի՛ այնպիսի խաղաղութիւնը՝ և չլինի՛ այնպիսի լաւութիւնը։

ԴԱՒԻԹ։ (Զարմացած)։

Ի՞նչ էք ասում քաջ Տուկիծ։

ՏՈՒԿԻԾ։

Ճշմարիտ եմ ասում։ Ահա Ձեր վրայ մեր Վասիլ Կայսրին մի նամակ. որը կարդալով կիմանաք ամէ՛ն բան, և որի



համար միայն եկել եմ։ (Տալիս է նամակը)։ Բայց գիտէ՞ք թէ ի՞նչ նեղութիւններ եմ կրել ճանապարհին։

ԴԱՒԻԹ։

Յաւալ՜ լուր . . . աւա՜ղ Յունաստան։ Շատ բարի քաջ դեսպան Տուկիծ. մենք կ'կարդանք նամակը, և ինչ որ կարելի և հնարաւո՛ր է անելու՝ իսկոյն կ'պատրաստենք և փութով ճանապարհ կ'ձգենք։ Իսկ այժմ բարեհաճեցէ՛ք գնալ հանգստանալու. որովհետև տեսնումեմ որ սաստիկ դադրած էք։

ՏՈՒԿԻԾ։ (Գնալով)։

Ներեցէ՛ք, Թագաժառանգ Տէր, որ ես չեմ կարող հանգստանալ. որովհետև միջոց չունիմ. չեմ կարող նոյնպէս սպասել պատասխանին. ըստ որում ամբողջ Յունաստանը այժմ սաստիկ շփոթութեանց մէջ է. բոլո՛ր դեսպանները՝ զանազան տեղեր ուղարկուած գնացած են. հարիւրապետները և հազարապետները՝ խառնուած են զօրաց պատրաստութեամբ։

ԴԱՒԻԹ։ (Սպասաւորին)։

Ուրե՛մն տար, դեսպան իշխանին պալատը, և իւր արժանաւայել սենեակում՝ թո՛ղ մի փոքր հանգստանայ. և յետոյ ե՛րբ կբարեհաճի գնալու՝ փառաւորապէս ճանապարհ ձգէք։

ԿԱՐԱՊԵՏ։

Շատ բարի Տէր իմ։

ՏՈՒԿԻԾ։

Ուրե՛մն մնաք բարեաւ։ (Ողջունումն մեծանց) Բայց խնդրումեմ ամենախոնարհաբար Ձերոյին Բարձրութիւնից որ նամակի խորհուրդը կատարելուն պէս՝ շտապէք հաղորդելու։

ԴԱՒԻԹ։

Գնա՛ք բարեաւ քաջ դեսպան. միայն մատուցէ՛ք Վ. ասիլ Կայսրին մեր փափականօք որդիական խոնարհ ողջոյնը։ (Գնում են)։

## ՏԵՍԻԼ Գ.

## ՆՈԲԱ։

ԴԱՒԻԹ։

Քա՛ջ զօրաւարդ իմ Սիսակ. առ ուրե՛մն այս նամակը և պարզութեամբ կարդա՛։ (Տալով)։

ՍԻՍԱԿ։ (Առնելով)։

Շատ բարի Տէր իմ։ (Կարդալով նախ՝ հասցէն)։

‘‘ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ,,

‘‘Գահաժառանգին Սենեքերիմայ Արքայի Հայոց Սեբաստիոյ Տեառն քաջ Դաւթի,,։

‘‘Ի Մայրաքաղաքն Հայոց Սեբաստիայ։ յԱրքունի պալատն Սենեքերիմայ,,։

(Յետոյ բաց է անում նամակը ու կարդալով)։

‘‘Յունաստանի Վ. ասիլ Կայսրից, ամենաջերմ փափականօք
‘‘ողջո՛յն Հայրական և բարեկամական սիրով՝ առ ամենասիրեցեալդ իմ որդեգիր՝ և գահաժառանգդ Սենեքերիմայ Արքայի
‘‘Հայոց Սեբաստիոյ՝ Տեառն քաջ և հսկայ Դաւթի,,։

‘‘ԽՆԴԱԼ Ի ՏԷՐ,,։

‘‘Մեր բարեկամական սէրը՝ թո՛յլ է տալիս գրել Ձերդ Բարձրութեան և յայտնել միանգամայն ամէ՛ն բան։ Ահա՛ ինչպէս։
‘‘Քանի մի ամիս առաջ, մեր մեծ իշխան յաղթանդամ պալա-



‘‘տականը, այն է՝ Նիկիֆօռ Ֆոկիզը, մի քանի ընտանեկան
‘‘փոքր անգիրների համար՝ մեզ հետ սաստիկ ընդդիմացաւ. և
‘‘այնպէս ապստամբութեամբ, դուրս եկաւ իւրեն համախոհներով մեր Բիւզանդիոնից. և գնաց օտարասահման երկիրներ.
‘‘որտեղ՝ հրաւիրեց Վրաց Գորգի թագաւորին, և Գագկայ
‘‘որդւոցը՝ Յովհաննիսին և Աշոտին, ու միաբանացրեց բոլորին
‘‘իւրեն հետ։ Այժմ ինչպէս լսում եմ հաստատ աղբիւրից, որ
‘‘այդ չա՛ր Նիկիֆօռ Ֆոկիզը՝ մե՛ծ պատրաստի պատրաստութիւն է տեսնում. և մտադիր է անշուշտ նախ յարձակուել
‘‘Ձեզ վրայ՝ և խլել Ձեր տէրութիւնը. և ապա պիտի գայ մեզ
‘‘վրայ, և իբր թէ խլէ և յափշտակէ մեր թագաւորութիւնը
‘‘և տիրապետութիւնը։ Ձեզ այս բոլորը հաղորդելուց յետոյ
‘‘ես հաստատ գիտեմ, որ Դուք դորա հետ մի փոքր բարեկամութիւն ունէք. ուրեմն զգուշացնում եմ, որ չխաբուես և
‘‘չխաբուես՝ դորա չար և գժտական բարեկամութեանը. այլ՝ աշխատիր անշուշտ, որև իցէ մի կերպով ձեռքդ քցես և սպանես այդ չա՛ր գաւակին. որ դորա պատճառաւ ամբողջ Յունաստանս՝ մե՛ծ վտանգի մէջ է. իսկ ես՝ չգիտեմ թէ ինչ
‘‘անեմ, որովհետև ‘‘Ցեցը մեզանից է,, ասում է հասարակաց
‘‘առածը. և վերջապէս քաջդ որդեգիր Դաւիթ իմ, աղաչում եմ
‘‘քեզ, որ ամէ՛ն ջանքդ, և ամէ՛ն ճիգդ, գո՛րծ դիր որ դորան
‘‘փչացնէ՛ք՝ և ջնջէ՛ք դորա անունը աշխարհից. որովհետև
‘‘ամբողջ մեր երկու Տէրութեանցս ես, մտադիր է տիրապետելու. ուրեմն վաղօրօք պէտք է մեր ամէ՛ն հնարքը մտածենք
‘‘այդ թշնամեաց դէմ, կրկի՛ն և կրկին Ձեռքդ բռնած՝ աղերսում եմ և աղաչում, որ այդ չա՛ր անիրաւին անշուշտ սպանիր՝ և խորտակիր միանգամայն դէպի անդունդքը, դորա ամէ՛ն
‘‘մի չար լարած որոգայթները. որ թո՛ղ ջնջուի աշխարհիս
‘‘երեսից. վերջապէս՝ իմ բոլոր յոյսը և ապաւէնը դու ես.

"քո Զօրքով միայն կարողեմ ազատուել ես՝ և ամբողջ Յու-
"նաստանս այդ չար իժի ծնունդից: Եւ բոլորով սրտիւ վըս-
"տահ լինելով Ձեր քաջութեան վերայ՝ ահա այժմէն իսկ
"տալիս եմք մեր կամքով և սրտի հաճութեամբ, Ձեզ նուէր
"բարեկամական մեր գաւառներից՝ ամբողջ երեք գաւառներն,
"այնէ՝ Կեսարիա, Ծամընդաւ և Խաւատանէք: Տիրապետիր
"ուրեմն այս գաւառները քո քաջութեան գործ սկսելու յի-
"շատակի համար. իսկ երբ ազատման և յաղթութեան լուրը
"հասցնես ինձ այն ժամանակը բացի այս պարգևները, ուրիշ
"պարգևներով ևս շնորհակալութիւն կհատուցանեմ,,:

"Սրբով Խաչ, հայրական և հոգեւորական ողորմութեամբ մեր խնամողաց Ձեր,,:

"ՎԱՍԻԼ ԿԱՅՍՐ ՅՈՒՆԱՑ,,:

ի 1022 թուին փրկչ. Յապրիլի 5-ին,,:

"Ի Կայսերական պալատի մերում Բիւզանդիոն,,:

ԴԱՒԻԹ:

Այժմ ի՞նչ կարծիք ունիք այս նամակի վրայ, կամ ի՞նչ էք մտածում, Հայրապատիւ ասպետս, և Դուք քաջ ընկերներ:

ՇԱՊՈՒՀ:

Այս նամակի ամե՛ն մի տողը՝ մեզ համար մե՜ծ ազդեցութիւն ունի, թէ ներկայիս համար՝ և թէ ապագայի. և մե՜ծ խնդութիւն կլինի այն ժամանակը՝ երբ Աստուծոյ յաջողութեամբն, այն չար Նիկիֆոռ Ծռվիզին յաղթելով կոչնչացընենք. որովհետև ճշմարիտ է ասում Վասիլ Կայսրը, որ նա մտադիր է մեր երկու Տէրութիւնները ևս տիրապետել:

ՍԻՍԱԿ:

Ես վստահ եմ, որ Թագաժառանգ քաջը՝ մի հարուածով նորան գետին կ'կոխի:



ԱՏՈՄ:

Ես ևս վստահ եմ, մեր Թագաժառանգ եղբօր քաջութեան վրայ:

ԱՊՈՒՍԱՀԼ:

Նոյնպէս և ես:

ԴԱՒԻԹ:

Այդ ամենը բարի է, և լաւ յաջողակութեամբ կանցնի մեր ամենայն բանը շնորհիւ իմ քաջ ասպետիս:

ՇԱՊՈՒՀ:

Քա՛ջդ մեր Թագաժառանգ, լաւ մտածիր, որ Կայսերի այն պարգևած երեք գաւառները՝ փոքր նուէրներ չեն. մեզ համար ամենամեծ պարծանք է այդ, որ դեռ պատերազմ չսկսած, դեռ մի յաղթութիւն չի արած՝ այդ մեծամեծ և ամենահարուստ գաւառներն է ընծայում մեզ. յուսալով՝ մեր քաջութեան վերայ, ուրեմն, աշխատիր որ փառաւորապէս պատերազմիս. ահա օր՝ որ պիտի փայլի քո քաջութիւնը, լսիր ինձ աղաչումեմ քեզ, որ այժմէն իսկ վառիր քո սիրտը ամենայն վեհանձն քաջութեամբ, որ այն չար Թշնամին անշուշտ, յանկարծ պիտի գայ մեզ վերայ, որովհետև՝ նա իրաւունքով չէ պատերազմում որ քաղաքավարութեամբ վարուի, այլ՝ բարբարոսական ընթացքով. պէտքէ անշուշտ ամե՛ն մի վայրկեանում ըսպասել նորան. ո՞վ գիտէ, կարելի է յանկարծ մեր այս պատերազմի դաշտը գայ. երբ որ նկատես դու նորան՝ ձեռքդ սուրիդ վրայ պահիր, և քաջութեամբ բազուկներդ ամրացրու, խօսիր հետը քաղցրութեամբ, գործ դիր այլազգական խորամանկութիւն. բայց այդ ամե՛ն մի ակնթարթի մէջ զգո՜յշ կաց, և երբ տեսնես որ երեսը խոժոռացրեց, և ձեռը սուրին վերայ

դրեց՝ իսկո՛յն, խփիր նորան և գետնի վրայ թաւալեցրու. միշտ քաջ և հսկայ եղի՛ր. երբէ՛ք հոգս չանես, որովհետև մի՛շտ ես քեզ հետ եմ։

ԴԱՒԻԹ։

Ա՛խ, հայրապետս իմ քաջ Շապուհ, Դուք միանգամից ինձ վառումէք քաջութեան մէջ և ոգևորացնում. թո՛ղ միայն նա՛ գայ այստեղ, և ես միանգամի՛ց իսկոյն գետնին վերայ կ'թաւալացնեմ։

## ՏԵՍԻԼ Գ. (Յանկարծ մտնում Փիլիպպէ հագած կերպով)։

## ՆՈՐՔԱ՛ ԵՒ ՓԻԼԻՊՊԷ։

ՓԻԼԻՊՊԷ։ (Գլուխ տալով)։

Ողջո՛յն Ձեզ քաջեր, խնդրեմ ասէ՛ք, ո՞վ է Ձեզանից գահաժառանգ քաջ Դաւիթը։

ՇԱՊՈՒՀ։ (Բարկացած)։

Ի՞նչ կայ. ո՞վ ես դու, ի՞նչ ես անում գահաժառանգին։

ՓԻԼԻՊՊԷ։ (Աւելի գլուխ խոնարհեցնելով)։

Ես, մեծ իշխան, յաղթանդամ Նիկիֆօռ Արքայազու Նովիցի Զօրապետն եմ, որ եկել եմ Ձեզ մօտ դեսպանութեամբ. միայն ասացէ՛ք շուտով, ո՞վ է նա, կամ ո՞ւր է, շտապում եմ, ես չեմ կարող սպասել։

ԴԱՒԻԹ։ (Բարկացած)։

Ես եմ, ես. ի՞նչ ես այդքան տաքանում, իմացի՛ր, որ ի՛նչ տեղ է կանգնած տեղդ, ասա շուտով, ի՞նչ է քո դեսպանութիւնը։



ՓԻԼԻՊՊԷ։

Ներեցէ՛ք Տէր՝ որ ահա յայտնումեմ իմ Արքայազու մեծ իշխան Նիկիֆօռի կամքը, որ նա ինձ ուղարկելով Ձեզ մօտ՝ ասաց, որ «Դուք բարեհաճէ՛ք անշուշտ Ձեր բոլոր զօրքերով գալ ինձ մօտ և միանալ ինձ հետ, որովհետև ես գնումեմ պատերազմ Յունաց Վասիլ Կայսրի վերայ»։

ԴԱՒԻԹ։ (Կատաղած)։

Ի՞նչ, չա՛ր դեսպան, «Ես զօրքերս վե՛ր առնեմ և գամ Ձեզ հետ միանամ», կորի՛ր այստեղից. և գնա ասա քո այդ բռնաւոր և չար բարբարոս Նիկիֆօռ Նովիցին, որ ես Վրաց թագաւոր Թեթևամիտ Գորգին չեմ, և Յովհաննէս ու Աշոտ Գագիկայ երեխէքը չեմ, որ ինձ խաբես. Ե՛ս, Վասպուրական աշխարհի տէրն եմ. իսկ այժմ, տիրապետող ամբողջ Սեբաստիայիս, գնա՛, և այսպէս շուտով պատմի՛ր։

ՓԻԼԻՊՊԷ։ (Տաքացած)։

Ի՞նչ էք այդքան Ձեզ կորցնում, իմ Տէրն ասումէր, որ եթէ Դաւիթը իմ հրամանը չկատարի՝ ես նորա հետ պատերա՛զմ կ'բանամ, և կջարդեմ նորա բոլոր զօրքերը։

ԴԱՒԻԹ։ (Աւելի կատաղած)։

Ի՞նչ, պատերա՞զմ կբանաք ինձ հետ, կորի՛ր գնա ասա որ պատրաստեն (Ցոյց տալով քաջերին) իմ քաջերս՝ ձեզ ջախջախելու. ասա նոյնպէս, որ այդ երեխայական երկիւղը՝ յետ վեր առ։

ՓԻԼԻՊՊԷ։ (Աւելի տաքացած)։

Ուրեմն այդպէ՞ս։

ՇԱՊՈՒՀ: (Ասպաղած):

Այո այդպէս. կորիր, գնա ասա քո բարբարոս Նիկիֆոռ Ֆովկէին, որ ահա սկսումենք պատերազմ: (Գնում է Փիլիպպէ):

## ՏԵՍԻԼ Ե.

## ՆՈՐԲԱ:

ԴԱՒԻԹ:

(Տխրած ու սաստիկ չարացած մտնում է գալիս ու ասում): Տեսա՞ք քաջեր, այս անիրաւ ղեսպանիս յանդուգն համբաւին, որ յարձակուելով մեզ վերայ՝ գոռոզութեամբ խրոխտումէր. ուրեմն, քաջազարմք և ի մարտ պատրաստ եղէք, հանէք Ձեր սրերը, ահա գնումե՛նք պատերազմ: (Շտապով գնումեն ներքը):

## ՏԵՍԻԼ Զ. (Մեծ հանդէս յանկարծ մտնում ասելով):

## ՆԻԿԻՖՈՌ. (Առանձին):

ՆԻԿԻՖՈՌ: (Ցնորեալ ու չարացած):

Այս, այս երազները . . . մարդիս սրտամաշ են անում . . . ո՛վ . . . դու խղճմտանք, ախտո՞ւ վախկոտ ես, ի՞նչ ես ինձ չարչարում . . . այսօր . . . ինձ ասումէին երազում, թէ "Մի մոռանալ, այն խեղճ մանուկներին, որ դու չա՛ր Նիկիֆոռ, խեղդել տուեցիր, այն խեղճ մարդկանց՝ որ դու չարչարեցիր, դու կստանաս սրանց փոխարէն քո պատիժը, քե՛զ սպասում է սարսափելի մահը. դու կստանաս դաժան կերպարանքով, այն



"սարսափելի հարուածը . . . դու կտեսնես քո արիւնը և մահը . . ." այս ինչպէս երազ է . . . ես ցնորւած եմ, երկինք . . . :

## ՏԵՍԻԼ Է. (Յանկարծ մտնում Փիլիպպէ մեծագոյն խոհով):

## ՆԻԿԻՖՈՌ ԵՒ ՓԻԼԻՊՊԷ:

ՆԻԿԻՖՈՌ: (Յանկարծ վեհանալով ասում):

Փիլիպպէ, ի՞նչ լուր բերիր դու այն ինքնահաւան Հայերից:

ՓԻԼԻՊՊԷ:

Տէր իմ, նոքա՝ բոլորովի՛ն կատաղեցան երբ յայտնեցի Ձեր հրամանները. Դաւիթը, և Շապուհը խրոխտալով ինձ վերայ ասացին. "Թէ պատերազմ կկամիք մեզ հետ, կորիր "գնա, և ասա՛ քո այդ բռնաւոր և չար Նիկիֆոռին որ ահա՛ "պատրաստ են քաջերս ձեզ ջախջախելու, և այդ երեխայա-"կան երկիւղը յետ վեր առ," ասումէին: . . .

ՆԻԿԻՖՈՌ:

Եթէ այդպէ՞ս, ապա դու ինչպէս առողջ եկար այստեղ. ինչո՞ւ քո արիւնը չթափեցիր այդ դաժան խօսքերի դէմ. ուրեմն կերևի . . . վայելեցիր այդ խօսքերդ, որ բոլորը թիւնով լցված է, ուրեմն, կորիր այստեղից. (Ուժեղ ձայնով ասելով) սատանի ծնունդ, էլ այսուհետև արժանի չես իմ աչքիս երևալու. (Սուրը վեր հանելով) կորիր, փո՛ւչ փչանալու, դու իժի ծնունդ: (Փախչում Փիլիպպէն):

## ՏԵՍԻԼ Ը.

### ՆԻԿԻՖՈՐ։ (Միայնակ)։

ՆԻԿԻՖՈՐ։ (Աղաղակած և ցնորված)։

Դու խղճմտանք, ինձ չարչարումես . . . ո՜հ, (Նայում է շուրջ-տալով պատերին, առաստաղին, գետնին, դողդողալով). տեսնումեմ ձեզ երա՜զ հաղորդողներ . . . ո՛վ ուրուականներ. կորէք . . . այստեղից . . . երա՞զ . . . Դաւիթը . . . կամենումէ ինձ . . . ջախջախել . . . երկինք . . . երա՛զ . . . ինչ տեղ եմ ես . . . (Նշմարելով ձեռքը) . . . ո՞հ, վառվումէ՝ . . . ահա՛ կրակ . . . բայց ի՛նչպէս կապոյտ ցոլքեր . . . այս ի՛նչ եմ լինում ես, . . . դողդողումե՛մ . . . ո՜հ, սառը կաթիլներ . . . է . . . գալիս . . . գարհուրումեմ . . . այս ինչե՞ր են . . . բա՛յց . . . ի՛նչ է . . . ոչինչ . . . ես, այստեղ . . . միայն . . . եմ . . . ե՛ս . . . Նիկի-ֆո՛ռ . . . սիրումե՛մ Նիկիֆորին . . . ե՛ս . . . նո՛յն եմ . . . այս-տեղ, չկա՛յ սպանող . . . չըկայ . . . չէ՛ . . . այստեղ . . . կա՛յ սպանող՝ . . . այո՛ . . . սպանող . . . ե՛ս . . . ես փախչեմ . . . բայց . . . ի՛նչ մարդից . . . ինձանից . . . և ինչի՞ փախչեմ . . . չար-չարանքից . . . մի՛թէ . . . ո՞վ պետքէ . . . չարչարի . . . ես — ինքս ինձ . . . չէ՛ . . . ես սիրումեմ ինձ . . . ինչի՞ համար եմ սի-րում . . . լաւ եմ . . . ինձ համար. չէ՛, չէ՛ . . . ես դաժա՞ն . . . եմ . . . չէ՛, ե՛ս խաբեբայ . . . դաժան չեմ՝ . . . յիմար . . . մի խաբիլ . . . յիմա՛ր, քե՛զ . . . գովումես . . . երա՞զ . . . ցնո՞րք . . . (Նայելով առաստաղին) ո՛հ գոռումե՛ն ահա . . . այն . . . տեղից . . . թէ . . . ՙՙԴու՛ մեղաւո՛ր ես՝ . . . մեղաւո՛ր ես՝ . . . որ քո . . . ՙՙ. երկիւղից . . . և ահից . . . խիղճ . . . Սենեքերիմը . . . Վա-



ՙՙսպուրականի տէրը մեռա՜ւ . . . մեղաւո՜ր ես,, . . . կմեռնեմ ես. . . մի քաջ յաղթանդամ Յո՛յն . . . բայց ո՞վ կ՚ողբայ ինձ . . . համար . . . չէ՛ . . . ես կապրեմ, կը յաղթեմ . . . կը թագաւո-րեմ. կռիւեմ. և այն բոլորին սարսափ կանեմ . . . (Ձեռքը տարելով) . . . ո՜հ ցնո՞րք է՝ երա՞զ է (Յանկարծ չէ, չէ փախչե-լով) պատերազմի դա՞շտ (Հանում է սուրը) գնա՛մ, գնամ և այս սուրիս, ճարակ անեմ, այն դաւող . . և վատթար Դաւթին։ (Վերջին խօսքերը ասելով շտապով գնում է)։

## ՏԵՍԻԼ Թ.

(Դաւթի բանակը մտնում է գնացած հոգնած, որի երեւում բոլոր զօրքը)։

### ԴԱՒԻԹ, ՇԱՊՈՒՀ ԱՏՈՄ, ԱՊՈՒՍԱՀԼ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ։

ԴԱՒԻԹ։ (Բարկացած)։

Ինչի՞ ուշացաւ պատերազմը. մինչև ե՞րբ սպասենք այն չար անզգամին. քանի՛, քանի՛ անգամ զօրքը կարգի դրինք. . . . Նորա զօրքը ևս պատրաստ է պատերազմելու. բայց չէ երևում այն չա՜ր Նիկիֆորը. երևի խաբս է տալիս մեզ, որ յանկարծ յարձակուի մեզ վերայ . . . չգիտեմ . . . բայց ոչի՛նչ, ինչ և լինի՝ մենք կյաղթենք այդ անզգամին. որովհետև՝ հայրապետի քաջ աւետ այս գիշեր ես մի գեղեցիկ յաղթութեան երազեմ տեսել. ահա ինչպէս, —տարտարոսական կերպով քնած էի, յանկարծ ե-րազում ձայներ լսեցի որ ասացին ՙՙթէ հանգիստ քնիր, մի վա-ՙՙխենար ազնիւ Դաւիթ. քեզ հետ է պահապան հրեշտակը, մի ՙՙթուլանար, պնդացրու սիրտդ, քաջացրու բազուկներդ՝ և գնա

"դէպի պատերազմի դաշտը. այն չար բարբարոս Նիկիփօրը "վեր կ'նգնի այն բարձրութիւնից, և կ'ջնջուի նորա անունը "աշխարհից. . . ,, ահա Ձեզ ամենապատուական երազ. բայց ասացին ինձ և այս խօսքերը՝ "Թէ Դաւիթ, չորամես և չը"Թուլանամ՝ այդ չար անիրաւի առաջ, որ քո հայրդ Սենեքերիմ արքայն մեռաւ, մեռաւ նա՝ բայց օրհնեց քեզ. մի վհատիր, մի նեղանար, որովհետև միջոց չկայ. պահպանիր քո "Սեբաստիան, տրտմելու և ողբալու ժամանակ չէ,,: Այո՛ քաջերս, գիտեմ, գիտեմ անշուշտ որ խեղճ հայրս մտածելուց է մեռել. . . Թէ և սիրտս տխրում, թէ և սիրտս տանջվում, թէ և սիրտս թուլանում, բայց ի՛նչ արած. որ միջոցը երբէք թոյլ չէ տալիս, ուրեմն, քաջ զօրականք, ամրացրէք ձեր բազուկները, քաջացրէք ձեր սրտերը և պատրաստ կացէք:

## ՏԵՍԻԼ Ժ. (Շտապաւ մտանում Սիսակ):

## ՆՈՒՊԱՐ ԵՒ ՍԻՍԱԿ:

ՍԻՍԱԿ: (Շտապելով մտանում):

Շտապում եմ յայտնելու Տէր իմ, որ չարահոգի Նիկիփօրը, իւր զօրքերով հանդերձ կամենում է յանկարծակի յարձակուել մեզ վրայ:

ԴԱՒԻԹ:

Ուրեմն, բացէք քաջերս պատերազմի դրօշակը:

ՍԻՍԱԿ: (Նոյն էն տանում):

Պատրաստ է Թագաժառանգ Տէր:



ԱՏՈՄ: (Նայելով դէպի դուրս):

Ահա նոցա զօրքը գալիս են, լաւ կլինի որ նոցա առաջը փակենք:

ՇԱՊՈՒՀ: (Նայելով դուրս, հեռանայոյց է անում):

Քաջ զօրականք, տեսնում էք, որ թշնամին ի՛նչ կատաղութեամբ գալիս է մեզ վրայ. ուրեմն պատրաստ եղէք, որ այս յաղթութեան օրը և՛ նշանաւոր մի մեծ օր է. (առ Դաւիթ) Թագաժառանգ Տէր, մե՛նք՝ ահա գնումենք. իսկ Դուք առ այժմ, այստեղից նայէք. որովհետև այժմ Ձեր գալը շատ վտանգաւոր է. (դառնալով առ զօրքերը) քաջ եղբայրներ, հաւատարիմ ընկերներ, վառէք ձեր սրտերը քաջութեամբ՝ հանէք ձեր սրերը, և միանուագ կատաղութեամբ՝ վրայ յարձակուէք. դէհ գնանք պատերազմ: (Վերջի խօսքերը ասելուն պէս՝ իմերայն գնում են, և բեմի ետևիցին, շուտ շուտ վազելով ով ու յուր՝ սրերը երկար նայելով, երբ պատերազմում են, որոնց դղրդոյն ձայները՝ լսվում են հանդիսականաց մէջ):

## ՏԵՍԻԼ ԺԱ.

## ԴԱՒԻԹ ԵՒ ԱՏՈՄ:

ԴԱՒԻԹ:

Բայց դու՝ Ատոմ եղբայր, այդ տեղից (հեռանայոյց է անում բեմի այն կողմից՝ որով գնացել են զօրքը) նայիր, որ երբ տեսնես այն չար Նիկիփօրին՝ իսկոյն ինձ յայտնիր. որ ես իմ ձեռովս պիտի բռնեմ նորան և գետին թաւալեցնեմ:

ԱՏՈՄ:

Շատ լաւ Թագաժառանգ եղբայր: (Վհատած նայում, թերև առ թերև՝ գլուխը շարժում յուզելով):

ԴԱՒԻԹ: (Տխրաձայն):

Այժմ ես նորան ցոյց կուտամ, թէ ինչ նշանակէ յանդըգ-նութեամբ դեսպան ուղարկել մեզ վերայ. թո՛ղ, այն գոռոզը՛ լա՛ւ մտածի, որ ես Վրաց Գորգի թագաւորը չեմ, և ոչ էլ միւսները. ես նորան ցոյց կուտամ իր գոռոզութիւնը. նա՛ դեռ չի տեսել իմ բազուկների զօրութիւնը, և իմ սրիս սարսափելի փայլումը. ես, այդ չա՛ր ծնունդին՝ այստեղ՝ (ձեռքով ցոյց է տալով) մի հարուածով գետնի վրայ պիտի թաւալացնեմ:

ԱՏՈՄ:

Գահաժառանգ եղբայր, ահա՛, ահա՛ (ցոյց տալով) մօտեկա-ցաւ չար Նիկիֆօրը:

ԴԱՒԻԹ:

Ատոմ, ուրեմն կաց դու այստեղ. ես շուտով կվերադառնամ: (Գնում է):

## ՏԵՍԻԼ ԺԲ.

## ԱՏՈՄ: (Առանձին):

ԱՏՈՄ:

(Մերթ նայում է պատերազմին՝ և մերթ առաջ է գալիս): Այս ի՜նչ կատաղելի բան է Տէր Աստուած, ես երբէք պատերազմ չեմ տեսել. այս ի՛նչ զարհուրելի տեսարան է. ո՜հ ինչպէս սաստկացաւ պատերազմը . . . (Դէպի դուրս շարժելով) ինչպէս թափվում են արիւնները, ո՜հ ինչպէս վե՛ր են թափել միմեանց վե-րայ . . . խե՛ղճ մարդիկ. ի՛նչպէս միմեանց խփումեն. (Յանկարծ չոքում է և ձեռները դէպի երկինք աղօթք է տալով) Տէր Աստուած, Դու՛ մեզ օգնիր, մե՛զ ողորմիր, տո՛ւր յաղթութիւն մեր եղբօր



Դաւթին, որովհետև այժմ հայր չունինք, մեռաւ մեր Սենե-քերիմ թագաւորը, այժմ մեր եղբայրն է՝ մեր հայրը, մեր տէ-րը և մեր թագաւորը: (Վեր է կենում տեղից) գնում դէպի պա-տերազմը: (Գնում է):

## ՏԵՍԻԼ ԺԳ.

(Դաւիթն ու Նիկիֆօրը միմեանց մօտ են գալիս որ կռուեն, յանկարծ երկուսն էլ իրենց ձիաներն սանձերն բռնած՝ հանդէպ կանգնում են, և հանդիպելով միմեանց՝ չեն էն կռուում մի 2 կայլ, բայց երկուսն էլ կատաղած ու-[illegible]):

ԴԱՒԻԹ: (Պատահելով միմեանց):

Անիրաւ Նիկիֆօր Ծովիկ, ես քեզ այս սրով պիտի թագաւոր պսակեմ, լա՛ւ ճանաչիր թէ ո՞վ եմ ես, դու՝ չար իշխան Յունաց, էլ իմ ձեռքից չես կարող ազատուիլ. արդեօք ո՞ւմ մօտ էիր յանդգնութեամբ դեսպան ուղարկում. չա՛ր, մի՛-թէ չէի՞ր զգում որ ես քաջ Սենեքերիմի թագաժառանգն եմ:

ՆԻԿԻՖՈՐ:

Քե՛զ մօտ, քեզ, Դաւիթ, այդ սուրը՝ տեղը դիր, թէ ո՛չ ես սարսափելի կերպով քե՛զ էլ, սուրդ էլ՝ կջարդեմ. ի՛նչ, քեզ-պէս մի վատթար Հա՞յ պիտի ինձ վնասի, երբէք, հեռու, անի-րաւ, ես պիտի խլեմ ո՛չ թէ միայն քո հօր Սենեքերիմի թա-գաւորութիւնը, որը ինձնից սարսափելով մեռաւ՝ այլ և նոյն իսկ Վասիլ Կայսրի տէրութիւնը. լա՛ւ ճանաչէք բոլորդ՝ որ ես քաջ և յաղթանդամ Յոյն Նիկիֆօր Ծովիկն եմ:

ԴԱՒԻԹ:

Գիտեմ, գիտեմ որ դու չար և բարբարոս Նիկիֆօրն ես. բայց ո՞ւմ ձեռքից ես խլում արդեօք Տէրութիւն. կշռիր խօս-

*քերդ չէր Նովէկ. չէտի դիր յանդգնութեանդ, (Պատրաստուած սուրը տալով վրայ է գալիս) իմացիր որ Թագաժառանգ քաջ Դաւիթի հետ ես կանգնած պատերազմի դաշտի մէջ. Ճանաչէ՛ր ինձ, անիծեա՛լ զաւակ, որ ես այն խեղճերը չեմ որոնց գերի ես առել քո յիմարութեանը, այլ մի հուժկու՝ և քո իսկ արիւնարբուն եմ, ափսոսումեմ ես, այս լայնատարած դաշտի հողը՝ որի վերայ այժմ քեզ պիտի թաւալեցնեմ։*

ՆԻԿԻՖՕՌ։ (Վրայ վազելով յարձակւում էր խփելու)

*Ո՞ւմ պիտի թաւալեցնես գետին, անպիտա՛ն Դաւիթ։*

ԴԱՒԻԹ։

*Անպիտա՛ն. (Սուրը տալով) Ես քեզ ցոյց կուտամ անպիտանութիւնը, անիծեա՛լ իժի ծնունդ։*

ՆԻԿԻՖՕՌ։

*Դաւիթ, Դաւիթ, սարսափիր ինձնից, արդեօք իժի ծնունդը ես եմ, թէ դու։*

ԴԱՒԻԹ։

*Դու, դու, և ոչ թէ իժի՛ այլ և սատանի ծնունդ։ (Սկսում են խփել՝ բայց սրերը և վահանները արգելւում են)։*

ՆԻԿԻՖՕՌ։ (Կատաղած)։

*Սատանի ծնունդ, ահա՛ ես քեզ այս րոպէիս սրիս ճարակ կանեմ։ (Խփում է բայց չէ դիպչում)։*

ԴԱՒԻԹ։ (Վերջին աստիճանի կատաղած)։

*Եթէ այդպէս, դէհ լափ փուչ անպիտան, ահա՛ առ վերջին հարուածս՝ (Խփում է) և մեռի՛ր քաջ Դաւթից։*



ՆԻԿԻՖՕՌ։

(Հարուածը ստանալուն պէս՝ վէր է ընկնում և կիսաշնչական ասում)։

**Ո՜վ, ան . . . պի . . . տան . . . Դա . . . ւիթ . . . ան . . իծ . .**

(Ընկնում և մեռնում)։

## ՏԵՍԻԼ ԺԴ. (Ներս մտնում են բոլոր զօրքը և զօրապետերը)։

## ԲՈԼՈՐԸ։

ՇԱՊՈՒՀ։

*Գահաժառանգ Տէր քաջ Դաւիթ, թշնամեաց բանակն յաղթուեցաւ և փախաւ. բայց դաժան Նովէկ Նիկիֆօրը չէ երևում։*

ԴԱՒԻԹ։

*Չէ՞ երևում՝ ահա՛ (ցոյց է տալիս սրով) թաւալգլոր ընկած մեր ոտների տակ։*

ԲՈԼՈՐԸ։

(Ուրախանալով յետ են դառնում, յետոյ ի միասին գոչում են)։

*Յաղթութիւն փառաւոր յաղթութիւն, կեցցէ Արքայ մեր Դաւիթ։*

(Յետոյ վարագոյրը իջնում է)։

## ՎԵՐՋ։

# ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ։

Որպէս զի, մեր սիրելի ընթերցողք կարելի եղածին չափ ծանօթանան, Օղրեր. գութեանս զանազան միջոցներում պատահած, ամենաճշգրիտ սարսափելի անցիցն և եղելոց օրօրեալ և տատանեալ ամբողջ Հայաստանի մէջ, յոյժ կարեւոր ենք համարում արտատպել քանի մի տող նոյն ժամանակի պատասառող երկուականաւոր պատմաբաններից. որ աներկբայ եմք սիրով պիտի ընկալնեն:

“Որք եկեալ զաշխարհս յաւեր դարձուցին. վայ նոցա գալոյն յարեւս. և վայ “որ նոքա անց և դարձ արարին. աՀա ազգ չար և անողորմ, ազգ դառնասիրտ “և Հարկանող„: Արշալոյս Արարատեան. Գլ. Ա. երես 5: Վենետիկ 1844 Թ:

“Եւ Թագաւորն . . . պատուէր տայ մեծասաստ Հրամանաւ մի ողորմիլ ծե- “րոյն և մի երիտասարդին, մի տղային և մի Հասակաւ կատարելոյն, մի առն և “և մի կնոջ, և մի ամենեւին ամենայն Հասակի. և այսու ձեռնարկութեամբ քան- “դեալ ապականէ գաւառս երկրատասան: Յորս էր տեսանել տեսութիւն ողորմելի “և բազում արտասուաց արժանի. քանզի ապարանք արքունաշէն տաճարաց . . - “Հրայրեացք անկեալ կործանեցան, և որք նոցին տեարքն առ նմին սրակոտորք “. . . : Արդ եկ համարեա ինձ զօրինակն զայն ժամու արարածին և զպատուա- “կան և զՀարկաւոր այլս ծերոցն ընդ արիւն և ընդ ապաժուժ թաթաւեալ, զերիտա- “սարդան սրակոտորս, զանթիւ և զանՀամար զաչացուան զարդ զլուսարանս խա- “ւարեցուցին: Ազատ կանայք ի Հրապարակս ելեալ, և զգօտին ի գլխոցն ի բաց “առեալ. անպատկառ ընդդէմ արեւու ի խայտառականս անկեալ . . . առաջի “գերչացն գնան, մերկ ի զարդուց, անկեալ ի պատուոյ, մատնեալ ընդ բիր ա- “նարգանաց: Իսկ զկաթնասուն տղայսն, զկէսն ի գրկաց մարցն առեալ զքարի “Հարկանէին. և զայլս ի գիրկս մարցն աշտէիւք խոցեալ ընդ կաթն մարցն զա- “րիւն մանկանցն խառնէին. և զկէսն ի կիցս ճանապարՀացն ընկեցեալ ի սմբակս “երիվարացն, առ Հասարակ սատակէին„: Արշալոյս Արարատեան. Գլ. Բ. երեսք 10 — 11 :

“Անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում ողբոց արժանի. զի զմանս “ի նոցանէ որ ի բուռն անկանէին սրամահ սպանանէին. և որք յառաջար տե- “ղիս անկանէին և ամրանայրին, նետիւք խոցոտեալ սատակէին. և զբազումս յան- “ձաւին վերայ ելեալք մեծամեծ վիմօք գլաջարդ առնէին. այոց զիակունքն զը- “լխթաւալ ի վերայ միմեանց շեղջեալ իբրև զկոյտս փայտաՀատաց, զառաջիկայ “զձորն լնուին: Վայ և աւաղ շատ դառն լսելոյ աւուրն այնորիկ. զի քաջ արքն “վառեալ զինու և սրտմտութեամբք եռացեալք, և վառքն թալկանայրին, կանա- “ցիք յիմարէին և երիտասարդք խիզախէին . . : Քանզի ամենայն կողմանց պատ- “նէշ թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ սէր սիրելեաց, և ոչ աւաղ “բարեկամաց, մոռացաւ Հայր զգութ որդւոց, և մայր զսէր նորածին մանկանց.



“Ոչ կարէր յիշել անդ կին նորաՀարսն զսէրն փեսայի. և ոչ զմտաւ ածէր այր ‘‘զգեղ ցանկալի ամուսնոյն իւրոյ, պակասեցան երգք պաշտօնէից, և Հատան ‘‘ձայնք սաղմոսաց ի շրթանց սաղմոսասաց. կալաւ առ Հասարակ զամենեսեան զո- ‘‘ղումն և երկիւղ: Եւ ի սաստիկ տագնապէն, բազում կանայք յղի գոլով, վիժէին ‘‘զմանկունս. և անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի. և քան զառաջինն ողոր- ‘‘մագոյն և բազում ողբոց արժանի: . . . Զի ոմանք յանգելոցն դեռ յոգիս կէին ‘‘և յեզունք նոցա ի ծարաւոյ ցամաքեալք, նեղ և նուրբ ձայնիւ Հայցէին Հայթայ- ‘‘թանս ծարաւոյն գտանել. և ոչ ոք էր որ տայր„ . . . : Գլ. ԺԱ. երեսք 50—51: Արշալոյս Արարատեան:

‘‘Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. ‘‘և շարժեալ զօրք բազումք ի Թուրքաստանէ. որոց երիվարք արագունք իբրև ‘‘զարծուիս, և սմբակք նոցա իբրև զվէմս Հաստատունք, աղեղունք լարեալք, և ‘‘սլաքեալ նետք նոցա, գօտեւորեալք քաջապէս, և անլուծանելի ունելով զխրացս ‘‘կօշկաց: Եւ ելեալ ի գաւառն Վասպուրականի. յարձակեցան ի վերայ քրիստո- ‘‘նէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւա- ‘‘ռն Բասեան, և մինչև ի գաստակերտն մեծ, որ կոչի Վաղարշաւան, քանդեալ ‘‘ապականեցին գաւառս քսան և չորս սրով և Հրով և գերութեամբ„ :

‘‘Ողորմագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս: Որք ‘‘իբրև զառխծս ընթացան, և իբրև կորիւն առիւծուց անողորմաբար արկին զգլխ- ‘‘կունս բազմաց գէշ գազանաց և թռչնոց երկնից„ : Արշալոյս Արարատեան: Գլ. ԺՄ. երես 44:

‘‘Ելին ազգն Թուրքաց և աւերեցին զգաւառն Վասպուրականի և յոյժ նեղե- ‘‘ցաւ թագաւորն նոցա Սենեքերիմ: Վասնորոյ ետ զաշխարՀն իւր ի Վասիլ Թա- ‘‘գաւորն և էառ փոխան զՍեբաստիայ գաւառօքն. բայց զվանօրայսն ոչ ետ Սե- ‘‘նեքերիմ ի Վասիլ. զի կեցցեն ազատ և ազօթս արասցեն Սենեքերիմայ և որ- ‘‘դւոյ նորին„ :

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԵՑ ԱՆԵՑԻ:

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մենք արդէն երկու տարի առաջ, գնել էինք Մոսքուայում այս Ողբերգութեանս համար տպելու թուղթը, հա՛ստ և մաքո՛ւր տեսակից. որպէս է՛ այժմ տպուած առաջին 32 ամբողջ երեսները։ Բայց երբ տպելը սկսեցինք, բացեցինք հակը, և երեսից սկսած վերցնում էին և տպում. և երբ տպագրութիւնը հասաւ չորրորդ մամուլը, յանկարծ տեսանք որ մէջը ողջ այսպէս բարակ և ուրիշ թուղթ դուրս եկաւ. էլ ի՞նչ. մնացինք ողջ զարմացած. որ ճարահատեալ ստիպուեցանք շարունակել տպագրութիւնը 5 երրորդ մամուլից, ահա՛ այս խակ թղթով. որ հեռո՛ւ էր բոլորովին մեր սրտից և ցանկութիւնից. բայց ի՞նչ արած։ Ուստի խնդրո՛ւմեմ պատուական ընթերցողներից խոնարհաբար ներողութիւն։



| Թիւ բոլոր բաժանորդաց։ | Թիւ ըստ տեղւոյն բաժանորդաց։ | ՑՈՒՑԱԿ Մեծարգոյ բաժանորդաց ՍԵՆՆԵՔԵՐԻՄԱՅ թագաւորի Հայոց Վասպուրականի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ հինգ արարուածով։ | Օրինակի քանակն։ |
|---|---|---|---|
| | | **ԱԶԱՏԱԿ Գիւղ Դուրալուգէօղէ։** | |
| 1 | 1 | Մարգար Ալլահվերդեան Մարտիրոսեանց. | 1 |
| 2 | 2 | Մնացական Տէր Մկրտչեանց . . . | ,, |
| 3 | 3 | Գաղալ Խուդավերդեանց . . . | ,, |
| | | **ԱՂԲԱՇ Գիւղ։** | |
| 4 | 1 | Գէորգ Սիւջեան. Սուրեայ և Տանուտէր . . | ,, |
| 5 | 2 | Յովակիմ Տէր Մկրտչեանց . . . | ,, |
| | | **ԱՅԱՍԼՈՒ Գիւղ։** | |
| 6 | 1 | Յովհաննէս Տէր Սահակեանց. . . | ,, |
| | | **ԱՅԵԱՐ Գիւղ, Շարուրայ։** | |
| 7 | 1 | Մարտիրոս քահանայ Տէր Մկրտչեանց . . | ,, |
| | | **ԱՌԻՆՋ Գիւղ, Նախիջևանու։** | |
| 8 | 1 | Աւագ քահանայ Տէր Յովհաննէսեան . . | ,, |

| | | | |
|---|---|---|---|
| | | **ԱՍՏԱՊԱՏ Գիւղ, Նախիջեւանու:** | |
| 9 | 1 | Սարգիս քահանայ Տէր Իսահակեան . . | „ |
| | | **ԱՍՏՐԱԽԱՆ:** | |
| 10 | 1 | Յովհաննէս Գաբրիէլեան Ուլուխանեանց . . | 2 |
| 11 | 2 | Նիկողայոս Սիմէօնեան Կապաչկեանց . . | 6 |
| 12 | 3 | Նիկողայոս Յակոբեան Մարտիրոսեանց . . | 2 |
| | | **ԱՐՓԻ Գիւղ, Դարալագեազի:** | |
| 13 | 1 | Մկրտիչ քահանայ տիրացու Մկրտչեանց . . | 1 |
| 14 | 2 | Սանփան Ղարախանեանց . . . . | „ |
| | | **ԲԱՇՔԵԱՆԴ Գիւղ, Դարալագեազի:** | |
| 15 | 1 | Դպիր Գալուստ Ղամբարեանց . . . | „ |
| | | **ԲԱԳՈՒ:** | |
| 16 | 1 | Թադէոս Աւագ քահանայ Բուդաղեանց . . | 3 |
| 17 | 2 | Մկրտիչ Աւագ քահանայ Սաղունչեանց . . | 1 |
| 18 | 3 | Խորէն քահանայ Միրզաբէգեանց . . . | „ |
| 19 | 4 | Աբրահամ քահանայ Աբրահամեանց . . | „ |
| 20 | 5 | Յովհաննէս քահանայ Տէր Օհանեանց . . | „ |
| 21 | 6 | Աղէքսանդր Ֆոն–Վիշնէ. ատենադպիր . . | 2 |
| 22 | 7 | Աւագ Գրիգորեանց . . . . . | 1 |
| 23 | 8 | Գրիգոր Յովհաննէսեան Դիլլարեանց . . | „ |
| 24 | 9 | Դանէվրէժ. Շուշեցի . . . . | „ |
| 25 | 10 | Երեմիա դպիր Տէր Յովհաննէսեանց . . | „ |
| 26 | 11 | Թադէոս Եաղուբեանց . . . . | 2 |
| 27 | 12 | Խաչատուր Կիրիեանց . . . . | 2 |
| 28 | 13 | Կարապետ Քոչարեանց . . . . | 2 |
| 29 | 14 | Մարգար Տէր Յովհաննէսեանց Տիրացու. . | 1 |



| | | | |
|---|---|---|---|
| 30 | 15 | Միքայէլ Տէր Յովհաննէսեանց Ուսուցիչ Շուշ. Դպրոցին . . . . . . | 1 |
| 31 | 16 | Մկրտիչ Վարդանեանց. . . . . | 2 |
| 32 | 17 | Սահակ բէգ Տէր Ստեփանեան Գուրգէնեանց փաստաբան . . . . . | 4 |
| 33 | 18 | Սերգէյ Համաբանդեանց . . . . | 3 |
| 34 | 19 | Սիմէօն Տէր Յովհաննէսեանց գրաշար . . | 1 |
| | | **ԳԱՆՁԱԿ:** | |
| 35 | 1 | Թէոդորոս Վարդապետ Հիրակունի վանահայր և ուսուցիչ վանական Դպրոցի սրբոց Թարգմանչաց Վանից Խաչաքարայ. . . . | 2 |
| 36 | 2 | Կարապետ Տէր Ստեփաննոսեան Մելիք Մովսէսեանց ուսուցիչ Օրիորդաց Դպրոցի ի գիւղն Խաչաքարայ. . . . . . | 1 |
| 37 | 3 | Սմբատ Թէոդորեան Հիրակունի ուսուցիչ ի գիւղն Քօլանլուան Նոր Բայազիդայ. . . . | 2 |
| | | Աշակերտք վանական Դպրոցի Ս. Թարգմանչաց Վանից: | |
| 38<br>39 | 4 | Աղէքսանդր Մխիթարեան Բարսեղեանց, Նոր Բայազիդայ Զաղալու գիւղից . . . | 1 |
| 40 | 5 | Առքէս Մկրտչեան Եպիսկոպոսեանց Խաչաքարայի. | „ |
| 41 | 6 | Աւետիք Տէր Յով. Տէր Աւետիքեանց. — | „ |
| 42 | 7 | Կարապետ Մնացականեան Բաղիեանց — | „ |
| 43 | 8 | Կարապետ Բաղիեանց. . . . — | „ |
| 44 | 9 | Կարապետ Մովսէսեան Մելիքեանց Փէթ գիւղից. | „ |
| 45 | 10 | Մանուկ Յովհաննէսեան Մանուկեանց, Նոր–Բայազիդայ Զաղալու գիւղից . . . | „ |
| 46 | 11 | Մարտիրոս Սարգսեան Բաղալեանց աշակերտ Բանանցայ Դպրոցի . . . . . | „ |
| 47 | 12 | Մարտիրոս Եղեազա. Եպիսկոպոսեանց Խաչաքարայի. | „ |
| 48 | 13 | Մկրտիչ Յովսէփեան Եպիսկոպոսեանց — | „ |
| 49 | 14 | Յակոբ Յարութիւնեան Մկրտչեանց. — | „ |

| | | | |
|---|---|---|---|
| 50 | 15 | Յովհաննէս Ստեփանեան Յարութիւնենց. — | 1 |
| 51 | 16 | Յովսէփ Ստեփանեան Յարութիւնեանց. — | ,, |
| 52 | 17 | Յարութիւն Խաչատրեան Յովակիմեանց, Բուռ-ռում գիւղից . . . . . . | ,, |
| 53 | 18 | Մենեքերիմ Սարգսեանց Նոր—Բայազիդայ Զա-շալու գիւղէց . . . . . | ,, |
| 54 | 19 | Ստեփան Յարութիւնեան Աբէկեցի. . . | ,, |
| 55 | 20 | Վարդան Գէորգեան Մուրատեանց Նոր-Բայա-զիդայ Զաշալու գիւղից . . . . | ,, |
| 56 | 21 | Վահան Գրիգորեան Մամիկոնեանց Փէք գիւղից. | 2 |
| 57 | 22 | Ընթերցարանն հոգևոր դպրոցի*) . . . | 1 |
| 58 | 23 | Մկան Խօջայեանց Փէքեցի, Հոգաբարձու Դպրոցի. | ,, |
| 59 | 24 | Պօղոս Ներսէսեան Տէր Ներսէսեանց աշակերտ Պրոգիմնազիայի. . . . . | ,, |

## ԳԶՆՈՒԹ Գիւղ, Հին Նախիջևան։

| | | | |
|---|---|---|---|
| 60 | 1 | Մատթէոս քահանայ Տէր Յովհաննէսեանց. . | ,, |

## ԴԱՒՐԷԺ։

| | | | |
|---|---|---|---|
| 61 | 1 | Գեր. Բ. Ս. Անդրէաս Արքեպիսկոպոս . . | 2 |
| 62 | 2 | Կ. Հաճիեան. . . . . . | 1 |
| 63 | 3 | Մահտեսի Սիմէօն Թումանեանց. . . . | ,, |
| 64 | 4 | Մարգար Հ. Նազարբէգեանց. . . . | ,, |
| 65 | 5 | Մովսէս Ներսէսեանց. . . . . | ,, |
| 66 | 6 | Մուշեղ Մուշեղեանց . . . . . | ,, |
| 67 | 7 | Յարութիւն Գ. Խուդավերդեանց . . . | ,, |
| 68 | 8 | Յովսէփ Ա. Գարաբէգեանց . . . . | ,, |
| 69 | 9 | Օհան Տէր Զաքարեանց. . . . . | ,, |

(*) ընծայում է գ. Ներսէսն տէր Ներսէսեանց։



## ՆԱՐՄԶԱՑ Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 70 | 1 | Սարգիս քահանայ Տէր Սարգսեան Դօլվաթեանց. | 1 |
| 71 | 2 | Հայրապետ Միրզայեանց. . . . . | ,, |

## ԵՐԵՒԱՆ։

| | | | |
|---|---|---|---|
| 72 | 1 | Աբրահամ Բաբայեան Միրաքիզեան.ց. . . | ,, |
| 73 | 2 | Աղէքսանդր Մ. Փարսադանեանց. . . . | ,, |
| 74 | 3 | Աշոտ Տէր Վարդանեանց. . . . . | ,, |
| 75 | 4 | Արշակ Յակոբեան Մատթէոսեանց . . . | ,, |
| 76 | 5 | Արտաշէս Յակոբեանց, ուսուցիչ. . . . | ,, |
| 77 | 6 | Եղիսաբէթ Մելիք Յակոբեանց. . . . | ,, |
| 78 | 7 | Էմին Տէր Գրիգորեանց . . . . | ,, |
| 79 | 8 | Թագուհի Մելիք Յակոբեանց. . . . | ,, |
| 80 | 9 | Թեմական Դպրոցն Հայոց*) . . . . | ,, |
| 81 | 10 | Կոստանդ Տէր Ստեփաննոսեանց . . . | ,, |
| 82 | 11 | Ղազարոս Տէր Յակոբեան Ղազարեանց . . | ,, |
| 83 | 12 | Յակոբ Տէր Յովսէփեանց. . . . . | ,, |
| 84 | 13 | Յովհաննէս Բէգլարեանց. . . . . | ,, |
| 85 | 14 | Պօղոս Մելիք Դադայեանց. . . . . | ,, |
| 86 | 15 | Սարգիս Ստեփանեանց. . . . . | ,, |
| 87 | 16 | Վահան Պօղոսեանց. . . . . | ,, |
| 88 | 17 | Տիգրան Ափրիկեանց. . . . . | ,, |
| 89 | 18 | Քրիստափոր Հախնազարեանց. . . . | ,, |
| 90 | 19 | Օրիորդաց Դպրոցն Հայոց Ս. Գայիանեայ **) . | ,, |

## ՋԱՔԱԹԱԼԱՑ։

| | | | |
|---|---|---|---|
| 91 | 1 | Յովհան Աւագ քահանայ Առամեանց. . . | ,, |
| 92 | 2 | Աղէքսանդր Շահեանց՝ Մեղրեցի. . . | ,, |
| 93 | 3 | Աղէքսանդր Զորեանց. . . . . | ,, |

(*) Նուէր Աշխատասիրողից։

(**) Նուէր Աշխատասիրողից։

| | | | |
|---|---|---|---|
| 94 | 4 | Առաքել Գարախանեանց՝ Գանձակեցի. . . | 1 |
| 95 | 5 | Առաքել Գ. Առաքելեանց՝ Օրդուբաթցի. . | ,, |
| 96 | 6 | Առաքել Թումաքալեանց՝ Նուխեցի. . . | ,, |
| 97 | 7 | Դաւիթ Միքայէլեանց Ցղնայեցի. . . . | ,, |
| 98 | 8 | Ընթերցարանն Հայոց Զաքաթալու*) . . | ,, |
| 99 | 9 | Թադէոս Յովհաննէսեան Խաչումեանց. . . | ,, |
| 100 | 10 | Հայրում Յով. Հայրումեանց՝ Ցղնայեցի. . | 2 |
| 101 | 11 | Մկրտիչ Սիմ. Մնացականեանց՝ Տնակերտցի . | 1 |
| 102 | 12 | Մկրտիչ Պատուականեանց՝ Մեղրեցի. . . | ,, |
| 103 | 13 | Սիմէօն Մելքումեան Մարութեանց. . . | ,, |
| 104 | 14 | Ստեփան Մեսրոբեանց. . . . . . | ,, |
| 105 | 15 | Վասիլ Սիմէօնեան Խօջայեանց. . . . | ,, |

## ԶՕՀՐԱԲԼՈՒ Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 106 | 1 | Զաքար Տէր Մարգարեան . . . . | ,, |
| 107 | 2 | Վասիլ Յակոբեան Բաղալեանց . . . | ,, |

## ԷՐՏԱՓԻՆ Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 108 | 1 | Գրիգոր Տէր Առաքեան Խօջայ—Մուրադեանց. | ,, |
| 109 | 2 | Փանիկ Գարիբեան . . . . . | ,, |

## ԷՋՄԻԱԾԻՆ։

| | | | |
|---|---|---|---|
| 110 | 1 | Եփրեմ Սուքիասեանց . . . . . | ,, |
| 111 | 2 | Թադէոս Աստուածատուրեան Զաքարեանց **) Աշակերտ Ճեմարանի . . . . | ,, |
| 112 | 3 | Յովհաննէս Գառնակերեանց Ոսկերիչ . . | ,, |
| 113 | 4 | Յովհաննէս Սարգիսբէգեանց . . . . | ,, |
| 114 | 5 | Ստեփաննոս Ճուղուրեանց Կօշկակար . . | ,, |

(*) Նուէր Աշխատասիրողից։

(**) Ընծայում է Դուրայից Գ. Աստուածատուրի Զաքարեանց։



## ԹԱՄԱՄԼՈՒ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 115 | 1 | Յակոբ Աւագ քհնյ. Բէգզադեանց՝ գործակալ . | 1 |

## ԹԷՈԴՈՍԻԱՅ։

| | | | |
|---|---|---|---|
| 116 | 1 | Աղէքսանդր Վրթանէսեան Սարգիսեանց . . | 1 |
| 117 | 2 | Աղէքսանդր Յովսէփեան Ալթնճեանց . . | ,, |
| 118 | 3 | Գէորգ Վրթանէսեան Չիմպերճեանց. . . | ,, |
| 119 | 4 | Գրիգոր Մելքոնեան Փամճուղեանց. . . | 3 |
| 120 | 5 | Խաչատուր Սարգիսեան Խլէբնիկեանց. . . | 1 |
| 121 | 6 | Կարապետ Գաբրիէլեան Քուպեանց. . . | ,, |
| 122 | 7 | Մինաս Գաբրիէլեան Քուպեանց. . . | ,, |
| 123 | 8 | Մկրտիչ Յովհաննէսեան Լազարեանց. . . | ,, |
| 124 | 9 | Պետրոս Սուպաղեանց. . . . . . | ,, |
| 125 | 10 | Վարդան Աղարեան Պապեանց. . . . | ,, |
| 126 | 11 | Օվսաթ Սարգսեան Խլէբնիկեանց . . . | 2 |

## ԻՒՎԱՅ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 127 | 1 | Բարսեղ Տէր Բարսեղեանց. . . . . | ,, |

## ԽԱԼԼՈՒ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 128 | 1 | Յարութիւն Առաքեան. . . . . | ,, |

## ԽԱՉԻԿ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 129 | 1 | Աստուածատուր Մելիք Գալուստեանց. . . | ,, |
| 130 | 2 | Զաքար Պետրոսեանց . . . . . | ,, |
| 131 | 3 | Պետրոս Յակոբեան. . . . . . | ,, |

## ԿԺԱԶՈՐ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 132 | 1 | Յարութիւն քահանայ Բաղալեանց. . . | ,, |

| | | | |
|---|---|---|---|
| | | **ԿՈՂՊ, Գիւղ։** | |
| 133 | 1 | Յովհաննէս Առաքելեան Տէր Առաքելեանց. | 1 |
| | | **ԿՆԻՇԻԿ, Գիւղ։** | |
| 134 | 1 | Թադէոս քահանայ Աբրահամեան | ,, |
| 135 | 2 | Մկրտիչ Մելիք Սարգսեանց | ,, |
| 136 | 3 | Սիմէօն Օհանեանց. | ,, |
| | | **ՀԱՄԱՆՔԵԱՆԴ, Գիւղ։** | |
| 137 | 1 | Յարութիւն Խուդավերդեան | ,, |
| | | **ՂՈՒԲԱՅ։** | |
| 138 | 1 | Աւագ քահ. Ափշարեանց | ,, |
| 839 | 2 | Յովսէփ քահ. Աշուղեանց | ,, |
| 140 | 3 | Աղէքսանդր Տէր Պօղոսեանց | ,, |
| 141 | 4 | Ահարոն բէգ Ղասաբեանց | ,, |
| 142 | 5 | Աւետիս Աղամալեանց | ,, |
| 143 | 6 | Աւետիս Գ. Աղամալեանց՝ Շուշեցի | ,, |
| 144 | 7 | Դանիէլ Սարումեանց | ,, |
| 145 | 8 | Կարապետ Մխեբլանեանց | ,, |
| 146 | 9 | Կոստանդիանոս Մարտիրոսեանց | ,, |
| 147 | 10 | Մարտիրոս Փիրիեանց | ,, |
| 148 | 11 | Մ. Գալստեանց՝ Տիտուլեարնի Սովէտնիկ | ,, |
| 149 | 12 | Մկրտիչ Գօդովեանց՝ Տիտուլեարնի Սովէտնիկ | ,, |
| 150 | 13 | Միրզաջան Յովհաննիսեանց | ,, |
| 151 | 14 | Մովսէս Տէր Յովհաննիսեանց | ,, |
| 152 | 15 | Մովսէս Մալխասեանց | ,, |
| 153 | 16 | Մինաս Բաբայեանց | ,, |
| 154 | 17 | Յարութիւն Բալայեան Սափարեանց | ,, |
| 154 | 18 | Յակոբ Բալայեանց | ,, |
| 156 | 19 | Յօնան Յ. Ղահրամանեանց | ,, |
| 157 | 20 | Ռուստամ Բէգ Ղազարեանց | ,, |



| | | | |
|---|---|---|---|
| 158 | 21 | Սմբատ Ղալաբէգեանց | 1 |
| 159 | 22 | Սողոմոն Բաղդասարեանց | ,, |
| | | **ՂՈՅԼԱՍԱՐ, Նուխւոյ Գիւղ։** | |
| 160 | 1 | Ղազար քահ. Տէր Վարդանեան | ,, |
| | | **ՂՕՅԹՈՒԼ, Գիւղ։** | |
| 161 | 1 | Մկրտիչ քահ. Տէր Յովհաննէսեան | ,, |
| | | **ՂՕՐԱԴԻԶ, Գիւղ։** | |
| 162 | 1 | Մահտեսի Բաբայ Մահտ. Սարգսեանց | ,, |
| | | **ՄԱՐՏԻՐՈՍ, Գիւղ։** | |
| 163 | 1 | Աբրահամ քահ. Տէր Յովհաննէսեանց | ,, |
| 164 | 2 | Մարտիրոս Մելիք Միրզայեանց՝ Տանուտէր | ,, |
| | | **ՄՆԼԻՂԿԱՅ, Գիւղ։** | |
| 165 | 1 | Առաքել քահ. Տէր Աստուածատուրեան | ,, |
| | | **ՄՆԾՈՒՓ, Գիւղ։** | |
| 166 | 1 | Թադէոս քահ. Տէր Պետրոսեան | ,, |
| | | **ՄՈՍՔՈՒԱ։** | |
| 167 | 1 | Լեւոն Եգորիչ Խան-Աղեանց՝ [illegible] | ,, |
| | | **ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅ Փոխանորդաց։** | |
| 168 | 1 | Արսէն քահ. Տէր Սիմէօնեանց | ,, |
| 169 | 2 | Յովհաննէս քահ. Կիրակեանց՝ [illegible] | ,, |
| 170 | 3 | Ա. Խանդաղեանց. | ,, |

| | | | |
|---|---|---|---|
| 171 | 4 | Գէորգ Տէր Կարապետեան Տէր Պետրոսեանց . | 1 |
| 172 | 5 | Խաչատուր Երեմեանց . . . . | ,, |
| 173 | 6 | Յովակիմ Խաչատրեան Նալբանդեանց . . | ,, |

### ՄՆՀՐԸՐ — ԹԻՒՐՔԸՆԴ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 174 | 1 | Սահակ Բաբլոյեան՝ Տանուտէր . . . . | ,, |

### ՆՈՐՍ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 175 | 1 | Սարգիս քահ. Սմբատեանց . . . . | ,, |

### ՆԱԽԻՋԵՒԱՆ Քն։

| | | | |
|---|---|---|---|
| 176 | 1 | Աղէքսանդր Տէր Գասպարեանց . . . | 1 |
| 177 | 2 | Գէորգ Յովհաննէսեանց. . . . . | ,, |
| 178 | 3 | Գրիգոր Սարգսեան Յարութիւնեանց . . | ,, |
| 179 | 4 | Գրիգոր Տէր Բաղդասարեանց՝ [illegible] . | ,, |
| 180 | 5 | Իւան Տէր Յովակիմեան Ղուկասեանց . . | ,, |
| 181 | 6 | Կարապետ Աղամեան . . . . . | ,, |
| 182 | 7 | Հախնազար Համբարձումեանց. . . . | ,, |
| 183 | 8 | Համբարձում Կարապետեան Սայեադեանց. . | ,, |
| 184 | 9 | Մարկոս Սաֆարեանց . . . . . | ,, |
| 185 | 10 | Միքայէլ Մելիքեանց . . . . . | ,, |
| 186 | 11 | Մովսէս Առաքելեան օգնկն. գաւառ. Պարուչիկ. | 2 |
| 187 | 12 | Նիկոլայ Աթարեգեանց . . . . . | 1 |
| 188 | 13 | Ստեփաննոս Գասպար. Տէր Աստուածատրեանց. | ,, |
| 189 | 14 | Ստեփաննոս Սարգսեանց. . . . . | ,, |
| 190 | 15 | Ստեփաննոս Սիթարեանց . . . . | ,, |

### ՆՈՐ — ԲԱՅԱԶԻՏ։

| | | | |
|---|---|---|---|
| 191 | 1 | Եզեկիէլ Պետրոսեան Խարբերդցի . . . | ,, |
| 192 | 2 | Ենոք Մահ. Յակոբեան Փիլոյեանց. . . | ,, |
| 193 | 3 | Թադէոս Նիկողայոսեանց . . . . | ,, |
| 194 | 4 | Ղազար Մելիք Շաղումեանց . . . | ,, |



| | | | |
|---|---|---|---|
| 195 | 5 | Յակովբջան Սայեադեան Ատոմեանց . . | 1 |
| 196 | 6 | Յովհաննէս Տէր Իսահակեան Շահնազարեանց. | ,, |
| 197 | 7 | Սարգիս Փիլոյեանց Ոստայէն . . . . | ,, |
| 198 | 8 | Յովհաննէս Տէր Մկրտչեան Անտօնեանց Երեւանցի. | ,, |

### ՆՈՐԳ (գաւառաքաղաքն Երեւանայ)։

| | | | |
|---|---|---|---|
| 199 | 1 | Աղէքսանդր Տէր Սարգիսեանց. . . . | ,, |
| 200 | 2 | Յարութիւն Եղիեանց . . . . . | ,, |
| 201 | 3 | Յովհաննէս Սաղաթէլեանց Ապարանցի . . | ,, |
| 202 | 4 | Յովհաննէս Մ. Տէր Յովնաթեանց. . . | ,, |
| 203 | 5 | Շողակաթ տիկ. Պօղոսեան Տէր Սարգսեանց . | ,, |
| 204 | 6 | Սուսամբար տիկ. Մ. Տէր Յովհաննէսեանց . | ,, |

### ՇԽՄԱՀՄՈՒՏ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 205 | 1 | Մկրտիչ քահ. Իսահակեանց . . . . | ,, |
| 206 | 2 | Պետրոս սարկ. Մելիք Պետրոսեանց. . . | ,, |
| 207 | 3 | Աղէքսանդր Կունդուլեանց . . . . | ,, |
| 208 | 4 | Ծխական Դպրոցն տեղւոյն . . . . | ,, |
| 209 | 5 | Նիկողայոս Մ. Հայրապետեանց . . . | ,, |
| 210 | 6 | Ռոստոմ Խալայեան, Թամբուլէ Տանուտէր . | ,, |

### ՁԻԴԱՄԼՈՒ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 211 | 1 | Յովհաննէս Մելքոնեան Սարկաւագ. . . | ,, |

### ՌԻՆԴ, Գիւղ։

| | | | |
|---|---|---|---|
| 212 | 1 | Գրիգոր քահանայ Սիմէօնեանց. . . . | ,, |

### ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։

| | | | |
|---|---|---|---|
| 213 | 1 | Յովհաննէս քահանայ Պօղոսեանց . . . | 1 |
| 214 | 2 | Գէորգ Վարդանեան Շիրմանեանց . . . | 2 |
| 215 | 3 | Կ. Եղիեանց . . . . . . | 1 |
| 216 | 4 | Մ. Ս. Սանասարեանց . . . . . | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 217 | 5 | Յովսէփ Խըմիրեանց . . . . . | 12 |
| 218 | 6 | Սարգիս Յովհաննիսեան Շահնազարեանց . | 2 |
| 219 | 7 | Ստեփաննոս Գրիգորեանց . . . . | 1 |
| 220 | 8 | Փ. Վարդանեանց . . . . | ,, |
| | | **ՍՈՒՐԲ ԽԱՉ, Դարալագեազի։** | |
| 221 | 1 | Ստեփաննոս Վարդապետ . . . . | ,, |
| | | **ՎԱՐԴԵՆԻՍ։** | |
| 222 | 1 | Մկրտիչ Տէր Մովսէսեան Տէր Պետրոսեանց . | ,, |
| | | **ՏՓԽԻՍ։** | |
| 223 | 1 | Յովսէփ Վարդապետ Խալաթեանց . . . | 2 |
| 224 | 2 | Աննա Դորղանեանց . . . . . | 2 |
| 225 | 3 | Եկատարինէ Թայիրեանց . . . . | 1 |
| 226 | 4 | Հռիփսիմէ Թայիրեանց . . . . . | 2 |
| 227 | 5 | Մարիամ Փուզինեանց . . . . . | 1 |
| 228 | 6 | Մարիամ Դորղանեանց. . . . . | ,, |
| 229 | 7 | Նունիայ Էֆենդեանց . . . . . | 6 |
| 230 | 8 | Նունիայ Տէր Գրիգորեանց . . . . | 2 |
| 231 | 9 | Սողոմոն Դորղանեանց . . . . | 2 |
| 232 | 10 | Սոփիայ Երեւանցեանց . . . . | 1 |
| 233 | 11 | Գալինայ Սահաթսազեանց . . . . | 4 |
| | | **ՓԱՇԱԼՈՒ, Գիւղ։** | |
| 234 | 1 | Աւագ քահ. Տէր Մինասեանց՝ Գործակալ . | 1 |
| 235 | 2 | Զաքար Դաւթեան . . . . . | ,, |
| 246 | 3 | Զաքար Վարդանեանց. . . . . | ,, |
| | | **ՓՕՌ, Գիւղ։** | |
| 237 | 1 | Պօղոս քահ. Տէր Ստեփաննոսեանց. . . | ,, |
| 238 | 2 | Աւետ Միրազեղեանց . . . . | ,, |
| 239 | 3 | Բադալ Մահտեսի Սիմէօնեանց . . . | ,, |
| 240 | 4 | Սահակ Թավրիզեանց . . . . | ,, |



| | | | |
|---|---|---|---|
| | | **ՔԷՇԻՇՔԷԵԱՆԴ, Գիւղ։** | |
| 241 | 1 | Բէգլար Յարութիւնեան՝ Տանուտէր . . . | ,, |
| | | **ՔԱՆԱՔԵՌ, Գիւղ։** | |
| 242 | 1 | Արտաշէս Տէր Ներսէսեան . . . . | 1 |
| 243 | 2 | Մկրտիչ Մուրատեան՝ Տանուտէր . . . | ,, |
| 244 | 3 | Յակոբ Ղարիբեանց . . . . . | ,, |
| 245 | 4 | Յովսէփ Տէր Ստեփաննոսեանց . . . | ,, |
| 246 | 5 | Սահակ Տէր Պետրոսեանց . . . . | ,, |
| 247 | 6 | Ստեփան Նայիբեանց . . . . . | ,, |
| 248 | 7 | Մկրտիչ Մելիքսեդեան Սանթրոսեանց . . | ,, |
| | | **ՕՇԱԿԱՆ, Գիւղ։** | |
| 249 | 1 | Աղէքսանդր Ահարոնեան Տէր Եղիազարեանց . | ,, |
| | | ՏՊԱՐԱՆԻՍ ԳՈՐԾԱՎԱՐՔ *) | |
| | | **ԳՐԱՇԱՐՔ** | |
| 250 | 1 | Մարգար Տէր Միքայէլեան՝ Նոր—Բայազէտ . | 1 |
| 251 | 2 | Գէորգ Միլիտոսեան՝ Վաղարշապատ . . | ,, |
| 252 | 3 | Մկրտիչ Պլուզեանց՝ ,, . . . | ,, |
| | | **ՏՊԱԳՐԻՉՔ** | |
| 253 | 4 | Խաչատուր Կարապետեան՝ Խարբերդցի . . | ,, |
| 254 | 5 | Սիսակ Խաչատրեան՝ Երեւանցի . . . | ,, |

**ՎՐԻՊԱԿՔ**

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 17 | 4 | Սեննեքերիմը. | Սենեքերիմը, |
| ,, | 6 | հանդէպը: | հանդէպը: |
| 24 | 11 | անշուտ | անշուշտ: |
| 109 | 6, թև 33,18 | 3 | 2 |
| 110 | 10 ,, 56,21 | 2 | 1 |
| 110 | 11 ,, 57,22 | 1 | 2 |

(*) Նուէրք Աշխատասիրողից ։

ԱՆՈՒԱՆՔ ՎԵՀ

ԱՆՁԱՆՑ, ՈՐՔ ՊԱՐԱՊԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲՔ։

Ի ՓԱՐԻԶ

## Տ. ԵԴՈՒԱՐԴ ԴԻՒԼՈՐԻԷ,

Ուսուցչապետ և հռետոր՝

ՀԱՅԿԱԶԵԱՆՍ ԼԵԶՈՒԻ

Համալսարանին Փարիզու։

Ի ՎԻԵՆՆԱ

## Տ. ՓՐԻԴՐԻԽ ՄԻՒԼԼԷՐ,

Ուսուցչապետ և հռետոր՝

ՀԱՅԿԱԶԵԱՆՍ ԼԵԶՈՒԻ

Համալսարանին Վիեննայու։

Ի ԲԵԼԳԻԱՑ

## Տ. ՖԷԼԻՔՍ ՆԷՕՖ,

Ուսուցչապետ և հռետոր՝

ՀԱՅԿԱԶԵԱՆՍ ԼԵԶՈՒԻ

Համալսարանին Լուվէնիայի։

Ի ԷԼԶԱՍ

## Տ. ՀԷՅՆՐԻԽ ՀԻՒԲՇՏՄԱՆ

Ուսուցչապետ և հռետոր՝

ՀԱՅԿԱԶԵԱՆՍ ԼԵԶՈՒԻ

Համալսարանին Ստրասբուրգայ։

Զ. Դ. մի օրինակ՝ սոյն Ուղեւորութիւնից

Խորին ակնածութեամբ նուիրէ՝ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ։

ԱՐԴԷՆ ԳԱՏՐԱՍՏ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ։

# ՕՐԱՑՈՅՑ

# 1879

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

ԵՒ ՏՈՄԱՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ. . . . ՌՅԻԸ—1328։

Համդերձ Գուշակութեամբք Օդոց։

Յունաց, Ռուսաց և Լատինացւոց տօներով.

Օրհ. Հրդ. Մէ. և Հմբ. պատուածոյ հարգաւ.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ։

Սկզբունքն լինելու է Պօտէնէր.

ՎԵՐՋՈՒՄՆ

# ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ

ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ 1879 Թ։

Բոլոր այս թերթերը՝

Լինելու է և Փոքրիկ ՕՐԱՑՈՅՑ 1879 Ը։

100-ներով գնողներին զեղչում կլինի.

## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔԸ։

1 Նոր Տաղարան կամ Ազգային Երգարան 1866 . . . . . ,, 30
2 Դաւիթ Բէգ ընտիր մատենագրութիւն Սիւնեաց 1871 . . . . ,, 60
3 Ստորագրութիւն Հռչակաւոր մեծի ուխտին Այրի վանաց Ս. Գեղարդայ. հանդերձ պատմական ծանօթութեամբք 1873 1 ,,
4 Ծաղիկ Ընտանեաց Ա. տարի 1876 . ,, 10
5 ,, ,, Բ. տ. 1877 . ,, 15
6 ,, ,, Գ. տ. 1878 . ,, 25
7 Սենեքերիմ Թագաւոր Հայոց Վասպուրականի ողբերգութիւն 1878 . . 1 ,,
8 Օրացոյց վասն 1876, 1877 և 1878 թ.

## ՊԱՏԿԵՐՆԵՐ.

ա. Ս. Գեղարդ 1873 . . . . 5 կ.
բ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ 1876 . . 5 կ.
գ. Ս. Թադէոս Առաքեալ 1877 . . 5 կ.
դ. Ս. Բարթուղիմէոս Առաքեալ 1878 . 5 կ.

ԳԻՆՆ Է ՄԷԿ ՌՈՒԲԼԻ ԱՐԾ։

Յանկացողք՝ կարող են գնել հետեւեալ հասցէիւ՝

*Въ г. Эривань*

*Абгару Степановичу* ГУЛАМИРЯНЦЪ.

124
24631
0014458
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0014458